

ԷԶՄԻԱԾԻՆ



1963

ՌՆԺԲ

Ի ՏԱՐԻ

Մարտ

ԷԶՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ
Ս. ԷԶՄԻԱԾՆԻ

Գ.

1963



ՀՐԱՄԱՆԱԻ


Տ. Տ. ՎԱՋԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐՔԱԶՆԱԳՈՐՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ— Հայ եկեղեցիներն առհասարակ եկեղեցիների համալսարանային խորհրդին	3
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և եկեղեցիների համալսարանային խորհրդի բնական հանուր բառաուղար Ու. Ա. Վիսսեհ ղ' Հոգևոր միջև փոխանակված հեղափոխություններ	7
ՄԱՅՐԱՍԻՍԻՍ	8
Հ. Ք. ՍԻՐՈՒՆԻ— Պոլսի և իր դերը	10
ՎԱՀԱՆ ՎԱՐԳԱՊԵՏ ՏԵՐՑԱՆ— Օշականի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցին	22
Վաղարշապատ—Էջմիածին	30
Հ. ԳԱՎԹՅԱՆ— Մի էջ հայ հին աղագրության պատմությունից	35
Հ. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴԻՍԱՆ— Վասպուրականի ռազմական տարածքի մի համար	43
Հ. ԵՂԻԱՋԱՐՑԱՆ— Կողմից հեղափոխության ժամանակի պահպանները	50
ԱՐԱ ՄԱՐԿՈՍ— Պատմագրության հին հայկական գաղափար և եկեղեցին	59



**ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ՝
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՈ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала „Эчмиадзин“,
Rédaction de la revue „Etchmiadzine“, Etchmiadzine, Arménie, URSS.

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1963 թ.



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԱՆԴԱՄ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ուղղած փետրվար 19 թվակիր պաշտոնական նամակում, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Ու. Ա. Վիսսեր Դ' Հուֆտը ուրախությամբ հաղորդում էր, որ «Եկեղեցիների համաշխարհային խորհրդում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մուտքի համար սահմանադրական պայմանները լրիվ կերպով կատարվել են», որով «Ձեր Եկեղեցին ընտրված է որպես անդամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Իր 7 մարտի պատասխան նամակում գոհունակությամբ գրում էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղարին. «Մխիթարական է Մեզի համար տեղեկանալ այս մասին և աղոթել առ Տեր, որպեսզի Իր Ավետարանի լույսով առաջնորդե մեր քայլերը ի խնդիր աստվածային պատվիրաններու հաստատման երկրի վրա: Երանի թե մենք բոլորս կարենանք Տիրոջ ձեռքին գործիքները դառնալ քրիստոնեական մեծ իդեալներու կենսագործման համար մարգկային աշխարհի մեջ»:

Ինչպես հայտնի է, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը 1962 թվականի ապրիլ 26 թվակիր նամակով դիմել էր Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կենտրոնին, փափագ հայտնելով Հայ Եկեղեցու անդամակցության

համար. «Հայ Եկեղեցին և անոր կեդրոնը հանդիսացող Մայր Աթոռ Ս. Էջմիածինը ի սկզբանե հոգեկան մխիթարությամբ են հետևած Ձեր ստեղծած էկումենիկ շարժումին և ցարդ Ձեր ի գործ դրած աստվածաման ճիզերուն, համրապնդումն քրիստոնեական եղբայրության և գործակցության աշխարհի եկեղեցիներու միջև՝ ճշմարիտ ավետարանական ոգիով»:

Պաշտոնական սույն գրության հետ, Վեհափառ Հայրապետը ներկայացրել էր նաև մի հուշագիր Հայ Եկեղեցու առաքելականության, նվիրապետության և արդի վիճակի մասին:

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ստեղծումը քրիստոնեական Եկեղեցու պատմության նորագույն շրջանի նշանակալից երևույթներից է, որպես կարևոր քայլ քրիստոնեական եկեղեցիների սիրո և միության նոր փորձերի:

«Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կամ էկումենիկ շարժումը նոր երևույթ մըն է,— գրում է Վեհափառ Հայրապետը 1962 թվականի Ապգային-եկեղեցական ժողովում կարդացած Իր պեկուցագրում,— որ կհատկանշե մեր պատմական ժամանակաշրջանի կարևոր մեկ երեսը: Մենք կհավատանք, թե այս շարժումով հառաջ եկած կազմակերպությունը ճշմարիտ կերպով կհամապատասխանե Հայ Եկեղեցվո՝ քրիստոնեական եկեղեցիներու միջև եղբայրության և միության ըմբռնումին»:

Արդարև մեր օրերին պատմության գիրկն է անցել եկեղեցիների մեկուսացած, կղզիացած ապրելու ժամանակը: Եվ նույնպես, պատմության գիրկը անցած պետք է նկատել եկեղեցիների միջև անհանդուրժող ոգին և մեկը մյուսի վրա իշխելու ձգտումը, «միակ ճշմարտությունը» դավանելու հավաքվեաբանական հավակնությունը:

Գոհունակությամբ պետք է արձանագրել, որ այժմ քրիստոնյա աշխարհը մեծ հետաքրքրություն է հանդես բերում եկեղեցիների միության գաղափարի շուրջ:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ևս, վերջին հիսնամյակի ընթացքում, լայն հետաքրքրություն և հաճախ սրտագին մասնակցություն է բերել միջեկեղեցական հանդիպումներին, որոնք մեծ իրադարձություններ են մեր ժամանակներում եկեղեցիների կյանքում, միություն հաստատելու ճանապարհի վրա:

Արդի պայմաններում, միջեկեղեցական հանդիպումներն ու շփումները անհրաժեշտ են այն իմաստով, որ նախ դրանք կփարատեն եկեղեցիների միջև գոյություն ունեցող նախապաշարմունքները, այնուհետև կցրեն փոխադարձ կասկածամտությունները և կստեղծեն եկեղեցիների միջև իրարհասկացողության, վստահության, հարգանքի և սիրո մթնոլորտ:

Այս մտածումների լուսի տակ, մեր Եկեղեցին մասնակցել է 1927 թվականին Լոզանի, 1937 թվականին Էդինբուրգի, 1952 թվականին Լուդի Կարգի և հավատի ժողովներին, որոնք հանդիսանում են հուսալի սկզբնավորություններ եկեղեցական ապագա ցանկալի միության:

Այս ճանապարհի վրա, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ստեղծումը մի գոտեպնդիչ երևույթ է:

Եկեղեցիների սույն կազմակերպությունը հիմնվել է 1948 թվականին, օգոստոսի 30-ին, Ամստերդամում գումարված իր առաջին ժողովում, ուր և ընդունվել են կազմակերպության կանոնադրությունը և սկզբունքները:

1954 թվականին Էվենստոնում (ԱՄՆ) գումարվում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երկրորդ համագումարը: 1961 թվականի նոյեմբերին, Նոր-Դելիիում, գումարվում է երրորդ համագումարը, ուր ընդունվում է հետևյալ դավանաբանական բանաձևը, որպես կազմակերպության հիմունք. «Եկեղեցիների հա-

մաշխարհային խորհուրդը եկեղեցիների մի եկեղեցություն է, որը դավանում է մեր Տերը Հիսուս Քրիստոս որպես Աստված և Փրկիչ ըստ Ս. Գրքի, և աշխատում է միասին իրագործել իր հասարակաց կոչումը, ի փառս Աստուծո՝ Հոր, Որդւյն և Հոգւովն Սրբոյ»:

Վեհափառ Հայրապետը, ապրիլ 26 թվակիր Եկեղեցիների համաշխարհային խորհրդին գրած իր վերոհիշյալ գրության մեջ նշում էր, որ «Մենք համոզված ենք, թե Ձեր կազմակերպության հիմնական սկզբունքները և գործելու ոգին իրոք որ համապատասխան են Քրիստոնեական Եկեղեցվո առաջադրանքներուն, առանց որևէ չափով խախտելու պատմականորեն ծնունդ առած ու վարձացած բոլոր եկեղեցիներու ինքնուրույնությունը և ինքնավարությունը»:

Հայ Եկեղեցու սրտագին իղձն է եղել և է, պահելով հանդերձ իր ազգային ավանդությունները և աստվածաբանական մտածելակերպը, իրականացած տեսնել քրիստոնեական եկեղեցիների եղբայրությունն ու միությունը:

Ինչպես անցյալում, այժմ էլ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ողջունում է այն բարի ջանքերն ու միջեկեղեցական հանդիպումները, որոնք նպատակն է ստեղծել վստահելի հող, ապագա եկեղեցական միության համար:

Հատկապես վերջին տարիների և մանավանդ Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի օրոք Հայ Եկեղեցին, քրիստոնեական սիրո և հարգանքի ըմբռնումով, շատ սիրալիր և բարեկամական հարաբերություններ է մշակում առհասարակ օրթոդոքս եկեղեցիների, Ռուս Պրովոսլավ Եկեղեցու, Վրաց Եկեղեցու, Անգլիկան Եկեղեցու և Եկեղեցիների համաշխարհային խորհրդի և ԱՄՆ-ի Եկեղեցիների ազգային խորհրդի հետ:

«Մենք չենք հավատար Եկեղեցիներու միության իրականացման,— գրում է Վեհափառ Հայրապետը 1962 թվականի պատկական իր քարոզի մեջ,— քրիստոնեական որոշ Աթոռներու իշխանության տարածումով այլ եկեղեցիներու վրա, ինչ ձևով ալ ըլլա այդ»:

Իսկ վերջին Ազգային-Եկեղեցական ժողովում կարդացած իր պեկուցագրում Վեհափառ Հայրապետն ասաց.

«Մենք կդավանինք քրիստոնյա եկեղեցիներու միությունը՝ Ս. Ավետարանը ընդունելով իբրև

հաստատուն վեժ և Զրիստոնեական Ընդհանուր Եկեղեցին՝ իբրև կենդանի մարմին, որուն Գլուխը կ'գտնվի Ինքը, մեր Տերը և Փրկիչը Հիսուս: Բոլոր քրիստոնեական եկեղեցիները նույն մարմնույն անդամներն են:

Զրիստոնեությունը, իբրև աստվածային պատգամ և նախախնամության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն այդ աստվածային տնօրինության իրագործումը երկրի վրա, զգացած է և կզգենու արտաքին տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծության և Աստուծո խոսքը ընկալելու և ապրելու կերպին, և համաձայն պատմական պարագաներուն և ավանդություններուն, որոնց մեջ ծնունդ են առած ու պարզացած եկեղեցիները:

Մեր եկեղեցվո ծագման, կազմավորման և զարգացման պատմության և ավանդություններու, ինչպես և մեր ժողովուրդին հատուկ կրոնական ապրումներու կերպերուն մեջ, Մենք կ'գտնենք մեր Ազգային Եկեղեցվո քրիստոնեության հարապատությունը և վավերականությունը:

Հետևաբար, եկեղեցիներու միություն ըսելով, մենք միշտ պիտի հասկնանք սիրո հարաբերություններու մշակում և եղբայրական գործակցություն եկեղեցիներու միջև, ամեն մեկը պահելով իր դավանական մտածելակերպը, իր ավանդությունները և ծեսերը և իր ինքնագլուխ, անկախ ղեկավարությունը:

Եկեղեցական միության հարցում այն է եղել և է՝ Հայ Եկեղեցու դիրքը Ենորհալու օրերից մինչև այսօր: Ենորհալին, եկեղեցական միության այդ լուսապայծառ դեմքը, որը հանգամանորեն շարադրել է Հայ Եկեղեցու դիրքը և սկզբունքը եկեղեցական միության հարցում, պահանջում էր, որ սեղանի շուրջ նստեն եկեղեցիները «հաւասար ընդ հաւասարի, և ոչ որպէս տէր ընդ ծառայի... յաղագս աստուածային սիրոյն հաղորդութեան և ոչ իբր ի մուտրութենէ դառնալով ի ճշմարտութիւն»:

Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, որ այնքան ձեռնհասորեն զբաղվել է եկեղեցիների միության հարցով, շատ ճիշտ և սպառիչ կերպով գրում է. «Հայոց Եկեղեցին միաբանությունը հասկցավ միշտ բառին ճիշտ և սեղմ նշանակությամբ: Նա միաբանություն ըսելով ուզեց եկեղեցիներու միջև ունենալ հոգևորական հաղոր-

դակցություն, փոխադարձ հարաբերություն և իրարու դիրքին հանդեպ հարգանք, յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ազատություն և ամենուն վրա տիրապետող քրիստոնեական սուրբ սերը: Նա երբեք չուզեց հանդուրծել, որ միաբանությունը տիրապետության փոխվի և մարդոտության վերածվի»:

Վազգեն Ա Հայրապետը, այս մտածումների լույսի տակ, երբ 1956, 1960 և 1961 թվականներին, հովվապետական այցելությամբ գտնվում էր Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, ԱՄՆ-ում, Թուրքիայում և ջփումներ էր ունենում միջեկեղեցական կրոնական պետերի հետ, միության այդ ոգին ուներ իբրև առաջնորդ իր հանդիպումների և տեսակցությունների ժամանակ:

1956 թվականի մայիսին, երբ Վեհափառ Հայրապետը գտնվում էր Լոնդոնում, Նիկիական միության ակումբում ի պատիվ Իրեն կազմակերպված պաշտոնական ընդունելության ժամանակ, անդրադառնալով եկեղեցական միության հարցին, ասում էր. «Զրիստոնեական եկեղեցիների եղբայրական մերձեցումով և գործակցությամբ, խորհում ենք, թե կորացրած կլինենք Զրիստոսի Եկեղեցին»:

1961 թվականի հունիսին, երբ Ամենայն Հայոց Հայրապետը գտնվում էր Ստամբուլում, Ֆեների Հունաց Պատրիարքարանում, Հունաց Տիեզերական Պատրիարք Նորին Սրբություն Աթենագորասը, ողջունելով Ամենայն Հայոց Հայրապետին, ասում է. «Ձերդ Սրբությանը ճանաչում ենք Ձեր աշխատությունների և զգացմունքների և մանավանդ քրիստոնյա եկեղեցիների համագործակցության և միության հարցում Ձեր ունեցած կարծիքների մեջ: Այս բոլորի համար Ձեզ սրտանց ջնորհավորում եմ: Մեր երկու եկեղեցիները նույն ճանապարհով են ընթացել դարերի ընթացքում: Եթե երբեմն պատահել են մշուշոտ պահեր, դրանք արդեն պատմության են անցել և այսօր որևէ նշանակություն չեն ներկայացնում»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը նույնպիսի եղբայրական, քրիստոնեական հարաբերությունների մեջ է այլ եկեղեցիների պետերի հետ:

Սակայն դեռևս եկեղեցիների միության ճանապարհի վրա կան բազմաթիվ խոչընդոտներ, արգելքներ:

Ինչպես անցյալում, այսօր էլ Հռոմի Եկեղեցին յուրահատուկ ծնով է հասկանում եկեղեցական միության հարցը:

Անցյալում, Հայ և Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերությունների մեջ եղել են թուրքմացություններ և հաճախ պայքարներ: Հայ Եկեղեցին ստիպված դիմել է ինքնապաշտպանության, Կաթոլիկ Եկեղեցու կողմից իր դեմ կատարված այդ հարձակումների դեմ, որոնք երբեմն նույնիսկ վայելում էին կաթոլիկ պետությունների աջակցությունը, ինչպես Կիլիկյան շրջանում, այնուհետև Լեհաստանում, Պոլսում, ԺԸ և ԺԹ դարերում:

Հաճախ Կաթոլիկ Եկեղեցու հարձակումների պոհն է դարձել Զրիստոսի փոքրիկ հոտը՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Այս բոլորը սակայն անցյալի տխուր հուշ է և Հայ Եկեղեցին փակված է համարում պատմության այդ տխուր էջը և առանց որևէ նախապաշարման և հին հիշողությունների դառնության, հաշտ և սիրալիր, քրիստոնեական եղբայրական հոգով է մոտենում բոլոր նրանց, որոնք Զրիստոսի անունով են գործում, հակառակ այն տխուր փաստի, որ այսօր էլ, դժբախտաբար, Կաթոլիկ Եկեղեցու շրջանակից ներս, կան եկեղեցիների միությունը խանգարող, հայ և Կաթոլիկ ժողովուրդները իրարու դեմ գրգռող մարդիկ, որոնք աշխատում են ավելորդ բյուզանդական վեճեր հարուցել, թունավորել հայ կյանքը և երկու եկեղեցիների հարաբերությունները թշնամացնել, ժամանակավրեպ մտայնություններով և կեղծ փաստարկումներով, ինչպիսին էր վերջերս Հ. Սահակ Կոզյանի ծանոթ վնասաբեր գիրքը:

Անցյալում նմանօրինակ նախապաշարումներ, անհասկացողություններ, քրիստոնեական սիրո և հանդուրժող ոգու պակասը թանձր վարագույրներ են քաշել քրիստոնեական եկեղեցիների

միջև, արգելք են հանդիսացել համագործակցության և միության:

Այժմ ժամանակն է որ քրիստոնյա ողջ աշխարհը, համաքրիստոնեական իմաստով, բոլորվի նույն սեղանի շուրջ գործնական նպատակներով, հիմնաքարը դնելու համար ապագա եկեղեցական գործակցության:

Թող յուրաքանչյուր եկեղեցի հավատարիմ մնա իր դավանական, ծիսական, ազգային ավանդություններին, աստվածաբանական և կանոնական մտածողության իր կերպին, բայց միանա Զրիստոսի սիրով գործնական նշանակություն ունեցող հարցերում:

Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, հավատում է, որ Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը կոչվել է իրագործելու այս վեճ նպատակը, մեր օրերին:

«Մենք այն համապումն ունինք նաև, թե Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդը, իր ապագա գործունեության ընթացքին, հետզհետե ավելի պիտի ձգտի իր գործունեությունը կապել մարդկության ներկա կյանքի մեծ հարցերու հետ. իր բարերար նպաստը բերելու ավնիվ առաջադրությամբ, ի կենսագործումն սիրո, եղբայրության և խաղաղության աստվածառաջ պատգամներուն», — գրում է Վեհափառ Հայրապետը իր վերոհիշյալ ապրիլ 26 թվակիր պաշտոնական նամակում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, իր գլուխը ունենալով Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, իր աղոթքներն ու ջանքերը միացնում է բոլոր այն ավնիվ ջանքերին ու ձեռնարկներին, որոնց նպատակն է քրիստոնեական եղբայրություն և սեր հաստատել, և սրտեռանդն աղոթում է ամեն օր Զրիստոնեական Եկեղեցու ճշմարիտ միության համար:

«Աղաչեսցուք չամենակալն Աստուած վասն միայնոյ, Սուրբ, Կաթողիկե և Առաքելական Եկեղեցւոյ»:





Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Զ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՐՏՈՒՂԱՐ ՈՒ. Ա. ՎԻՍՍԵՐ Դ՝ ՀՈՒՖՏԻ
ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ

ՀԱՅՐ ՎԻՍՍԵՐ Դ՝ ՀՈՒՖՏ

ԺԸՆԵՎ

Ուրախ սրտով ստացանք Ձեր 19 փետրվար թվակիր պաշտոնական հաղորդումը, որով կհայտնեք Մեզի, թե սահմանադրական պայմանները լրիվ կերպով ավարտած ըլլալով, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ընտրված է անդամ Եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին:

Մխիթարական է Մեզի համար տեղեկանալ այս մասին և աղոթել առ Տեր, որպեսզի Իր Ավետարանի լույսով առաջնորդե մեր քաղերը ի խնդիր աստվածային պատվիրաններու հաստատման երկրի վրա: Երանի թե մենք բոլորս կարենանք Տիրոջ ձեռքին գործիքները դառնալ քրիստոնեական մեծ իդեալներու կենսագործման համար մարդկային աշխարհի մեջ:

Սիրո ողջունիվ և օրհնությամբ՝

ՎԱՋԳԵՆ Ա

ԷԶՄԻԱԾԻՆ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ

7 մարտ 1963

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՋԳԵՆ Ա,
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐԸ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ
ԵԿԵՂԵՑՈՒ

ԷԶՄԻԱԾԻՆ

Ձերդ Սրբություն.

Մեծ հաճույքն ունեմ հաղորդելու Ձերդ Սրբության, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մուտքի համար սահմանադրական պայմանները լրիվ կերպով կատարվել են: Հետևաբար պարտականությունն ունեմ այժմ հայտնելու Ձեզի, որ Ձեր Եկեղեցին ընտրված է որպես անդամ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի:

Թույլ տվեք ինձ հույս հայտնելու, որ Եկեղեցիների համաշխարհային խորհրդի կյանքում Ձեր Եկեղեցու մասնակցությունը կարող է բերել մեծ օրհնություն Ձեր Եկեղեցուն և Համաշխարհային խորհրդին որպես մի ամբողջություն:

Ձերդ հավատարմորեն՝

ՈՒ. Ա. ՎԻՍՍԵՐ Դ՝ ՀՈՒՖՏ

ԺԸՆԵՎ

Եկեղեցիների համաշխարհային խորհրդի
ընդհանուր քարտուղար

19 փետրվարի 1963 թ.



ՄԱՅՐ ԱԹՈՒՌՈՒՄ

Մարտի 2-ին, շաբաթ, հրեկոյան ժամը 7-ին, Հոգեւոր Ճեմարանի հանդիսասրահում, Մայր Աթոռի միաբանության և ուսանողության համար խոսեց Վեհափառ Հայրապետը, երանելի Ֆրանցիսկոսի սուրբ կյանքի մասին:

Վերջում հոգելից այս դասախոսության համար վեհափառ Հայրապետին խորին շնորհակալություն հայտնեց Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն արքեպիսկոպոս Աբրահամյանը:

Մարտի 3-ին, Արամբսման կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մուշեղ վարդապետ Պետիկյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Նդիալանը:

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 3-ին, Արամբսման կիրակին, Երևանի Ս. Զորավոր եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսիս վարդապետ Պոլապալյանը ռեւորհա և մեղ Տէր ճաշակել զթաղցրութիւն քոց պատուիրանացս բնաբանով:

Մարտի 9-ին, շաբաթ, հրեկոյան ժամը 7-ին, Հոգեւոր Ճեմարանի հանդիսասրահում, միաբանության և ուսանողության համար վեհափառ Հայրապետը խոսեց հոգեւոր առաքինության մասին և լսվեց մեծ հետաքրքրությամբ:

Մարտի 10-ին, Անառակի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Նդիալանը:

Քարոզեց վեհափառ Հայրապետը Անառակ որդու առակի մասին:

Մարտի 16-ին, շաբաթ, հրեկոյան ժամը 7-ին, Հոգեւոր Ճեմարանի հանդիսասրահում, տեղի ունեցավ ուսանողության ուժերով կազմակերպված գրական-գեղարվեստական երեկո: Դ լսարանի ուսանող ուրարակիր Հրայր Գարավերդյանը ընթերցեց իր մեկ քարոզը՝ «Պայծառակերպությունը»:

Երեկոյին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Մարտի 17-ին, Տեառնի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը:

«Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը քարոզեց Տնտեսական առակի մասին:

Մարտի 22-ին, ուրբաթ, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեցին Մոսկվայում հավատարմագրված օտար դիվանագիտական մարմինների ներկայացուցիչները դեսպանների ղլխավորությամբ: Հյուրերը եղան Մայր Տաճարում: Այնուհետև Ամենայն Հայոց Հայրապետը նոր վեհարահում ընդունեց դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներին:

Մարտի 24-ին, Դատավարի կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը: Փարոզեց հոգեշնորհ Տ. Արսեն արքեպ Քերթեքյանը «Պարտ է յամենայն ժամ կալ յաղօթս» քնարանով:

Նույն օրը Երևանի Ս. Զորավոր եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը «Տէր, ուսո մեզ կալ յաղօթս» քնարանով:

Նույն օրը Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Դատաւոր արդարութեան հաստատեցեր զմիտս մեր» քնարանով:

Մարտի 30-ին, շաբաթ, «Տօն է Սրբոյն Գրիգորի մերոյ խաւարոյն սուկալի շարշարանացն և մտին ի Վիրապն»: Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Նարեկ արքեպ Շաքարյանը: Փարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը «Յորմէ բխեաց բաժակն ուրախարար տրտմեցելոյ ազիկս» շարականի խոսքերը քնարան ունենալով:

Նույն օրը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Պալյանը «Յնծա ալսօր, ցնծա և զուարճացի բկեղեցի» քնարանով:

Մարտի 30-ին, շաբաթ, էջմիածին քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցում, գերաշնորհ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարյանը քահանա ձեռնադրեց Հոգևոր Ճեմարանի անցյալ տարվա շրջանավարտներից Արշակ սարկավագ Տերտեքյանին, վերանվանելով նրան Տ. Գրիգոր քահանա:

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը:

Նորընծա Տ. Գրիգոր քահանան ծնվել է 1936 թվականին Պարսկաստանում, ներգաղ-

թել է 1947 թվականին և Հոգևոր Ճեմարան է ընդունվել 1956 թվականին:

Մարտի 30-ին, շաբաթ, Երեկոյան ժամը 6-ին, Հոգևոր Ճեմարանի դահլիճում, դասախոսեց Արարատյան թեմի փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանը էջմիածնի դպրոցի մասին:

Դասախոսության ներկա էր Վհափառ Հայրապետը:

Մարտի 31-ին, Գալստյան կիրակին, Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Արսեն արքեպ Քերթեքյանը:

Պատարագից հետո, Վհափառ Հայրապետի նախագահությամբ, քառասունքի հոգեհանգստյան արարողություն տեղի ունեցավ Տանն Կիլիկիո Կաթողիկոսության հանգուցյալ երանաշնորհ Տ. Զարեհ Աթոռակալի հոգու հանգստյան համար: Հոգևոր Ճեմարանի վերատեսուչ գերաշնորհ Տ. Հայկազուն սրբազանը խոսեց հանգուցյալ Սրբազան Աթոռակալի մասին:

Սուրբ պատարագին և հոգեհանգստյան արարողության ներկա էին երջանկահիշատակ հանգուցյալի հարազատները, որոնք հետ սուրբ պատարագի ընդունվեցին Վհափառ Հայրապետի կողմից:

Մարտի 31-ին, Գալստյան կիրակին, Երեկոյան ժամը 6-ին, Զորավոր եկեղեցում, քարոզեց հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Եղիայանը, քնարան ունենալով «Որ զխորհուրդ քո գալըստեանդ յառաջագոյն գուշակեցեր» շարականի խոսքերը:

Նույն օրը, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցում քարոզեց հոգեշնորհ Տ. Ներսես վարդապետ Պողապալյանը «Երուսաղէմ, Երուսաղէմ, որ կոտորէր զմարգարէսն և քարկոծ առնէր զառաքեալն առ նա, քանիցս անգամ կամեցայ ժողովել զմանկունս քո» քնարանով:



ՊՈԼԻՍ ԵՎ ԻՐ ԴԵՐԸ

Բ

ՖԱԹԻՆՆ ԳՈԼՍՈՒ ՄԵՃ

1. ՄԱՀԻԿԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԴՈՆՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՎ

Օսմանյան իշխանություններում մեծագույնը Պոլսո գրավումն էր:

Հորմահան իսլամը պատմության թատերաբեմը մտավ, աշխարհը իշխանություն իր սանձարձակ թափին մեջ քանդեց փորձած էր Վոսպորի ափերում հասնել: 665 թվականին մինչև 870, երկու դարու ընթացքին մոտ տասը անգամ Բյուզանդիոնը պաշարեցին արաբ խալիֆաները:

Պոլիսը Օսմանյան սուլթաններու ևս սեփականեց եղավ: Բայազիդ չորրորդ պաշարեց զայն՝ 1391-ին, 1395-ին, 1396-ին և 1400-ին: Լենգթերթուր սակայն ընդհատեց անոր փորձերը: 1412-ին Բյուզանդիոնը պաշարելու պիտի ձեռնարկէր նաև Մուսա Չելեբին, 1422-ին՝ Սուլթան Մուրադ Բ-ը:

Ամբողջ երեսուն տարի տարբեր հոգեր կլանեցին թուրքիան և ուղացավ վերջին գործը:

1453-ին էր, որ սուլթան Մեհմեդ Բ պիտի խլեր Բյուզանդիոնը տիրող ձեռքին:

2. ՀԱՅԸ ՄԱՀԻԿԻՆ ՆԵՐՔԵՎ

Օսմանյան պետությունը առաջին վայրկյանին քրիստոնյաներու հոծ թիվ մը ունեցավ իր գերիշխանության տակ:

Շարունակած «Էնթաթիկ» ամսագրի 1962 թվականի № Թ-ից, ԺԲ-ից և 1963 թվականի № Խ-ից և Բ-ից:

Պոլիս հասնելի առաջ, Փոքր-Հայքին կարելիոր մաս մը օսմանցի թուրքը ունեւ արդեն իր գերիշխանության տակ:

Ավելի քան մեկուկես դար պետք եղավ թուրքերուն որ Պոլիս հասնին: Բայց իրենց ճամբուն վրա անոնք շփում ունեցան հաճախ հայուն հետ:

Բացի այն հայ քղիչներեն, որոնք կային սելջուկներու օրեն, թուրքերու գալեն հետո ևս սկսան անոնցմէ տակավ կազմվիլ Փոքր Ասիո այն մասին մեջ, ուր իր կայսրությունը պիտի հիմնէր Օսման: Թրքական հին աղբյուրները հայ անվամբ վայրեր կհիշեն, օրինակ, Անգարայի, Էսկիշեհիրի և Իզմիրի շրջաններուն մեջ:

Ժն դարու թուրք պատմագիր Աշրֆաշադադե ամենահին թուրք աղբյուրն է, որ հայ անվամբ տեղանուններ կհիշէ առաջին սուլթաններուն օրով: Խոսելով օսմանցի թուրքերու նախահայր էրթոգրուկի երեք որդիներուն՝ Օսմանի, Գյուսդրուդի և Սարվիաթի մասին, կըսեն, թե սելջուկներու Ալադդիին սուլթանը ասոնց տվավ Սյուլուզը, Փարաշա-Հիսարի և Բիլեջիկի միջև, Թոմանիլ-Բելին և Էմենի-Րելին¹⁰³:

Աշրֆաշադադե հիշելով շինարարություններ, գործ ըրին Ֆաթիհի շրջանի վեպիները, կգրեն, թե ասոնցմէ Մուսթաֆա փաշան իմա-

103 «Աշրֆաշադադե թարգմ.», 1932 (1924), Ստամբուլ, էջ 4:

բեր մը, մեղեկսն մը և մզկիլի մը հիմենց
Էրմենի-փագարիի մեջ¹⁰⁴։

Թուրք պատմաբան Ուզունչարչընը թուրք
հին աղբյուրներն առնելով, ինքն ալ կրան, թե
կարգ մը աշիրեթներ, որոնք նախապես Ան-
գարայի արևմտյան կողմը, Քարաջաղաղի
շրջանները գետնաղված էին, ավելի հետո փո-
խադրվեցան Սյուլուգի, Թումանիչի և էրմենի-
Դերենդիի շրջանը, որոնք գրավված էին էր-
թողոյսի բնի կողմեն¹⁰⁵։

Թուրք աղբյուրներու մեջ էսկիշեհիբի մո-
տակայքը կհիշվի Էրմենի-Ֆյույի անուն դյու-
ղը այն ընդհարումներուն առթիվ, որոնք
1313-ին մղվեցան Օսման-Ղազիի և էսկիշե-
հիբի թուրք բնի միջև և որու միջոցին Օս-
մանի կողմն անցավ և հետո իսլամաթյունն
ընդունեց համարավաժոր Քյոսն Միհալ բնի¹⁰⁶։

Դարձյալ թուրք աղբյուրները նիկոմիդիո
նահանգին մեջ Սաբունջա լիճին մոտիկ կհի-
շեն Էրմենի-փագարը անուն վայրը, զոր
1320-ին գրաված է Աքշա-Քոչա, Քանգրա
կոչված գյուղին հետ մեկտեղ։ Աքշա-Քոչա
ղենքի բնիներն էր Օսման-Ղազիի և հրաման
ունեն իզմիթի շրջանը գրավելու¹⁰⁷։ Ան էր, որ
գրավեց իզմիթեն մինչև Սկյուստար տարբ-
ծությունը և որուն անունով իզմիթի նահանգը
հետագային պիտի կոչվեր Քոչա-էլի։

Եթ զարեն սկսյալ,— կրես թուրք պատ-
մաբան մը,— մեծ և հին քաղաքներու մեջ,
որպիսին էին Կոնիան, Կեսարիան, Սվա-
զը, կգտնենք ոչ միայն թուրքեր, այլև ըլլա
ցեղային ծագմամբ, ըլլա կրոնքով տարբեր
տարրեր։ Թեև թուրքերն ու մուսուլմանները
կկազմեն հոն ստվար մեծամասնությունը,
հոն կային նաև հույներ և հայեր, և մաս մը
հրեաներ ալ¹⁰⁸։

Ալպոյաճյան հավանական կգտնե, որ բյու-
ղանդական շրջանն իսկ հայեր եղած ըլլան
Բրուսայի մեջ¹⁰⁹։ Թրքական գրավումեն
(1314) քիչ հետո սակայն հայեր ստուգապես
կային հոն, որոնք թիվը տակավ աճեցավ
Կիլիկիայեն եկող գաղթականներով 1375-ին։
Հայոց առաջին եկեղեցին՝ Ս. Լուսավորիչը,
պետք է այդ շրջանին կառուցված ըլլա։ Զելե-
բի սուլթան Մեհմեդի օրով (1418—1421) նոր
հայեր եկած են Բրուսա և աշխատած մզկիթ-
ներու շինություն մեջ։

104 Ալթոփաշազադե, էջ 191։

105 Պրոֆ. Իսմայիլ Զաֆըր Ուզունչարչընը, «Օսման-
լը Թարիհի», 1961, Ա, Բ ափս, էջ 102։

106 Անդ, էջ 570։

107 Անդ, էջ 114, 117 և 551։

108 Köprülü Mehmed Fuad, «Les origines
de l'Empire Ottoman», Paris, 1935, p. 69.

109 Ա. Ալթոյաճյան, «Բրուսայի շրջանի հայերը»,
«Էջմիածին», 1959 հունիս, էջ 45, 47, 49։

1463 թվականին Երուսաղեմի մեջ Մարգա-
րե արեղայի կողմն ընդօրինակված «Յայս-
մաուրք»-ի մը հիշատակարանը կհիշե զգտն
Մարտիրոս եպիսկոպոսն Պուրսացի, որ աշ-
խատեցաւ և ծաղկեց զգիրքս¹¹⁰։

Օսմանցի սուլթանները քանի տարածվե-
ցան դեպի բյուզանդական կայսրության սահ-
մանները, այնքան ստիպված էին հաշվի առ-
նել քրիստոնյա տարրը իրենց գրաված հողե-
րուն վրա։ Պետություն մը համար, որ նոր
կատեղծվեր, բավական չէին հաղթական բա-
նակները։ Գրավված հողերը պետք էր որ շնե-
նային։ Այդ բանը քրիստոնյան միայն կրնար
ընել այդ օրերուն։

Հայ և թուրք աղբյուրները համարաշխ շնե
պատմելու առնել կյանքը, զոր կվարեն հա-
յերը թուրք վարչության տակ։

Թուրք նոր պատմագիրները հպարտ են այն
սիրալիք վերաբերումին համար, զոր իրեն
թե ցույց տված են առաջին սուլթանները
իրենց լուծին տակ մտած քրիստոնյա ժողո-
վուրդներուն հանդեպ, և կճառեն անընդհատ
անոնց վայելած քարիքներն։ Կհիշեն մաս-
նավորապես խաղաղ համակեցությունը թուրք
և քրիստոնյա ժողովուրդներուն, անոնց հա-
սարակաց քարքերը։

«Հույն և հայ բնակչությունը, որոնք Անա-
դոլի թուրքերուն հետ միասին կապրեին,
ստրված էին թուրքերենը,— կրես թուրք ծա-
նոթ հեղինակ մը.— նույնպես թուրքերուն
մեջ հաղվադեպ չէին անոնք, որոնք կխոսեին
անոնց լեզուն, մանավանդ հունարենը»¹¹¹։

Ժիշտ է որ զանգվածային իսլամացումներ
և կրոնական հալածանքներու դեպքեր դրեթե
չկան սկիզբները ինչպես թաթարներու, նույն-
պես դարամանցի բեյերուն և օսմանցի ա-
ռաջին սուլթաններուն օրով։

Մեր նոր քանասիրեններն մեկը, որ շահե-
կան ուսումնասիրություն մը նվիրեց Պուսո
հայության սկզբնական շրջանին, քաղաքին
թուրքերուն կողմն գրավման 500-ամյակին
առթիվ, թուրքերը գերադաս կսեպեր Բյու-
ղանդիոնեն, օտար տարրերու հանդեպ իրենց
վարած քաղաքականության տեսակետով։
Ենախ սելջուկյանք և ապա թրքական կարգ
մը իշխաններ և անոնցմե վերջ ալ օսմանցի-
ները այդ գրավյալ վայրերուն մեջ հիմնե-
ցին իսլամական պետություններ և խնամքով
պահեցին իրենց քրիստոնյա հպատակները և
բաղդատամբ Բյուզանդիոնի, ավելի խաղաղ
ու տանելի կենցաղ մը ապահովեցին անոնց,
արդարորեն քաշխելով տուրքերը, արտոնե-
լով նաև պահելու իրենց կրոնքն ու հետեւելու
իրենց հնավանդ սովորություններուն։ Մեկ-

110 Մկրտիչ Եպիսկոպոս Աղավունի. «Միտարան» և
այլեղուք հայ Երուսաղեմի, էջ 253—254։

111 Քյոփուլյուլու, հիշված աշխատությունը, էջ 20։

ուսման և օսմանյան շրջաններուն Փոքր-Ասիոյ մէջ ապրող հայութիւնը նպաստավոր-վեցավ այս նորաստեղծ վիճակին: Նոր գաղ-թականութիւններ ևս եկան ավելնալու հի-նքուն վրա: Պետութիւնը զանոնք կզետեղէր հարմար վայրերու մէջ և իրենց կտրվէր հարկ եղած դուրսութիւններ ու խաղաղ աշխա-տանքի հնարավորութիւն և կվայելէին ամեն կերպով պետութեան պաշտպանութիւնը¹¹²:

Սակայն Սեբաստիո Ս. Նշան վանքի Աստ-վածաշունչը, զոր 1453 թվականին կազմած է Կյուրեղ անուն եպիսկոպոս մը, հետևյալ հիմնադրարարն ունի. «Ի թուականիս Հայոց յինն հարիւր և յԲ (1453), ի դառն և ի դժնեայ ժամանակիս, յորում տարաքերեալ ծփիմք պանդխտութեամբ, տատանեալ մեր ի դա-ւառս Սեբաստիոյ, ի սուրբ անապատս Սրբոց Հրեշտակապետաց, ես նուազս... տեսեալ զԱստուածաշունչ Գիրս զայս հնացեալ... և անփոյթ ընկեալ, և կազմել ետու աշակերտին իմոյ Կիւրեղ սրբազան կոնստանդին»¹¹³:

Հայ ժողովուրդի ճակատագիրը այդ է եղած շատ մը դարեր, ծծփիլ պանդխտութեամբ, բայց և տքնիլ՝ փրկելու համար իր հոգեկան գանձերը:

3. ՅԱԹԻՉ ԻՐ ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ՄԵՋ

1453-ը թվական մըն է աշխարհի պատ-մութեան համար: Պոլսո գրավումը թուրքե-րու կողմէ այդ տարին՝ համաշխարհային նշանակութեամբ իրադարձութիւն մըն էր:

Առանց պատճառի չէր, որ հին պատմա-գրութիւնը Պոլսո գրավումով կիսկեր միջին դարը: Եթէ այդ սահմանագծումը իր հին հիմքերով ընդունելի չէ մեր ներկա ըմբռնում-ներուն, այնուամենայնիւ ան ցույց կուտա այն մեծ դերը, զոր Պոլսո գրավումը խաղաց Եվրոպայի և Մերձավոր արևելքի ժողովուրդ-ներուն ճակատագրին վրա, այն մեծ դեպքե-րու կողքին, որոնք նույն այդ գարուն մէջ պատահած, բացառիկ հեղաշրջումներու առջե դրին նույնպէս մարդկութիւնը, և որոնք էին տպագրութեան գլուտը Պոլսո անկումին քիչ առաջ, 1440-ին, և Ամերիկայի հայտնութիւ-նը Եվրոպային, որ տեղի ունեցավ գարուն վերջը, 1492-ին:

Պոլիս պետք էր ամեն զնով գրավվեր: Ան չլատված էր ներսն և իր հոգեկան կորուր կորսնցուցած դավանական վեճերու պատճա-ռով: Գծգռներու դաս մը կսնուցանէր իր իսկ ժողին մէջ: Բավական է ալքի առջե բե-րել միաբանական փորձերը, որոնք տեղի

կունենային Պոլսո մէջ ճակատագրական պա-հու մը, և ցատումը, զոր կհրահրէին անոնք ժողովրդական զանգվածներու մէջ:

Ինչպէս հայտնի է, 1452 յոյեմբերին կար-դինալ Իգիգոր Պոլիս հասած էր և դեկտեմ-բեր 12-ին արքունիքին, ծերակույտին և քարծրաստիճան հոգեորականութեան ներ-կայութեան, Ս. Սոփիայի մէջ կրոնական պաշտամունքը կատարվէր էր Փլորենտին ձևակերպութեանց համաձայն ժողովրդա-կան խավերը, ստորագրա հոգեորականու-թեան և մասնավորաբար Գենատիոս անուն գիտնական վանականի մը ազդեցութեան տակ, զրգովեցան այս դեպքն: Վանական-ներու խումբեր փողոցները շրջեցան աղա-ղակելով և անեծք կարդալով լատիններուն և Փլորենտին ժողովին որոշումներուն և ա-նոնց կուսակիցներուն դեմ¹¹⁴:

Միլլեր, Թուրքիո մասին իր երկերով ծա-նոթ սովետական պատմագիրը, քննելով հո-գեբանական պատճառները, որոնք հնարա-վոր դարձուցին Պոլսո գրավումը, կգրե. «Ինչ որ ավելի կարեւոր է, այն պարագան էր, թե միութիւն չկար պաշարվածներուն միջև: Կայսերական իշխանութիւնը ատելի էր ժո-ղովուրդին: Պոլսո պահակազորքին շարքե-րուն մէջ ներկայութիւնը 3 000-ի շափ յա-տիններու—չենովացիներու, վենետիկցիներու, սպանիացիներու—այսինքն կաթոլիկ-ներու, չէր վայելէր օրթոդոքս բնակչութեան վստահութիւնը: Օրթոդոքս հոգեորականու-թեան միջին և ստորագրա խավը, որ մեծ ազ-դեցութիւն ուներ քաղաքային զանգվածնե-րուն վրա, վեճապէս կհակառակէր Փլորեն-տին միութեան, զոր կայսրը 1439-ին կնքած էր պայպին հետ, որովհետև անոր մէջ կտես-նէր պայպին ձգտումը իր ձեռքն առնելու Օր-թոդոքս եկեղեցին և միևնույն ատեն Բյու-զանդիոնի եկեղեցական հարստութիւնները: Միաբանական առաջին արարողութիւնը, որ տեղի ունեցավ 1453 տարվան վերջերը Ս. Սոփիա Մայր եկեղեցիին մէջ, մեծ գրգռու-թիւն հառաք բերավ: Մինչև իսկ Պոլսո քարծր շրջանակները իսլամ իշխանութիւնը գերա-դաս կսեպեին կաթոլիկ տիրապետութենէն: Բյուզանդական նավատորմին պետը՝ մեծ կանցլերը, Լուկա Նոտարա հայտարարեց ա-մենուն լսելի կեցւով, թե լավագույն կսեպե քաղաքին մէջ թուրքերուն փաթթոցը տես-նել, քան թե պայպին թագը: Պապական Աթո-ռին հետ կնքված միութեան հանդեպ թշնա-մական զգացումները տարածված էին քաղա-քին ընչազուրկ դասին մէջ ևս: Քաղաքին գրավման նախօրյակին, ինչպէս ցույց կու-

¹¹² Գ. Ազոցյան, «Շողակաթ», Կ. Պոլիս, 1953, էջ 224:

¹¹³ «Հանդես մատուցա», 1923, էջ 71:

¹¹⁴ Franz Babinger, „Mahomet II je Con-querant“, Paris, 1954, p. 103.

տպն աղբյուրները, Պոլսո բնակիչները խմբին պատկեր կտրույալ համար¹¹⁵։

Կաթոլիկներու հետ միութեան փորձերուն առթիվ հուլն զանգվածներուն սրտմտութեան արձագանքը հասնի էր մինչև հայկական շրջանները։

1453 թվականին խորքերդի մեջ Դավիթ եպիսկոպոսի կողմն ընդօրինակված «Յայս-մաուրք»-ի մը հիշատակարանը, զոր Սրվիմանայանց մեջ կրեին, կհիշէ Բյուզանդիոնի կայսեր և հունաց պատրիարքին դիմումը առ ոտս պապին. «Եսկ յորժամ դարձեալ եկին նոքա Ստամբուլ իշխանացն Հոռոմոց կարծեալ էր, թէ պատրիարքն և թագաւորն ի ֆոնտանթին դարձան... և ոխս պահեալ իշխանացն Հոռոմոց ընդ թաղաւորին և պատրիարքին իրեանց, և ալ ոչ միաբանեցան ընդ նոսա»¹¹⁶։

Պաշարված Բյուզանդիոնը հոգեպես ալ ընկճված էր, հույս չունէր, թէ պիտի հաղթէ։ Ամենն հոռետես նախազգացումները համակած էին դայն։ Քաղաքին մեջ շրջան կընեին ամեն տեսակ սև կանխագուշակութուններ, որոնք իբրև թէ եղած էին նախատեսելով կայսրութեան մոտալուտ վախճանը, ու հույնը, արդեն ընդունակ սնանելու նախապաշարումներով, իբր ճակատագիրը վճռված կսեպեր, և այդ վճիռը, ըստ իրեն, երկինքն էր որ կուգար։

Պաշարողները, ընդհակառակը, լեցված էին վայրագ ոգևորութեամբ մը, վստահ էին իրենց հաղթանակին։ Ավարի տենչը մեկ կողմն և մյուս կողմն կրօնական մոլեռանդութունը կզրգոնէին հարձակման թափը։ Անոնց շարքերուն մեջ ալ կանխագուշակութունները շրջան կընեին, բայց անոնք իրենց մոտալուտ հաղթանակն է, որ կնախատեսեին։

Յաթիհի մուտքը Պոլիս՝ նախճիրներու երեք օրի պատակոցից դժբախտ քաղաքին։

Ժամանակակից աղբյուրներ, հույն թե օտար, լեցուն են աղեխարք մանրամասնութուններով։ Պատմութեան մեջ հաճախագիտ են ծայրահեղութունները, որոնք գրգռված են արշավանքներու առթիվ, երբ մոլեգնած քանակ մը կմտնէ նվաճված քաղաք մը ներս։ Բայց ինչ որ պատահած է Բյուզանդիոնի երբեմնի մայրաքաղաքին մեջ այդ ահաւոր երեք օրերուն՝ ավելի զարհուրելի կդառնա, որովհետեւ քաղաքին բնակչութեան հետ խեղդամահ կըլլար ամբողջ քաղաքակրթութուն մը։

Բյուզանդիոնի անկումը նկարագրող օտար պատմիչներն ոչ մեկը այնքան կենդանի

գույներով չէ նկարագրած թուրքերուն մուտքը Պոլիս, որքան Գուստավ Շլումբերգեր¹¹⁷։

Թուրք պատմագրութունը զգույշ է թուրք զորքերուն Պոլիս մուտքը պատմելու ժամանակ։ Ան շատ մեղմ կանցնի ահաւոր այն երեք օրերուն վրային, որոնք Պոլիսը արհավիրքներու թատր ըրին գրավումն հետո։ Կրօնն սպանդին մասին, որ արլան հեղեղներ հոսեցուց դժբախտ մայրաքաղաքին մեջ, ու բնական կդտնեն երեքօրյա այդ կոզոպուտը քաղաքի մը մեջ, որ այնքան ճիգերով գրավված էր կամ երբ զորքը կխուժէ Այա-Սոֆիա եկեղեցին, հոն խոնված ժողովուրդն իր ուղածը գերի առնելու համար¹¹⁸։

Այնքան առեղծվածային է Յաթիհի դեմքը, որ մինչև այսօր ալ մարդիկ կըժվարանան եզրակացութեանց հանգիլ նկարագրի իր գծերը բնորոշելու առնել։

Քիչ մարդ խոսեցուցած է իր վրա այնքան հսկա լափով, որքան Յաթիհ Սուլթան Մեհմեդ և ոչ ոք իրեն պես այնքան առարկա եղած է հակառակ կարծիքներու։

Անդրադառնալով կրօնական համոզումներուն, որոնք վերագրված են Յաթիհին և որոնք կձգտին դայն ներկայացնել լայնախոհ, նախապաշարումներ վեր, իսլամ մոլեռանդութեան կաշկանդումներն ազատ, հանդուրժող և մինչև իսկ համակիր քրիստոնեության, Յաթիհի կենսագրիներն մեկը կզրեն. «Սուլթանը երբեմն տարվեցաւ ճանչնալու քրիստոնեության սկզբունքները. ինչպես ցույց կուտան իր գրադարանին մեջ գտնված ինչ-ինչ ձեռագիրներ, հոսմանիստ խորհրդականներու և մանավանդ Գենատիոս պատրիարքի միջոցով, ուղեց թափանցել քրիստոնեության պատմութեան և վարդապետութեան։ Քանիցս Եվրոպայի մեջ տարածվեցաւ շահեկան այն լուրը, թէ մեծ թուրքը կաթոլիկութեան է հարած, նույնիսկ լուր տարածեցին, թէ քրիստոնյա մորմեն ուսած է «Էլայր մերձ»-ը և ուրիշ աղոթքներ, զորս բոլորն ալ մոռցած է հետո, և հեռացած քրիստոնեութենէն։ Բնականաբար տեղիք չկա հավատք ընծայելու նման պատմութեանց։ Բայց փոխարեն շատ ավելի կարևոր է իրական գոյութունը այն Հավատամքին, զոր խմբագրած է Սքոլարիոս, այսինքն Պոլսո անկումն հետո առաջին հուլն պատրիարքը Գենարիոս, և որուն հունարեն բնագրին հետ գտնված է նաև թուրքերեն թարգմանութունը։ Դժվար չէ գուշակել, թէ այս աւելեցուցը պետք է գրված ըլլա Սուլթանին մեկ փափագին իբր գահացում, կամ գործադրելու համար անոր մեկ

¹¹⁵ А. Ф. Миллер, «Краткая история Турции», Москва, 1958, стр. 13.

¹¹⁶ Գաեթիքն վաղապէս Սրվիմանայանց, «Քորոս աղբար», Բ, 4, Պոլիս, 1885, էջ 279—281։

¹¹⁷ Gustave Schumberger, «Le siège, la prise et le sac de Constantinople par les turcs en 1453», p. 27.

¹¹⁸ Ուզունչաշէրլը, հիշված աշխատութիւնը, էջ 490.

հրամանը, Բայց բացարձակապես սխալ պիտի ըլլար այս ժամանակահատիկները հիման վրա հզորակացնել, թե սուլթանը ուզած ըլլա պատերազմել քրիստոնեության հարեւու: Բյուզանդական մայրաքաղաքին և քրիստոնեական բնակավայրերը հզորակալ երկիրներու գրավումն հետո, Մեհմեդ Բ ուզած է տեղեկանալ իր նոր հպատակներու կրօնական ըմբռնումներուն մասին¹¹⁹:

Նշանակալից է, որ Պիոս Բ պապը թուրք հառաջխաղացումը կասեցնելու համար այնքան փորձերն հետո, հազիվ թե կիմանար Ֆաթիհի տարած հաղթանակները Սև ծովի ափերուն վրա և խորտակումը Տրապիզոնի կայսրության, սուլթանին կողմեր հանկարծ, առաջարկելու համար անոր, որպէսզի քրիստոնեությունն ընդունի: Տարակույս չկա, որ այս զգայացուցիչ ժեստին զայն մղողը Պոլսո հունաց Գենարիոս պարտիարքին խմբագրած հանգանակն է Մեհմեդ Բ-ի համար և երկուողը, թե սուլթանը կհարի օրթոդոքսության: Պիոս Բ պապը հավանաբար քաջալերված է այն գրույցներին, որոնք շրջան կընեին Եվրոպայի մեջ և որոնք համաձայն իբրեւ թե սուլթանը թերահավատությամբ կվարվի դեպի Մուհամեդի կրօնը, թե հակումներ ցույց կուտա դեպի քրիստոնեությունը, թե «Հայր մեր»-ը գոց գիտե և այլն: Պապին այս գրությունը, որուն հունարեն թարգմանությունները հասած են մեզի, մահմեդական կրօնին վարդապետությունը կետ առ կետ կշախշախե և կընեն քրիստոնեության մանրամասն շատագովականը, բայց չի մոռնար միեւնույն ատեն Ֆաթիհի փառասիրությունը զրգռել հայտնելով, որ ան այս կերպով պիտի հանդիսանա վեհապետ մը, որուն փառքին դեռ չէ հասած ոչ ոք¹²⁰:

Մեր օրերուն հաճախ լսած ենք, թուրքերու բերնեն, կշտամբանքներ Ֆաթիհի հասցեին, ոչ իսլամները հովանավորած և անոնց գոյությունը ապահոված ըլլալուն համար թուրք ժողովուրդի ծոցին մեջ:

Ինչ որ ալ ըլլա իր իսկության մեջ Ֆաթիհի դիմագիծը, որքան ալ սև գծեր գտնվին անոր նկարագրին մեջ և կամ որքան ալ իրական ըլլան իրեն վերագրված դաժանությունները, և մյուս կողմն ինչ հափշտակության մեջ ալ մոլորած ըլլան զինք գովաբանողները, քան մը ստույգ է: Երիտասարդ այդ սուլթանը շատաց վերաշինել ավերակ քաղաքը, զոր մայրաքաղաք պիտի դարձնէր իր կայսրության, հունական Բյուզանդիոնին տեղ պիտի ստեղծէր թուրքի քաղաք մը՝ Իստամբուլը, ինչպէս զայն կկոչեին հույները, պիտի վերածէր Իս-

լամբուլի, այսինքն իսլամներով լեցուն ոստանի մը: Արդարեւ, Իսլամբուլ կոչումը, զոր ժԸ դարու թուրք սուլթաններ պիտի նվիրատուէին իրենց գրամներուն վրա, Ֆաթիհ է գործնին իրենց գրամներուն վրա, ինչպէս որ տված է իր նոր մայրաքաղաքին, ինչպէս կվկայէ ժամանակակից հայ տաղերգուն, Արթուր Կոնյուրաքին:

Փոխեաց զանուն Ըստամպուլին,

... Ասաց Իսլամպուլ կոչեցին:

Բայց որպէսզի Բյուզանդիոնը Իսլամբուլ դառնար, նախ շենցնել պետք էր ավերակ քաղաքը:

3. ՀԱՅԵՐԸ ԵՎ ՊՈԼՍՈ ԳՐԱՎՈՒՄԸ

Ուսումնասիրության շահեկան նյութ մըն է տպավորությունը, զոր Պոլսո գրավումը գործած է հայոց վրա, ինչպէս առհասարակ շահեկան է գիտնալ, թե ի՞նչ եղած է հայոց վերաբերումը դեպի թուրք սուլթանները օսմանյան տիրապետության ընթացքին: Շահեկան, որովհետեւ հակասական կարծիքներու բախած է միշտ այն հարցումը, թե ի՞նչ է եղած առաջին սուլթաններուն վերաբերմունքը դեպի հայերը, և ի՞նչ եղած կրնար ըլլալ հայերու իրենց զգացումը վեհապետներու հանդեպ, որոնց լուծին ներքե քշեր էր գանոնք ճակատագիրը:

Մեջբերինք, նախորդ գլուխի մը մեջ, Օրմանյանի դատաստանը այն վերաբերմունքին մասին, զոր առաջին սուլթանները ունեցան դեպի հայերու: «Հիշյալ սուլթաններուն հայոց հետ հարաբերությունները միշտ քաղցր ու բարյացակամ եղան»¹²¹, — ըսած էր հոն Օրմանյան: Անոր այս կարծիքը, արտահայտված և նախկին պատրիարքի մը, կարկառուն մտավորականին մը և մանավանդ պատմագրի մը կողմն, կրնար ընթերցողը մղել այն ենթադրության, թե հայերը բարություն վայելած են նույն այդ սուլթաններուն օրով, թե իրենց կարգին համակրական զգացումներով տոգորված են անոնց հանդեպ, և թե, հետևաբար, գոհունակությամբ է որ պիտի ողջունէին Ֆաթիհի մուտքը Պոլիս:

Եվ այս ենթադրությունը ավելի հավանական պիտի թվեր մեզ այն իրողության վրա ևս, թե Բյուզանդիոն ամբողջ դարեր դառնացուցած էր հայ ժողովուրդը, հալածած ու ճնշած էր զայն, ինչ որ անտարբեր պիտի ընէր հայերը անոր վիճակված աղետին առջև:

Փաստերը սակայն նման եզրակացության մը չեն առաջնորդեր մեզ: Սխալ պիտի ըլլար նախ բարյացակամության այս կամ այն ժեստը ընդհանրացնել հռչակելու համար, թե

¹¹⁹ Յրանց Բաբիքե, հիշված աշխատությունը, էջ 500:

¹²⁰ Անդ, էջ 239—241:

¹²¹ «Ազգապատմ», Բ, էջ 2005:

սիրալիր վերաբերմունք վայելած են հայերը առաջին սուլթաններու օրով և ադկն ալ եզրակացնել, թե զոհունակությամբ տրամադրված են փոխադարձաբար հայերն ալ դեպի թուրք վեհապետներու ժողովուրդ մը, որմե խլված է իր հողը, որ գերի կապրի իր իսկ հողին վրա, որ կկեղեքվի և կհեծն տուրքերու քնոսե տակ, չի կրնար դառնութենե տարբեր բան զգալ, եթե նույնիսկ պահ մը կասած է չարդը, և կամ, ենթադրենք, իր հավատքին դպող մը չկա: Այնպես որ, հակառակ այն դառնության, զոր հայերը կանուցանեին դեպի Բյուզանդիոնը հայ ժողովուրդին հասած աղետներուն մեջ անոր խաղացած այնքան տխուր գերին համար, այնուամենայնիվ թուրք լուծի տակ անոնց անցուցած մեկուկես դարը չէր կրնար զանոնք լմտահոգել մահկան հաղթական արշավին ի տես, արշավ, որ կսպառնար հավերժացնել անոնց տիրապետությունը և իրենց ալ լուծը:

Ընդհակառակը, դեռ այն միամտությունը կար հայոց մեջ, որ քրիստոնյա աշխարհը իրեն օգնության պիտի գա հասնի օր մը և Բյուզանդիոն մեկը պիտի ըլլա իր ապագա ազատարարներն: Այդ միամտությունը չէր կրնար բեկում լստեղծել իր հողիին մեջ՝ Պոլսո զրավման լուրը առնելուն, մինչ ինք կհուսար, որ թրքական հառաջխաղացումը պատվարի մը պիտի բխի ուշ կամ կանուխ և ինք պիտի թռթկի իր լուծը: Բյուզանդիոնի աղետը պետք է ցնցած ըլլա ուրեմն ղիկնք, մամականդ խորտակված տեսնելով թուրք մը, որուն պաշտպանությունը, կրսն, իր համեստ մասնակցությունը բերած էր ինքն ալ:

Ե. Պոլսի անկման լուրը, — կգրե մեր նոր բանասերներն մեկը, — առանձնապես ծանր տպավորություն էր առաջ բերել Հայաստանում այն պատճառով, որ իր պետականությունն ու անկախությունը կորցրած հայ ժողովրդի համար Բյուզանդիոն մինչև այդ ուրացել էր ապագա ազատարար լինելու հմայքը: Ինչ-որ Աղադրոն փիլիսոփայի վերադարձած մարգարեության մի հատվածը ցույց է տալիս այն քաղաքական ակնկալությունը, որ հայերն ունեին Բյուզանդիայից՝ իրենց ազատագրման համար, դեռևս ԺԳ դարում¹²²:

«... Այս տեսակետից էլ հասկանալի է, թե ինչու համար Բյուզանդիոնի հայերը, հույները և իտալացիների հետ միասին, այսպես անձնվիրաբար զործում մասնակցություն են ունենում քաղաքի հերոսական պաշտպանության զործում 1453 թվականին, երբ Մահո-

մեդ Բ-ի զորքերը կոիվներ էին մղում նրա դեմ»¹²³:

Չենք պիտեք որքան շոշափելի էր այդ մասնակցությունը: Դիտենք միայն, որ հայը ողորներ հյուսեց Բյուզանդիոնի աղետին առջև:

Ջարհուրանքը, որով համակված են զույգ հայ տաղասացներու՝ Արթուր համ կրետացիի և Առաքել Բաղիշեցիի հյուսած ողբերը, — առաջինը ականատես Բյուզանդիոնի մեջ շղթայաղծրված սարսափներուն և երկորդը հավանաբար ականատեսներե իսկ լսած զանոնք, — քավական են թարգման ըլլալու հայ խավերու մեջ տարածված անգոհանքին:

Արթուր համ երեք ամիս մնացած է Պոլիս, աղետին ներկա գտնված և ապա Անկյուրիո մեջ շարադրած է հավանաբար իր ողբը: Ան կենդանի գույներով կպատմե զարհուրանքի այն քանի մը օրերը, որոնք ավեր սփռեցին հեք մայրաքաղաքին մեջ:

Այնուհետև ան կուզե հայ ժողովուրդի կակիծին թարգմանն ըլլալ կարծես, երբ կգրե իր ողբին մեջ.

Այլ մեք գոչմք լույս ողբալով,
Եւ հառաչմք արտասուելով,
Յոգոց հանեմք կսկծալով,
Ըզմեծ քաղաքն ափսոսալով:

Եկալք եղբայրք հաւատացեալք,
Հայրք և ընտրեալք իմ սիրեցեալք,
Յարմարեսցուք ողբս արտասուաց
Բանիս որ այժմ են պատահեալ...¹²⁴:

Բյուզանդիոնի անկման ողբը հյուսող մյուս հայ տաղասացը՝ Առաքել Բաղիշեցին, հավանաբար ինքը Պոլիս չէր գտնվեր ահավոր այդ օրերուն, ինչպես կերևա ողբին սաքանի մը տողեն.

Վա՛յ և եղուկ ժամանակիս
Որ լքեսցաք զձայն ջու, Ստրմպօլ,
Եթէ Անտին և գերեցին
Ազգն թուրքաց զմեծն Ըստրմպօլ:

Բայց ան աղետը կողքա մեկու մը նման, որ բյուզանդական մայրաքաղաքը ճանչցած է իր փառքի օրերուն, և որ երբեմնի տյոգ մեծ ոստանին դովքը կհյուսե կարծես արցունքը աչքին, և եթե իր այդ գովքին մեջ հափշտակութենե տարված քերթողի մը մտքի թռիչքը կա, կընդնմարվի նաև կակիծը, որով համակված է.

¹²² К. Н. Григорян, «Из истории русско-армянских культурных связей X—XVII веков», Москва—Ленинград, стр. 332—333.

¹²⁴ Մեղերումը Անառայնի լույս բնծայած համահավաք տեքստին է քաղված:

¹²² Հ. Ս. Աճալյան, «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին», Երևան, 1957, էջ 7—8:

... Երանութեանց էր տեղի
Եւ գտնութեանց պատճառ, Ստըմպօլ.
... Վիրաց բժիշկ Բիւզանդիա,
Մեղաց քաւիչ Բիւզանդիա¹²⁵:

Առաքել Բաղդեցիի իր ողբին շարունակութեանը մեջ կզգացնեն այն հարվածը, զոր կկրեն հայ ժողովուրդի հույսերը ես, և այն գուշակութիւնները, որոնց սերունդն սերունդ փոխանցված են հայ ժողովուրդի երևակայութեան մեջ քրիստոնյա աշխարհին իրեն դալիւր օգնութեան մը համար...

Հայ ժողովուրդի հոգեկան տրամադրութեան տեսակետէն նվազ ուշագրավ չէ այն ոտանավորը, զոր Բյուզանդիոնի առումէն ավելի քան երկու դար հետո շարադրած է Երեմիա Զեւեպի Քյոմյուրճյանը և որ կոգնակոչ ալդ դառն օրերը¹²⁶:

Խոսելով հայ ժողովուրդի մեջ տարածված կանխագուշակութեանց, անոր սնուցած հույսերուն և Բյուզանդիոնի պաշտպանութեան համար անոր բերած աջակցութեան վրա, Անասյան կգրէ. «Այս պատճառով Բյուզանդիայի անկման լուրն ուղղակի շանթահարել էր հայ հոգեւորական և մտավորական վերնախավներին, քանի որ նրա հետ միասին հայերը կորցնում էին իրենց ազատագրական հույսերի հզոր կոպիւր. Աքրահամ Անկյուրացիին և Առաքել Բաղդեցիին երկարաշունչ բերթվածներով ողբացին Կ. Պոլսի անկումը, արտահայտելով հայ ժողովուրդի ոչ թե միայն վերնախավների, այլ առհասարակ բոլոր խավերի խոր վրդովմունքը, ցավն ու վիշտը քաղաքակրթութեան այդ հույակապ ոստանի նվաճման ու ավերման առթիւ, և նրանց բացասական վերաբերմունքը՝ նվաճող բարբարոսների հանդեպ»¹²⁷:

Ոչ նվազ ուշագրավ է, որ հեռավոր Խարբերդէն Պոլսո աղետին արձագանք կըլլա Խալիթ Խարբերդցիին ճիշտ նույն տարին, և կանխեն Ղուկաս Նոտարասը իբրեւ դավաճան մը, որ իր հայրենիքի դռները բացեր էր թշնամիին առջև, սորպէս յատուրս Սրբոց Վարդանանց լար իշխանն Սիւնեաց ուրացնալն վասակն¹²⁸:

Եվ սակայն հայերը չէին կրնար չհաշտվիլ նոր կացութեան հետ, ինչ ալ եղած ըլլար իրենց տրամադրութիւնը այն մեծ դժպիտն առթիւ, որ Պոլսո գրավումն էր թուրքերու կողմէ: Անոնք ստիպված էին աշակցիլ, որպէսզի շեննա նոր մայրաքաղաքը...

5. ՈՐՊԵՍՁԻ ՇԵՆՆԱ ՆՈՐ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԸ

Ժամանակակից աղբյուրները կպատմեն մեզի. թե Տաթիհ իր մայրաքաղաքը շեննանու համար իր առաջին հոգը ըրավ նոր բնակչութիւն բերել Պոլիս, որ նոսրանալ սկսած էր հույներու խուճապահար փախուստէն հետո:

Բնականաբար առաջին հերթին ան քանք պիտի ընէր իսլամներով լեցնել օսմանյան մայրաքաղաքը:

Մեզ հեռուները պիտի տաներ զբաղիլ բոլոր այն միջոցներով, որոնց դիմեց Տաթիհ իստամբուլը վերածելու համար Իսլամբուլի. այսինքն թրքական դիմագիծ տալու համար մայրաքաղաքի մը, ուր հույն ժողովուրդն ու հույն մշակույթը դրոշմներ էին դարձնել ի վեր իրենց հետքերը: Խալիթները շատ էին, որպէսզի ամեն կողմէ իսլամները գալին լեցվելն իրենց կայսրութեան մայրաքաղաքը: Տուններ պիտի տրվէին անոնց, մզկիթներ, մեդրեսներ, իմարեթահներ պիտի կառուցվէին իրենց համար, և պիտի ստանային առավելութիւններ, զորս գավառի թուրքը չունէր:

Ժամանակակից թուրք պատմիչը, Նեշրի. կգրէ, թե Տաթիհ քաղաքին մեջ պարապ մնացած տունները շրջաններէն եկող իսլամներուն տվավ, բազմաթիւ եկեղեցիները գրավեց և անոնց դանդակատունները փլցնել տալով, մինարներ կանգնեց անոնց տեղ¹²⁹:

Այն օրերուն թուրքը ի վիճակի չէր սակայն մայրաքաղաք մը շեննանու, ինչպէս որ ի վիճակի պիտի չըլլար դեռ շատ մը դարեր Պոլսո գրավումէն հետո: Պետք էր, որ իսկուպես շինարար տարր մը ժաղկեցնէր քաղաքը:

Տարակույս չկա, թե ինչպէս անոնք տարրը գերիշխող մնաց միշտ Պոլսո մեջ, թուրքերով և քրիստոնյա տարրերով քաղաքը լեցվելէ հետո ալ: Այնպէս որ օսմանյան մայրաքաղաքը բոլորովին չկորսնցուց իր հույն դիմագիծը ինչպէս Տաթիհի շրջանին, նույնպէս անկէ հետո ևս: Մինչև մեր օրերուն ալ Պոլսո շատ մը թաղերը հունական այդ դրոշմը պահպանեցին, ինչպէս որ հույներ ինքը պիտի համարէր անվթար պահել իր ներսը ինչ որ իբրև ավանդութիւն ժառանգէր էր երբեմնի Բյուզանդիոնէն:

Արդ, թուրքն էր տեղը քաղաքին, բայց դեռ հույնն էր որ կիշխէր այնտեղ...

Քրիստոնյա միակ տարր մը ժաղկեցնել քաղաքի մը մեջ, որ Օսմանյան կայսրութեան մայրաքաղաքը պիտի ըլլար այսուհետեւ, իմաստուն քայլ չէր: Թուրքը դեռ զուլճն էր հոն թվով, ի վիճակի չէր դիմագիծ տալ իր տիրած այդ նոր ոստանին: Քաղաքը հույն-

125 Հ. Ս. Անտոյան, հիշված աշխատութիւնը:

126 Անդ, էջ 88.

127 Անդ, էջ 8.

128 Գարեգին վարդապետ Սրվանտյանց, հիշված աշխատութիւնը, էջ 380.

129 «Զիհաննամե», Բ, էջերից, 1955, էջ 284.

րուն հանձնել՝ պիտի նշանակեր՝ ուրիշ տարր մը շունենալ անոնց կողքին: Այդ տարրը հայը միայն կրնար ըլլալ այն օրերու պայմաններուն մէջ: Ու Յաթիհ զգաց այդ բանը առաջին իսկ օրէն:

Այնպէս որ Պոլսո գրավումը թուրքերուն կողմէ 1453-ին՝ թվական մը բացաւ հայ ժողովուրդի պատմութեան մէջ ալ, սկիզբը դրավ Պոլսո հայ գաղութին:

Այդ գաղութը կորիզներ ունէր հիննէն նոր մայրաքաղաքին մէջ, և անոնցմէ գլխավորն էր Ղալաթիո համայնքը, իր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիով:

Հայերը, որ շննդագիներուն հետ սերտ գործակցութիւն ունեին Ղրիմի, և մասնավորաբար Կաֆայի մէջ, սերտ կապ պահպանեցին անոնց հետ Ղալաթիո մէջ ալ, ուր իրենց առանձին թաղն ու համայնքն ունեցան:

Ջննդական այդ թաղը ավերումէ զերծ մնաց, ու հայ համայնքը ևս բնականաբար մնաց իր տեղը, անդրանիկ հայ բշիշը դառնալով այսպէս սուլթաններու նոր մայրաքաղաքին մէջ:

Փաստեր շունինք, թէ հայեր Պոլսո գրավումէն վերջ խուճապահար փախուստ տված ըլլան Ղալաթիայէն, Դանուբը անցնելու և միանալու համար Արևելյան Եվրոպայի մէջ վաղուց կազմված հայ կորիզներուն, ինչպէս նորագ կկարծեն¹³⁰: Արևելյան Եվրոպայի այդ հայ գաղութները միշտ վերեն է, որ նոր տարր ընդունեցին, իսկ Փոքր Ասիայէն հայերու հոծ գաղթ մը, ուղղակի թէ Պոլսո ճամբով, ժէ դարու սկիզբէն է որ կթվագրվի:

Սակայն Ղալաթիո հայերը բավական չէին հայ գաղութի մը հիմը դնելու համար Պոլսո մէջ: Պետք էր հայերու հոծ թիվ մը գար համախմբվեր հոն, մասնավանդ հանդիպակաց ասիին վրա, ուր երբեմն Բյուզանդիոնն էր եղեր և ուր եկավ զետեղվիլ Յաթիհ ինք ևս:

Քոիթովուտս հույն պատմիչը, որ իմբրոսի գրավման ժամանակ կառավարիչն էր կղզիին և նպաստեց անոր գրավման թուրքերուն կողմէ, և որ թողած է շահեկան նոթեր Յաթիհի շրջանին մասին, կհիշէ նաև փորձերը, զորս սուլթանը ըրավ իր նոր մայրաքաղաքը հիմնելու համար. «Պաշտոնատարներ զրկելով Ամասթրա, որ կգտնվի Սև ծովի եզերքի Պափլագոնիա նահանգին մէջ՝ տեղվույն ժողովուրդին մեծ մասը փոխադրեց Պոլիս, ինչպէս իրենց գտնված վայրերէն Պոլիս տեղափոխեց օսմանյան տիրապետութեան տակ գտնվող հայերուն և ուրիշ տարրերու մէջէն

անոնք, որ գիտութեան, ինչքի և արհեստի տեր էին և կգրադէին առևտրորով»¹³¹:

Առաջին հայերը, որոնք Պոլիս մտան քաղաքը թուրքերուն կողմէ գրավվելէ հետո, բնականաբար Բրուսայէն և էդիրնէնէն էին: Օսմանյան կայսրութեան երկու նախկին մայրաքաղաքներն ալ հայ համայնքներ ունեին Պոլսո գրավման առնէն:

Ինչպէս տեսանք, Ագրիանուպոլիսը հայերուն վաղուց էր ծանոթ, ու հոն եպիսկոպոս անդամ ունեցեր էին բյուզանդական շրջանին: Թուրքերուն հոն գալ զետեղվելէն և զայն իրենց մայրաքաղաք ընելէն հետո ալ անշուշտ հայեր եկեր էին էդիրնէն և նոր կորիզ մը կազմեր այնտեղ:

Ճշգրտելով պատրիարքը, որուն գործունեութեան մասին այնքան քիչ բան գիտենք որքան իր հոռին թիվին վրա, — կգրեն Բարիսգեր, — իր պաշտօնը կատարեց մինչև 1478...: Կթվի, թէ բավական կարևոր հայ գաղութ մը կապերն Բրուսայի մէջ, ուր իր ապրուստը կշահեր վաճառականութեամբ: Այլապէս, Ղալաթիո թաղին մէջ էր որ կարելի էր գտնել գլխավորաբար հայութեան ստվար թիվ մը. հոն ճարպիկ առևտրականներ էին անոնք, և այդպէս ալ մնացին մինչև մեր օրերուն: Թուրքիո մնացյալ մասին, մասնավորապէս Ռումելիի շրջանին մէջ, անոնք բացառապէս կապերին ամենակարևոր քաղաքները, ինչպէս Ագրիանուպոլիս, Փիլիպոպոլիս, Վառնա և ծովափնյա նավահանգիստները: Անոնց թիվը դժվար թէ կես միլիոնը անցած ըլլա. Յաթիհի շրջանին պետք է եղած ըլլա շատ ավելի նվազ»¹³²:

Մարմարայի զուլդ ասիւրուն մոտ և անոնցմէ ավելի ներսերը զետեղված հայերուն մասին նոթեր սպրդած են հայ աղբիւրներու մէջ ալ, և հայ քրտասերներ հետազոտութեան նյութ ալ ըրած են զանոնք:

Օսմանի հիմնած պետութեան մէջ, — կգրեն Ալպոյաճյան, — հաղիմ հարյուր տարվան ընթացքին հայերուն թվական արագ աճումը և բավական ստվար թիվով հայերու գոյութիւնը կհաստատուի այն իրողութեամբ, որ բյուզանդական կայսրութեան վերջին թեկոթին՝ Պոլսո մէջ առնվազն 1307-էն ի վեր, — կամ հավանորեն ավելի կանուխէն, — գոյութիւն ունեցող հայ եպիսկոպոսներ՝ անշուշտ ամենայն հայոց կաթողիկոսներու կարգադրութեամբ, եթէ ոչ ավելի կանուխ, ապահովաբար գծթ ժն դարեն սկսյալ կհոգնվեն նաև

131 Քրիստովուտոս, Բարսեղի թարգմանութեան Քրիստոսի, Կ. Պոլիս, 1829 (1913), էջ 22: Հավելում՝ Օսմանյան պատմութեան կանառի հանդեսին (Թարթիս օսմանի նշյումներ մեջմուսաբա):

132 Յրեմեց Բաղիեգեր, հիշված աշխատութեանը, էջ 234:

130 N. Yorga, „Armenii si romine a paralela istorica“, 1914, p. 64.



Արևմտյան Փոքր Ասիոյ, ինչպէս Բրուսայի և Կուդինայի մեջ ու շուրջը հաստատված հայերը և 1316-ին ի վեր էնկլուրիի մեջ հաստատված հայոց առաջնորդութիւնը իր գոյութիւնը կպահանջէր¹³²։

Հետեւաբար զարմանալու չէ, եթե Պոլսոյ գրավման տարին իսկ Անգարային ևս հայեր կուզան մայրաքաղաք։

Արարհամ Անկլուրացիին կվկայե իր ծանոթ ողորին մեջ, թե 1453 հոկտեմբեր 28-ին խումբ մը հայեր Պոլիս բերված են Անգարային։

Նա ոչ միայն տաճկաց ազգին, Այլ զքրիստոնեային ի մէջ բերին ի քսանեութն հոկտեմբերին Զշորս հայ լԱնկլուրոյ բերին։ Անտուածատուր Սաթըլմիշին Եւ Սիմէոն քարի քաշին Եւ Պապայի որդի Արվատն Եւ պարոն Գորոզ էշիմ հաճին։

Անշուշտ այս շորս հայերը չէին միայն, որ Պոլիս բերվեցան Ֆաթիհի կողմէ։ Անոնք հավանաբար գլխավորներն էին ավելի ստվար խումբի մը, որ իրենց հետ եկավ կամ հետեւեցավ իրենց։

1464 թվականին ընդօրինակված ժողովածուի մը մեջ (Մեսրոպ Մաշտոցի անվան Երեւանի մատենադարան, ԺԵ. Թիվ 2549, էջ 255ա) հետեւյալ կարեւոր հիշատակարանը կայ. «Ե թվականիս Հայոց ԶԺԳ ապրիլ ամսոյ ԻԲ եղև վերափոխումն Տէր Ներսէս եպիսկոպոսին Անկլուրիոյ, էր սա յերկրէն Ղրիմոյ, աշակերտ Սարգիս վարդապետի որ [որպէս] արեղակն փայլէր յերկրին Շ[ո]ւմանց, բազումք երկրորդ Տէր Ներսէս կոչէին. էր աղքատասէր, ճգնազգծատ, ըստ Տեառն բանին՝ զինչս իւր ձրի առնուր և ձրի տայր, ի բաղանիս ոչ մտանէր, մտնեմէն ի կին մարդ չհայէր և շնորհաւ Սուրբ Հովսէփն անդադար քարոզէր հայոց և ֆուսկաց. հոռոմոց և քաղումք ի մեծամեծաց տաճկաց լսէին զքանն կենաց և հաւատային ի Քրիստոս։ Իսկ անաւրէն արքայն Տաճկաց ժողովեաց զքրիստոնէից մանկունսն և երբ Ըստամպուլ. իսկ եպիսկոպոսն եկեալ ի հետ մանկանցն և երբ զթուղթ ազատութեան հայոց, իսկ անօրէն արքայն ոչինչ համարեցաւ զթուղթն։ Բայց զԱնկլուրիոյ քրիստոնէքն շնորհեաց նմա, և յետ Զ (6) տարոյ տարան գծնաւոր մանկանց ի Ըստամպուլ և գնացեալ սրբոյն զհետ նոցա ի Ղալաթան. ոչ իւր վիճակին միայն, այլ ամենայն քրիստոնէից էր սուրբ եպիսկոպոս Տէր Ներսէս. ԽԾ (45) ամաց գերեզման եղև ի

Ղալաթան, փոխեցաւ քարի մահուամբ ի Քրիստոս»¹³⁴։

Թուրքիոյ նոր մայրաքաղաքը շինցնելու համար հայեր բերված են նաև Աքքերմանեն։ Աքքերմանը ամենեն հին ոստաններն մեկն էր Արեւելյան Եմրոպայի հայութեան և ԺԳ դարուն արդեն հայ համայնքը գոյութիւն ունեցած է հոն։ ԺԵ դարուն ծաղկալ կեդրոն էր ան, ու հոն է, որ Նիկողոս եպիսկոպոս ընդօրինակած է 1460-ին մագաղաթյա Ճաշոց մը Յաշի հայ եկեղեցիին համար¹³⁵, Նույն այդ դարուն հոծ թվով էին հայերը այնտեղ, և Աքքերման ինքը մինակը ավելի շատ բնակչութիւն ունէր քան Յաշը, Սուշուան, Սիրեթը, Ռոմանը, Վասլիուն, հետագային և Բոնոշանը¹³⁶։

Աքքերմանեն հայեր Պոլիս եկած պետք է ըլլան Ֆաթիհի կողմէ քաղաքին գրավումն թիչ հետո։

Սամաթիո եկեղեցիին երևան հանված սուլթանական ֆերմանը¹³⁷ որոշապէս կըսէ, թե Սուլումանատուրի հայոց առաջնորդ Փրիդո-րը 1456-ին բողոքած է սուլթանին, թե իրենց պատիւը, իող սենյակներուն (օդա) և վայրերուն (ներ) վրա Աքքերմանեն եկող խումբեր (թախիֆե) կփորձեն գալ հաստատվիլ։ Մեր կարծիքով այս խումբերը հայեր միայն կրնային ըլլալ, որոնք ուզած են գալ գետեղվիլ այդ թաղին մեջ տուն-տեղ եղած իրենց ազդակիցներուն մոտ և սակայն մերժված են։

Նույն այդ աքքերմանցիները կամ թերես նոր ժամանողները երկրորդ փորձ մը ըրած են 1473-ին գալ տեղավորվիլ Սուլումանատուրի մեջ, ինչ որ առիթ տված է հիշյալ Փրիդոր եպիսկոպոսին կրկին բողոք բառնալ արքունիքին մոտ¹³⁸։

Աքքերմանեն հայ նոր խումբեր Պոլիս պիտի դալին անկե հետո ալ, երբ թրքական արշավանքները ուղղվին Մուղոկա։

Ֆաթիհ սուլթանը, որ 1462-ին առաջին արշավանք մը կատարած էր Վալաքիո վրա՝ ծունկի բերելու համար Վաղ-Յեփեշը, 1475-ին իր հարձակումները ուղղեց Մուղովայի իշխանին՝ Շտեֆան-Զել-Մարեի վրա, որ մտահոգիչ սկսած էր դառնալ իրեն, ճիշտ նույն տարին, երբ Կեսիկ Ահմեդ փաշան ալ կղրկեր Ղրիմը նվաճելու։

Բայց մինչ Ահմեդ փաշա կհաշողեր Ղրիմի մեջ գրավել Կաֆան, ինչպէս և ավելի հետո Մանգուլիքը, ասդին, Մուղովայի մեջ, թրքա-

¹³² Ա. Ալպոշեմլե, «Պատմութիւն հայ գաղթականութեան», Բ, Կապրի, 1955, էջ 549։

¹³⁴ Լ. Խաչիկյան, «ԺԵ դարի հայերն ձեռագրերի հիշատակարաններ», Բ, Երևան, 1958, էջ 216։

¹³⁵ Տե՛ս մեր «Tara Voevodului Ctefan», București, 1941, p. 21—25։

¹³⁶ Ն. Յարկա, հիշված աղետաբերութեան, էջ 64։

¹³⁷ «Charisteria Orientalia», 1956, Praha, p. 33։

¹³⁸ Անդր.

կան նապերը չէին հաշուներ ընկճել Քիլիան և Աքքերմանը, իսկ սուլթանը անկարող կըլար ցամաքին հառաջանալու և կատիպվեր ճտ դառնալ տառապելով հոգացավ:

Ինչ որ ընտրողեցավ գլուխ հանել Ֆաթիհ, իրականացուց Բայազիդ Բ, գրավելով Քիլիան և Աքքերմանը: Հաջողությամբ պսակեց տն արշավանքը, որուն անձամբ ձեռնարկեց 1484-ին: Ութը օրվան պաշարումն մը հետո, հունիս 14-ին ինկավ Քիլիան, իսկ Աքքերմանը դիմացավ միայն երկու օր:

Յուրքերը Պոլիս քնակչութիւն բերին այդ երկու քաղաքներին ալ:

Գարանաղջի իր ժամանակագրութեան մեջ կըսե, թե սուլթան Բայազիդ 1484-ին արշավեց Քիլիայի վրա ու զայն գրավեց, հետո հարձակեցավ Աքքերմանի վրա ու տիրացավ և անոր, ապա տեղվույն հայերը, ինչպես և հույներն և ուրիշ ազգեր, իրենց կիներուն և զավակներուն հետ աքսորեց ու բերավ Պոլիս¹³⁹:

Աքքերմանն նոր եկողները ևս պետք է փորձած ըլլան Սուլումանաստըր հաստատվիլ, և երկար ջանքերն հետո կըցած են ի վերջո հասնիլ իրենց նպատակին: Արդարև, Շէիք-բեթի 913 (= 1507) թվականին, Ֆաթիհի հաջորդին՝ Սուլթան Պայեզիտ-ի վելիի օրով, Աքքերմանցի Պողոս քահանայի մը ջանքերուն շնորհիվ կարտոնվին արքունական ֆերմանով քնակելու Սուլումանաստըրի մեջը¹⁴⁰:

Դար մը հետո աքքերմանցիք դեռ կային Սուլումանաստըրի մեջ, Սիմեոն Լեհացի, Ժէ դարուն սկիզբը, խոսելով Կաֆայի և Աքքերմանի հայերուն վրա իբրև Անիեն սերած, կըսե, թե անոնցմէ զոնու կան ի Սուլումանաստըր և հայնակ գրուցեն¹⁴¹:

Աքքերմանի հալոց այն բռնագաղթին մասին թանկագին տեղեկութիւն դարձաւ մեզ Դարանաղջին կուտա, հիշելու առթիվ 1634-ին տեղի ունեցած վեճ մը Պոլսո մեջ ինչ-ինչ հայ երեւելիներու և պանդուխտ հոգեվորականներու միջև: Վեճը հանգած է դատարան, ուր ներկա եղած է Դարանաղջին և ինքը: Դատավարութեան պահուն թուրք դատավորը կըսե հայ երեւելիներուն, թե կյավուրեն, դուք սերունդը չե՞ք միթե անոնց, զորս սուլթան Մեհմեդ աքսոր բերավ հոս Աքքերմանն, և եկեղեցին, զոր այսօր ունիք, միթե հույներէն չառա՞վ և չտվա՞վ ձեզ, ինչու՞ ուրեմն նեղութիւն կուտաք այս խնդներուն¹⁴²:

Ժամանակագրական կարգով՝ Գարամանն է որ հայեր կըբերվին Պոլիս:

1344-ին Կաֆա ընդօրինակված Ավետարանի մը հետագային գրված հիշատակարանը կըսե. «Ի դառն և անբարի ժամանակիս... Քրիստոնեայք տարաշխարհիկ եղեալ սուրկուն... Սուլթան Մուհամմէտն ի Ղստամպուռ յի թէ յԱնկուրիոյ միայն, այլ յամենայն աշխարհէ որ ընդ իւր իշխանութեամբն է և յանապազ ի բերել ի ներսէ... Բայց յողորմութենէ Աստուծոյ ա՛յն ինչ է որ սիրով ընդունեցաւ փատիշահն զհալոց ազգս և ամենայն քաղաքացոց եկեղեցեաց շնորհեաց շէն և փարթամ մեծ»¹⁴³:

Արդ, այդ քաղաքներուն մեջ Գարամանն ալ կար:

2. Գարրիել Այվազովսկի կպատմե, թե ինչպես Ֆաթիհ սուլթան Մեհմեդ երբ Գարամանի իրրահիմ իշխանին մահվնեն հետո ծագած հաջորդութեան վեճը կարգադրելու պատրվակով մտավ Գարամանի աշխարհը և գրավեց Իկոնիոնը, իր Մահմուդ փաշա վեզիրը ևս զրկեց կարանդու (Գարաման) քաղաքին վրա 1466-ին, և քաղաքին նվաճումն հետո հրաման րրավ Մահմուդ փաշայի զգամենայն ուրուխտաւորս և կարիտոց խազացուցանել ի Կոստանդնուպոլիս¹⁴⁴:

Գրիգոր Դարանաղջի, իրմէ առաջ պատահած պատմական դեպքերու քաղի մը մեջ, զոր կզետեղե իր ժամանակագրութեան սկիզբը, կգրե. «Թվին 20է (1468) այս սուլթան Մուհամմատս գնաց քաղով զօրօք ի Ղարամանն և զերկիրն էս և զմարդն սուրկուն երբ ի Ստամպուռ»¹⁴⁵:

Համմեր, արձանագրելով Ֆաթիհի ջանքերը իր նոր մայրաքաղաք շենցնելու զավառներն բերված գաղթականներով, կըսե իր կարգին. «Շատ փոքր մասը այս գաղթականներուն, ինչպես Գարամանն բերվածներուն, խալամ էին: Մյուսները ըտլորն ալ քրիստոնյա, զանազան դավանանք, որոնք իրենց պաշտամունքը կատարելու սլտոնութիւն ստացան»¹⁴⁶:

Ինչպես հայտնի է, աքսորյուններու վեճայետը Ուզուն Հասան, քարաքրույունները ենթարկելն հետո իրեն, փորձեց դեպի Արևմուտք ևս ընդարձակվիլ և 1471-ին դեպի Փոքր Ասիա զրկեց Յուսուֆը, որ նվաղկիան խլեց օսմանցիներուն ձեռքն, Գոնիայի և Ադսնայի գավառները արշավեց, Բայց ի վերջո պարտվեցավ օսմանցիներն և գերի բռնվեցավ: Ֆաթիհ այդքանով ա՛յ շոհացավ և 1473-ին ինքն անձամբ նոր արշավանք մը

143 «Հանդես ամսօրյա», 1926, էջ 288:

144 Է. Գարրիել Այվազովսկի, «Պատմութիւն Օսմանեան», Ա, էջ 205:

145 Դարանաղջի, «Ժամանակագրութիւն», էջ 10:

146 Hammer, «Histoire de l'Empire Ottoman».

III, p. 212.

139 Դարանաղջի, «Ժամանակագրութիւն», էջ 12:

140 Գ. Սեդեքյան, «Շոհագլաթ», 1953, էջ 258:

141 Սիմեոն Լեհացի, «Ուղեգրութիւն», էջ 348:

142 Դարանաղջի, «Ժամանակագրութիւն», էջ 185:

կազմակերպեց Ուզուն Հասանի դեմ, գրավեց անոր կարգ մը գաղառները և զայն փախուստի մատենեց: Այդ հաղթութիւններով, կըսե Յրմանյան, ավելի ևս ընդարձակվեցաւ օսմանյան տիրապետութիւնը հայ ազգին վրա, և ավելի բազմացան մայրաքաղաքի հայերը¹⁴⁷:

Ամիրդովլաթի համարավոր Սաղմոսին հիշատակարանը կըսե այդ մասին. «Յորժամ զնաց մեծ խոնդքար սուլթան Մուհամմատն ի վնայ Ուզուն Հասանայ և կոտորեաց զնա արար փախստական, բոհն զերծեալ զնաց ի Յավրէժ, և սա դարձաւ հմուտ ի խախթեան պատի թաղաքն Բաբերթ կոչեցեալ՝ այրեաց և աւերեաց և գերի երեր Ըստրմպօլ Սաղմոսարան մի լաւ և ընտիր աւրիկակ, հանգիպեցաւ Ամիրտօվլաթ բոշիշքս և ազատեաց զսուրբ գիրքն զայն ի գերութենէ. այս եղև ի թվ. ԶԻԲ (1473) ամին, Դարձեալ ի թուականիս Հայոց ԶԻԸ (1479) փուրկուե խոնդքարն արար զՎարամանին աշխարհին զհայազգս, և զիս անպիտան հողս զՄարտիրոս, հետ բերին ի Կոստանդնուպօլիս, առ ոտս սուրբ վարդապետին մերոյ Տէր Մաթէոսի Սեբաստացոյ, և Արարհամ վարդապետի Տրապիզոնեցոյ, որ և ըզսոքայ ալ խոնդքարն բերել էր վասն պատրիարքութեան համար և սոքա ոչ առին յանձն լաւ համարելով զմիայնակեցութիւն, քան թէ փառք առնուլ ի մարդկանէս»¹⁴⁸:

Ալպոյաճյան, ակնարկելով Ամիրդովլաթի Սաղմոսին գրիչ Մարտիրոս արեղայի վկայութիւն, թե Ֆաթիհ սուլթան Մեհմեդ Բ 1479-ին Վարամանին աշխարհին զհայ ազգս սուրկուն արար, կըսե, թե Վարամանի աշխարհս ըսելով Գարաման քաղաքը պետք չէ հասկնալ, այլ ամբողջ շրջանը, Կեսարիան ալ մեջը, որովհետև այդ շրջանին Գարամանի տիրապետութիւն տակ էր նաև Կեսարիան:

«Գոնիս և Գարաման, — կըրն Ալպոյաճյան, — շատ մեծ թիւով հայեր շին բնակած, հետեարար 2—3 անգամ անոնք պարպվելն հետո ստվարաթիւ հայեր կարելի չէր գտնալ հոն 1479-ին, փոխադրելու համար Կ. Պոլիս: Ուստի պետք է ընդարձակ իմաստով առնել Մարտիրոս արեղայի Վարամանի աշխարհս բացատրութիւնը և անոր մեջ ենթադրել շատ իրավամբ նաև Կեսարիան, և վստահութիւն մը ըսել, թե Վարամանի աշխարհն Պոլիս փոխադրված հայոց մեծամասնութիւնը Կեսարիան և Արգեոսի ստորոտը տեղավորված հայերն պետք է ըլլան, վասնզի Գարամանի տիրապետութիւն շրջանին մեջ առավելա-

պես և ամենեն մեծ թիւով հայեր պարունակող շրջանակը այդ կողմերն էին»¹⁴⁹:

Ալպոյաճյան Գարամանն տարված հայերուն մեծ մասամբ կեսարացիներ ըլլալուն փաստ կնկատե բացառիկ ձեռնբերցութիւնը, որով անոնք կըցան, ի հեճուկս բազմաթիւ ղովարութիւնց և թշնամանքին ու արհամարհանքին, զոր կկրեին տեղացի հույներն. «առանց հուսահատելու, ամենեն ստորեւ գործերու իսկ հանձնառու ըլլալով և սակավապետութիւն մը, իրենց համար քիչ-քիչ դէրք ստեղծել»¹⁵⁰:

Ամասիայեն բերված հայերու մասին ալ հարեանցի հիշատակութիւն մը ունինք 1480 թվականին ընդօրինակված ձեռագրի մը մեջ (ժամանակագրութիւն Միխայիլի Ասորոյ և Նամուէլի Անեցոյ, Երուսաղեմի մատենադարանի ձեռագրի թիվ 343) հիշատակարանը կըսե արդարև. «Արդ, զրեցաւ պատմագիրքս այս ի թուականութեանս Հայոց ԶԻԹ (1480) այս ի թուականութեանս Վարդանիս, որ այժմ կոչի Կոստանլիք Խնուպալիս, ձեռամբ մեղապարտ և անարհեստ գրչի ներսէս սուտանուն քահանայի, ի թագաւորութեան սուլտան Մահմադին, ի նեղ և ի նուր ժամանակիս, զոր բազում մորիկ հարուցանէր ի վերայ քրիստոնէից և իւր ազգին, ի տեղէ ի տեղ փոխելով և հարկապահանջութեամբ և այլ վշտաբ: Արդ, յերես անկեալ աղաչեմ զձեզ, որք կարդայք կամ արինակելով իշեցեք ի մաքրափայլ աղաթս ձեր զթափուրս յամենայն բարեաց. իսկ եթէ սղալ, կամ խոշորագիր կամ անախորժ մտաց ձերոց գտցի ի սմա, անմեղախորժ մտաց ձերոց գտցի ի սմա, անմեղախորժ զի լերուք. զի ի մէջ դառնութեան գրեցի զսա, զի բռնութեամբ և ակամայ ի յԱմասիու զմեզ բերին ի Կոստանդնուպալիս. և ես լալուի և քազում հառաչանալք գրեցի զսա. այլ և մեր կար այս էս»¹⁵¹:

Հայերու ուրիշ ստվար թիւ մը Պոլիս համախմբեց Ֆաթիհ երբ 1475-ին գրավեց Ղրի մը աւ հայկական մեծ զանգված մը բռնի գաղթեցուց Պոլիս:

Ֆաթիհ սկիզբէն իսկ աչքերը հառնէր Ղրիին: Անոր գրավումով ոչ միայն Սև ծովու մյուս ափը ոտք պիտի կոխեր իր կայսրութիւնը, այլև գերի ու ավար պիտի լեցնէր մայրաքաղաքը: Քսան տարի հազիվ անցած էր Պոլսո գրավումն ի վեր, և արդեն իր ձեռքն ինկած էին այնքան ընդարձակ հողեր Փոքր Ասիո մեջ թե նվազապակաս ափի վրա: Ղրիմին էր հիմա կարգը Օսմանյան գահուն ավար դառնալու. Ժրագիր, որ աղետալի պի-

147 «Աղագապատմութեան», Բ, էջ 2184:

148 'Եսկո. Վ. Բարգուլյան, «Յիշատակարան Ամիրդովլաթայ Սաղմոսին», «Հանդես ամսօրյա», 1885 օգոստոս, էջ 247:

149 Ա. Ալպոյաճյան, «Պատմութիւն հայ Կեսարիոս», II, էջ 585:

150 Անդ, էջ 586:

151 Նուրյու Խլիսկիզադօ «Պոլսոյ մասին», «Մարտ ցուցակ», Գ, էջ 250—251:

որ բլլար անդվույն հայության, մոխիրի վե-
ածելով «Մովսիսի Հայաստանը», որ կա-
նան էր եղբր, և հայ զանգված մը բռնի քե-
նելով հոնկն սուլթաններու մայրաքաղաքը:

Մեհմեդ Բ-ի թափանցող միտքը, — կգրե-
նամենք, — վաղուց է հասկցած էր բոլոր այն
ստավելությունները, զորս օսմանյան առե-
տուրը կրնար քաղել Կաֆայի տեղ դառնալով:
Մեթիհ կզգար, որ Ղրիմը կպակսի իր կայս-
րության, և պատրվակի մը կպասսեր միաց-
նելու համար զայն անոր, եթե ոչ իբրեւ նա-
հանգ մը, գոնե իբրեւ հարկատու պետություն:
Առիթը ներկայացավ շուտով: Աքվերաֆի-
րոն, ազգով ջենովացի, խոստացած ըլլալով,
թե Կաֆայի դռները պիտի բանա իրեն, Մեհ-
մեդ աճապարեց մեծ-վեզիրը ղրկելու... Ահ-
մեդ փաշա 1475 հունիս 1-ին խարխիս նետեց
Կաֆայի պարիսպներուն առջև, 40 հազար
մարդ ցամաք հանեց և սկսավ պաշարման
մարտկոցներ դնել: Քաղաքը երեք օր
միայն դիմացավ: շորորոգ օրը անձնատուր
եղավ: Քառասուն հազար հոգի գերի ղրկվե-
ցան Պոլիս, և հազար հինգ հարյուր ջենովա-
ցի երիտասարդ ազնվականներ ներմուծվե-
ցան հնիքերիներու շարքերը¹⁵²:

Կաֆան (Քեոդոսիա կամ Քեֆե) մեկն էր
Ղրիմի այն քաղաքներն, ուր հայերը ամե-
նեն ավելի հոծ էին թվով և ուր մեծապես
ծաղկիլալ գաղութ մը ունեին ջենովական
ընթացին: Համարված էր իրենց առևտուրը
աշխարհի զանազան մասերուն հետ, և ձրի
էր հետևաբար «Մովսիսի Հայաստան» տիտ-
ղոսը, որ տրված է իրենց գաղութին¹⁵³:

Կաֆայի գրավման ութնորդ օրը, —
կպատմեն Համենք, — Ահմեդ փաշա մեծ հա-
կերույթ մը տվավ Կաֆայի հայ երեւելինե-
րուն, որոնք, Աքվերաֆիբոյի հետ համախոր-
հուրդ, քաղաքը իրեն հանձնած էին: Ծաշկե-
րույթը վերջանալուն մեծ վեզիրը ճամբեց իր
հյուրերը: սրահին դուռը կրացվեր նեղ սան-
դուղի մը վրա, ուրկե միակ անձ մը կրնար
անցնիլ: Սանդուղին վերջին աստիճանին վրա
կպասսեր դահիճը, որ եկողին գլուխը թուցու-
նայվեցավ միայն Աքվերաֆիբոյին՝ որ-
պեսդի սպաննվի Պոլսո մեջ¹⁵⁴:

Հայ աղքատները ավելի մանրամասն
կպատմեն այս զարհուրելի սպանդը: Կաֆա
գրված և հետո նոր-նախիջեան տարված հին
«Յայսմաուրք»-ի մը մեջ, Ս. Սարգսի վկա-
յաբանութենեն անմիջապես հետո «Պատմու-
թիւն Աննցուց Քեֆեի» խորագրով հատված

մը կա, որ կխոսի 1475-ի եղերական դեպքե-
րուն մասին ալ, ըսելով, որ թուրքերը 300
նավերով եկան պաշարել Կաֆան¹⁵⁵:

Ներսես տաղասաց, որ ականատես է եղած
Կաֆայի գրավման թուրքերու կողմէ 1475-ին
և որ զայն նկարագրած է «Ողբ մայրաքաղա-
քին Կաֆայու խորագրով քերթվածի մը մեջ,
կգրե ինքն ալ:

Անխնայ ժողովեցին

գերկու եղբարքն ի մէկ տեղին,

Ջնոր պըսական հարսն ու փեսին

լալով առին ի նավ դրին,

Հայրըն ու մայրըն շատ լացին

և գլխաբաց ի հետ գնացին¹⁵⁶:

Եվ վերջապես 1475-ին ընդօրինակված Ա-
վետարանի մը մեջ (Մատենադարան, թիվ
7831, էջ 295ա—բ) հիշատակարանը կըսե.
«Ի թվականիս Հայոց ԶԻԴ (1475) յունիս ամ-
սոյ 2 (6) իսմայէլացիքն առին զԿաֆայն և
գերեցաւ Սուրբ Աւետարանս և բերաւ ի յԼս-
տամպալ. և ես՝ Աւետիքս քնեցի և եղի
Սրբոյն Սարգսի տաճարն, ի յիշատակի վե-
րացման հաշին կիրակին: Զվերջին ստացաւ
Սուրբ Աւետարանիս ի յայլազգեացն որ գե-
րեալ ի Կաֆայէն և բերին ի յԼստամպալս:
Եւ ես Աւետիքս որ եմ Տրապիզոնցի և եմ
այժմ սուրկուն ի յԼստամպալս ի Յայթթո-
սիայի մահալան, ի դուռն Սրբոյն Սարգսի
զաւրաւարին»¹⁵⁷:

Կաֆայի գրավումն հետո վեց ամիս շան-
ցած, թուրքերը ձեռք անցուցին Մանգուպն ալ:
բայց չի գիտցվիր, թե այստեղն ևս հայեր
փոխադրված են Պոլիս:

Կաֆայի գրավման նախօրյակին, 1456-ին
և 1458-ին Կաֆայի մեջ ընդօրինակված ձե-
ռագրերու հիշատակարաններ Մաղաքիա
արքեպիսկոպոս մը կհիշեն այնտեղ իբրեւ հա-
յոց առաջնորդ, «ի հայրապետութեան Տեառն
Դրիգորի ամենայն Հայոց»¹⁵⁸:

... Դժբախտ բան է, երբ մարդ իր ամեն
մեկ քալին դեմ հանդիման կուգա վեճերու,
որոնց մեջ դավանական կիրքը միշտ խառնը-
ված է, և ստիպված է հաճախ արձանագրել և
այդ վեճերը...

Պոլսո անցյալը, ավա՜ղ, նման շատ վեճեր
դեռ պիտի հաներ մեր դեմը...

(Մառութեան)

155 2. Միւնստ Բժշկյան, «Ճանապարհորդութիւն ի
Հեհաստան...», էջ 339—340:

156 2. Քյուրտյան, «Ողբ մայրաքաղաքին Կաֆա-
յու», «Բազմավեպ», 1957, մարտ—ապրիլ, էջ 83:

157 1. Խաչիկյան, «Հիշված աշխատութիւն», էջ 289:

158 Անդ, էջ 77 և 111 (Մատենադարան, ձեռ. թիվ
7831 և թիվ 7760):

152 Համենք, հիշված աշխատութիւնը, Գ, էջ 198:

153 Տե՛ս մեր „Armenia Maritima“, Bucuresi, 1941.

154 Համենք, հիշված աշխատութիւնը, Գ, էջ 197:



ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՅԱՆ
(Փոխամուրդ Արարատյան բեմի)

ՈՇԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ-ՄԱՇՏՈՑ ԵՎԵԼԵՑԻՆ

1. ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցին մեր հնագույն և պատմական եկեղեցիներից մեկն է:

Ըստ պատմական տվյալների, Ս. Մեսրոպի գերեզմանի վրա տարբեր ժամանակներում կառուցվել են երեք անգամ վկայարան-եկեղեցիներ, առաջինը Վահան Ամատունու կողմից 441 թվականին, երկրորդը Փյոնպոս Աղբակեցու (1635—1655) կողմից 1639—1645 թվականներին և երրորդը Գևորգ Դ-ի (1866—1885) կողմից 1873 թվականին:

Խորենացին Ս. Մեսրոպի մահվան մասին գրում է. «Սուրբ Սահակի վախճանվելուց վեց ամիս հետո, մեհեկան ամսի տասներեքին, երանելի Մեսրոպն էլ այս աշխարհից փոխվեց Վաղարշապատ քաղաքում»¹:

Ս. Սահակ վախճանվել է 439 թվականի հայոց նավասարդ ամսի 30-ին, որը համապատասխանում է սեպտեմբերի 7-ին, հինգշաբթի, իսկ Ս. Սահակի վախճանումից վեց ամիս հետո, ինչպես հիշատակում է Խորենացին, Վաղարշապատում վախճանվում է Ս. Մեսրոպ Մաշտոցը, մեհեկան ամսի 13-ին, որը համապատասխանում է 440 թվականի փետրվարի 17-ին, շաբաթ²:

¹ Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1981, էջ 349:

² «Արարատ», 1912, № 5—6, էջ 500—503: Տե՛ս նաև «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների մոզմամբ, Երևան, 1982, էջ 185:

Կորյունը և Խորենացին վկայում են, որ Ս. Մեսրոպն իր կյանքի վերջին օրերն անց է կացրել Վաղարշապատ մայրաքաղաքում՝ Ս. Էջմիածնի Կաթողիկոսարանում, կաթողիկոսի տեղապահի պաշտոնում:

«Սահայն ավետարանական ընթացքն ու Սուրբ Եկեղեցու վերակացությունը Աստծու շնորհով առանց պակասության առաջ էր տանում և ավելի ևս հոգում, ջանք էր թափում, ամենքին հորդորում»³:

Որ իրոք Ս. Մեսրոպը Ս. Սահակից հետո եղել է կաթողիկոսական տեղապահ, այդ հարցը բազմակողմանիորեն քննարկել է մեծանուն հայագետ Զ. Աճառյանը իր «Մեսրոպ Մաշտոց արժեքավոր աշխատության մեջ»⁴:


2. Ս. ՄԵՍՐՈՊԻ ՄԱՀՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

Ս. Մեսրոպ իր մահվան նախօրյակին հիվանդանում է:

Հիվանդության գույժը ցնցում է Հայոց աշխարհը: Հայ մեծ ուսուցչի և կրթական առաջյալի սևարը շրջապատվում է նրա աշակերտներով, որոնց անունները հիշատակում է Կորյունը. «Դրանք են Հովսեփը և Թադիկը հոգևորականներից, իսկ ղինվորականներից Վահան Ամատունին՝ Մեծ Հայաստանի հազարապետը, Հմայակ Մամիկոնյանը՝ քաջ Վարդանի եղբայրը, բոլորը Ս. Մեսրոպի ձեռքի տակ սնված և ուսած անձեր»:

³ Կորյուն, «Վաղար Մաշտոց», Երևան, 1962, էջ 127:


⁴ Տե՛ս «Էջմիածին», 1962, Ա, էջ 24:



Օջականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին

Կորյունը, որպես ականատես, Մաշտոցի մահվան վերջին րոպեների մասին հայտնում է հետևյալը. «Եվ մինչդեռ սրբի ձեռները կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր, շողավոր ձևով սքանչելի տեսիլ հրե-

վաց այն ապարանքի վրա, որ վախճանվում էր երանելին. և ամեն մարդ ինքը տեսավ այդ, և ոչ թե ընկերը պատմեց, Եվ նա սրբերին և եր ու միաբանություն ավանդեց, մերձավորներին ու հեռավորներին օրհնությամբ



Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանաքարը

պսակեց և հաճույական աղոթքը Փրիստոսին հասցնելով՝ հանգյալով⁶։

Խորհնացին վկայում է, թե Ս. Մեսրոպի աճյունները Հայաստանի ո՛ր մասում ամփոփելու շուրջ վիճաբանություն է ծագում իշխանների և ժողովրդի միջև։ Վիճողները երեք մասի են բաժանվում. առաջին խումբը՝ տարոնցիները, առաջարկում էին Ս. Մեսրոպին, իբրև Տարոնի գավակ, թաղել նույն հողում, Աշտիշատում, Ս. Սահակ Պարթև կաթողիկոսի կողքին։ Երկրորդ խումբը ուզում էր տանել Գողթն գավառը, որտեղ առաջին անգամ

իբր քարոզչության տեղ ընտրել էր Ս. Մեսրոպը (ըստ «Յայսմատուրթ»-ի՝ թաղելու Մասրիվանքում)։ Երրորդ խումբն ուզում էր թաղել Վաղարշապատում, սուրբ Կույսերի վկայաբանների մոտ։ Սակայն Վահան Ամատունին, մեծ Սրբի աշակերտը, որն այն ժամանակ Հայոց աշխարհի հազարապետն էր, հաջողեցնում է Ս. Մեսրոպի մարմինը իր սեփական գյուղը, Օշական ամփոփելը⁷։

Ս. Մեսրոպի հուղարկավորության թափուրին Վաղարշապատից մինչև Օշական մասնակցել է հոգևորական և աշխարհական մեծ բազմություն, վառված կանթեղներով ու ջահերով, սաղմոսներով, օրհնություններով և հոգևոր երգերով, Խորենացու ակնարկած խաչանման լույսը, որը Մեսրոպի մահվան պահին ծագել էր Վաղարշապատում, թաղումից հետո աներևութացել է։

Ի միջի այլոց հիշենք, որ Հ. Ղ. Ինճիճյանը այլ կարծիքի է։ Նա պնդում է, որ Մեսրոպ թաղված պիտի լինի Մշո Հացիկ կամ Խասիկ գյուղում⁸։

Իսկ Հ. Ներսես Սարգսյան, իր «Տեղագրություն»-ի Փոքր և ի Մեծ Հայաստանի աշխատության մեջ⁹ կարծում է, թե Ս. Մեսրոպի նշխարների մի մասը թաղված է Հացիկ գյուղի Ս. Մեսրոպի անվան եկեղեցում և նույնիսկ ենթադրում է, որ առաջ Ս. Մեսրոպի մարմինը այնտեղ է թաղվել և հետո է տարվել Օշական։

Հ. Աճառյանը ամենայն իրավամբ հերքում է այդ ենթադրությունը, որը բնավ հիմք չունի, քանի որ պատմագիրների վկայությամբ չի հաստատվում. Հացիկի Ս. Մեսրոպ եկեղեցին պարզապես նվիրված է եղել մեծ Սրբի անվան, ինչպես ուրիշ զանազան վայրերում գտնված համանուն եկեղեցիները¹⁰։

Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա Օշականում առաջինը Վահան Ամատունին է, որ Սրբի հիշատակը հավերժացնելու համար, նրա մահից 2—3 տարի հետո, գերեզմանի վրա կառուցում է առաջին գեղեցիկ վկայաբանը։

Եիսկ երեք տարի անցնելուց հետո՝ Վահան Ամատունուն հաջողվեց՝ քրիստոսասեր ջանքով սքանչելի տաճար կանգնել տաշած, քանդակած քարերով և տաճարի ներսում շինեց Սրբի գերեզմանը։ Նա Փրիստոսի կենդանաբար մարմնի և արյան սեղանի համար վայելուչ, գույնզգույն ոսկով և արծաթով ու թան-

⁶ Մովսես Խորենացի, էջ 349—350.

⁷ Հ. Ղ. Ինճիճյան, «Աշխարհագրություն» լսրից մասանց աշխարհի, մասն Ա, Ասիա, հատ. Ա, Հայաստան, էջ 191.

⁸ Հ. Ն. Սարգիսյան, «Տեղագրություն»-ի Փոքր և ի Մեծ Հայաստան, Վենետիկ, 1884, էջ 236—237.

⁹ «Էքզիստան», 1962, Ա, էջ 86.

¹⁰ Մուրյան, էջ 128.

կազին քարերով պայծառափայլ անոթներ պատրաստեց ի հիշատակ, և մի տեղ հավաքված բոլոր սրբերի հետ Քրիստոսի խաչակրոն վկայի, հրանելի Մաշտոցի մարմինը փոխադրեց տաճարի գերեզմանը: Եվ նրա Թաթիկ անունով աշակերտին, մի զգաստ ու բարեպաշտ մարդու, նղբալըների հետ, հրանության հասած սրբի համար սպասավոր կարգեցին ի փառս Աստուծու¹⁰:

Ս. Մեսրոպի մահվան հաջորդ տարին իսկ սահմանվեց հատուկ տոն նրա հիշատակին. Սրբի գերեզմանը դարձավ ուխտատեղի:


Կորյունը կանգնեցրեց նրկորդ հույակապ գրական հուշարձանը Ս. Մեսրոպի մասին 144-ին իր Վարդ Մաշտոցի աշխատություններով:

Հետագայում, Օշականում Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի վրա Վահան Ամատունու կառուցած եկեղեցու մասին պատմության մեջ որևէ հիշատակության չենք հանդիպում մինչև Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը (1635—1655):

Հովհաննես Եպիսկոպոս Շահաթունյանցը (Վստորագրություն Կաթողիկե էջմիածնի և հինգ զատուցն Այրարատայ, Բ, էջ 76—83) և Հ. Ղ. Ալիշանը (ՎԱյրարատ, էջ 189—194) ենթադրաբար Օշականի եկեղեցու առաջին ավերումը դնում են Վերջին մետաքսի ամի շինության, նենգութեամբ Վասակայ հակառակորդին Վահանայ, որոց ուրացնալ ջոկք՝ ընդ այլոց արքունի ձմերուցաց աւերեցին և աղամուրն Օշական, քստ նդիշեի. Վարդ Եթէ և զայն արարեալ էր՝ հաւանելի է, Եթէ Վահան կամ պայազատ նորին՝ յետ դարձին նախարարացն ի գերութենէն պարսից՝ նորոգէր և վերականգնէր, սակայն ոչ յիշատակ գտանի ի դիրս և ոչ հին արձանագիր յեկեղեցուջն¹¹:

Ենթադրվում է, որ իշխան Սահմադինի ձեռքով մի նորոգություն կատարվել է 1277 թվականին Օշականում, բայց թե ո՞ր է հիշված՝ հայտնի չէ¹²:

Մատենագրական և բանասիրական գրականության մեջ Օշականում Ս. Մեսրոպի գերեզմանի վրա Վահան Ամատունու կառուցած եկեղեցու մասին այսքան տեղեկություններ միայն ունենք: Այդ եկեղեցին ժեղարում հիշատակվում է Առաքել վարդապետ Դավրիժեցու մոտ՝ քանդված և խաբխրված: Փիլիպոս Աղբակեցին ժամանակին հիմնովին վերանորոգում է Օշականի եկեղեցին:



Օշականի եկեղեցու, Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզմանի նախամուտքում, նորակերտ քալալովա Ռուշարձանը, Ռայոյից այրուբենով

3. ՓԻԼԻՊՈՍ ԱՂԲԱԿԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՎ ՍՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅԾՈՒՄԸ

Առաքել Դավրիժեցին վկայում է, որ Ս. Մեսրոպի գերեզմանի եկեղեցու վերանորոգությունն սկսվում է 1639 թվականին և ավարտվում 1645 թվականին, Փիլիպոս կաթողիկոս Աղբակեցու օրոք:

ՎԱյ և զհույակապ և զայնանիստ և զբարձրաբերձ տաճար փառացն Աստուծոյ, զհանգրստարան մեծի վարդապետին Սրբոյն Մեսրոպայ այնորիկ, որ նգիտ զգիրս Հայոց, որ պէս և ըստ պատմութեան նորա ճառեն թէ՛ տարեալ հանգուցին զնա ի դիւզն՝ որ անուանի Օշական. արդ՝ այս տաճար հանգստարանի Սրբոյն Մեսրոպայ վարդապետին ի վաղ ժամանակաց բովանդակ տանիքն փուլեցեալ իջեալ էր, և միայն աւագ խորանն էր մնացեալ ծածուկ, և ի ժամանակս կաթողիկոսութեան իւրոյ սուրբ հայրապետն Փիլիպոս սկսաւ զայն ևս նորոգել՝ որ և կատարեց:

¹⁰ Կորյուն, էջ 129:

¹¹ Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 189:

¹² Հ. Անտոյան, «Մեսրոպ Մաշտոց», «էջմիածին», 1962, Ա, էջ 37:

րեաց բազում ծախիւք և աշխատութեամբ, խարտեալ քարիւ և մածուցեալ կրով մինչև աւարտեաց զգրվանդակն ի թուականիս մերոյ ՌՂԴ, ի փառս Աստուծոյ»¹³։

Փիլիպպոս կաթողիկոսի վերանորոգած Օշականի եկեղեցին իր գոյութիւնը պահպանել է շուրջ երկու հարյուր տարի։ Այսպես, Հովհաննես եպիսկոպոս Շահաթունյանցը խոսում է 1840 թվականին Օշականի եկեղեցում կատարված վերանորոգչական աշխատանքների մասին. «Յայս գիւղ ամփոփեցաւ մարմին արգիւնաշատ սուրբ վարդապետին Մեսրոպբայ... նորոգեաց Փիլիպպոս կաթողիկոս յամի 1659. այլ կամարալարիկ նորա խոնարհեալ՝ փայտիւք ետուն ծածկել ի ժամանակս մեր. և են ամբողջ որմունք նորա կարեւոր բարձրութեամբ, և միջոց նորա բաւական ընդարձակ՝ լեալ յառաջագոյն առանց սեան. ունի զմի և եթ սեղան սրբազան խորհրդոյն, և զերկուս աւանդատունս. յորմն հիւսիսոյ արտաքուստ զբրգունս՝ որք կիսով չափ խոնարհեալ են»¹⁴։

Օշականի եկեղեցին ընայած վերանորոգվել է 1840 թվականին, 60-ական թվականներին սակայն այն շատ վատ դրութիւն մեջ է եղել։ Ներսէս Ե Աշտարակեցի 1850 թվականին կոնդակ է գրում և իր ցանկութիւնն է հայտնում Մինոգիին՝ Օշականի եկեղեցին նորոգելու մասին, որը սակայն ինչ-ինչ պատճառներով չի հաջողվում¹⁵։

Որ իրոք Օշականի եկեղեցին 1860-ական թվականներին վերին աստիճանի անմխիթար դրութիւն մեջ է եղել, այդ երևում է նաև Նալբանդյանի հայտնի Օշականն բանաստեղծութիւնից, ինչպես հայտնի է, Նալբանդյանը 1860-ական թվականներին Հնդկաստան ուղևորվելիս պաշտոնական գործով, եղել է Ս. Էջմիածնում, ապա ուխտի է գնացել Ս. Մեսրոպի գերեզմանին։ Տեսնելով եկեղեցու, մանավանդ մեծ Սրբի գերեզմանի ողբալի դրութիւնը, իր սրտի դառնութիւնն ու բողոքն է արտահայտել հիշյալ բանաստեղծութեամբ.

«Որ ազգին դիր պարգենց, կյանք տվեց
հայոց լեզվին,

Ազգը նորա զլացալ գիր ընծայել անշուք
շիրմին»։

Հանգամանքների բերումով այնպիսի անբարեկարգ դրութիւն մեջ են մտնել Ս. Մեսրոպի գերեզմանը և եկեղեցին, որ Նալբանդյանը իրավացիորեն բողոքել է ազգի ապե-րախտութիւն դեմ.

¹³ Առաջին վարդապետ Դաւիթբեկ, «Պատմութիւն», վաղարշապատ, 1888, էջ 351—352.

¹⁴ Հովհաննէս Եպիսկոպոս Շահաթունյանց, «Մտորարարութիւն», Թ, էջ 77.

¹⁵ ՏՎ՝ «Անարատ», 1879, էջ 481.

«Բայց ազգին որ նա սիրեց, որի համար շատ քրտնեցաւ.

Սյդ ազգին ես շեմ ներում, որ Մեսրոպին
այդպես մոռցաւ.

Գետնափոր այն բեմին տակ սողալով՝ պետք
է մտնել,

Կամ անթափանց խավարում քարն մոմով՝
տեսանել»¹⁶։

Գետրգ Դ մեծագործ կաթողիկոսը գործնական բայերի է դիմում։ Նա որոշում է հավերժացնել Ս. Մեսրոպի հիշատակը՝ հիմնովին կառուցել նոր և փառավոր եկեղեցի։

4. ԳԵԼՈՐԳ Դ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԿԱՌՈՒՑՈՒՄ Է ՕՇԱԿԱՆԻ ԱՅԺՄՏԱՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Համաձայն Հայկական ՍՍՌ Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի կաթողիկոսական դիվանի (թղթապանակ 214, վավերագիր 111), Սինոդի անդամ Գրիգոր վարդապետի հայտարարութեամբ, Գետրգ Դ կաթողիկոսը 1868 թվականին ձեռնամուխ է լինում Օշականի եկեղեցու շինութիւնն աւանդապատական աշխատանքներին, Այսպես, հիշյալ Գրիգոր վարդապետը զեկուցում է Գետրգ Դ կաթողիկոսին, որ Օշականի եկեղեցու համար էջմիածնի կողմից պատվիրված քարերը արդեն կտրվել են, հղկվել և քարերի ընդհանուր արժեքն է 7 000 ոտւրլի։

1868 թվականից մինչև 1872 թվականը, Ս. Էջմիածնի Սինոդը ես նախապատրաստում է այլ աշխատանքներ Եկեղեցու շինարարութեան գործը հանձնվում է Ալեքսանդրոպոլի հույն վարդապետներին։

Գետրգ Դ կաթողիկոսը 1872 թվականին գրում է իր սրբատառ կոնդակը, հրավիրելով հայ ժողովրդին նյութապես սատարելու Օշականի եկեղեցու կառուցման.

Նույն թվականին, «Անարատ» ամսագրում (հուլիս, էջ 285) հրատարակվում է մի փոքր հոդված՝ «Դամբարան և եկեղեցի Սուրբ Մեսրոպի թարգմանի հՕշական խորագրով, որի մեջ ծանուցվում է, որ Օշականի եկեղեցու շինութեան համար նշանակված է հատուկ հանձնաժողով Օշականի գյուղացիներին, և թե եկեղեցու շինարարական աշխատանքները պետք է սկսվեն 1873 թվականի գարնանը.

Իրոք որ Օշականի եկեղեցին 1873 թվականին կիսակործան մի եկեղեցի է եղել, ինչպես այդ մասին հայտարարութիւն մեջ որոշակիորեն ասվել է. «Սակայն ո՛չ ապագեն համայն հայաղնայաց աններելի նախատինք է նույն երանելւոյն դամբարանին այժմյան անշուք դրութիւնը և եկեղեցւոյն կիսավեր և ողբալի վիճակը. արդյոք զգայուն ազգասերի

¹⁶ Մ. Նալբանդյան, «Երկեր», Երևան, 1963, էջ 82.

սիրտ կենրոն՝ չճանաչելու և աշխարհ կհանդուրժեն՝ չփղձկել հարստացում՝ երբ հանդիպին այցելության Ս. Մեսրոպյան դամբարանին և եկեղեցվուն կիսակործան շինվածույն ոգնտուղոր տեսարանին»¹⁷։

Գևորգ Դ-ի կողմից Օշականի եկեղեցու վերաշինությունն ավարտվում է 1879 թվականին, նույն թվականին Վերադարձում ամսաթերթը (էջ 461) ուրախությամբ ավետում է հայ ժողովրդին Օշականի եկեղեցու ավարտումը։ Գևորգ Դ կաթողիկոսը Բյուրականի իր հայրապետական ամառանոցից վերադարձին այցելում է Օշական գյուղը, անձամբ տեսնում նորակառույց եկեղեցին և իր գոհունակությունն է հայտնում ճարտարապետին։ Վերադարձում ամսագիրը չի հաղորդում ղեկավարող ճարտարապետի, շինարարների անունները, հոգաբարձությունը և մասնավոր գյուղի հասարակությունը, որոնք իրենց նվիրատվություններով, բացի շինարարությունից և իրա աշխատող օտար վարպետներին ամեն օր կերակրելուց, եկեղեցու շինարարության համար իրենց միջոցներով հայթայթում են կիր, ավազ և այլ շինանյութեր։ Բացի դրանից, Օշականցիք ձրիաբար իրենց սալերով բերում են բոլոր շինանյութերը և աշխատում են եկեղեցու վրա առանց վարձատրության։

Գևորգ Դ կաթողիկոսը հատուկ կոնդակով որոշում է եկեղեցու օծումը կատարել նույն թվականի հոկտեմբերի 21-ին։

Վերադարձում-ի հոգվածագիրը հիացմունքով է նկարագրում եկեղեցու օծման հանդեսին ներկա եղող ժողովրդի զգացմունքները։ Շատ վատացող այրեր և կանայք այնպիսի բարեպաշտական ցույցեր կերենցնեին, որ հիրավի կհիշեցնեին հայկական նախնի աստվածաշատությունը ոսկեդարը։

Օծման հանգսից և սուրբ պատարագից հետո, եկեղեցու հոգաբարձության կողմից արվում է ճաշկերույթ և լինում են նվիրատվություններ նորակառույց եկեղեցու պակասները լրացնելու համար։ Տեղում գոյանում է 560 ուրվի։

Օշականի եկեղեցու արևելյան մասում, պատարագի սուրբ սեղանի վրա դնվող զանգակատան շինարարությունը ավարտվում է 1884 թվականին։

Եկեղեցու կառուցման ավարտին, արևմտյան դռան վրա, սպիտակ մարմարյա մի մեծ քարի վրա դրվում է արձանագրություն հետևյալ բովանդակությամբ։

«Ողորմալքեամբ Աստուծոյ սրբազնակառու շայնապետ Ամենայն Հայոց Ս. Տ. Գևորգ Դ Կաթողիկոս վերականգնեց ի հիմանց զայս եկեղեցի Օշական գեղջս և զդամբարան Սրբոյն

Մեսրոպյան քարգմանչի մեռոյ, որ ի սմա, տօբ հայոց Ռուսաստանի, յամի 1879 և Հայոց ՌՅԻԻ»։

1884 թվականին Ս. Մեսրոպի գերեզմանի վրա դրվում է նաև մարմարյա տապանաքար¹⁸, Ղարաբաղի առաջնորդ, պոլսեցի Անդրեաս Եպիսկոպոսի ծախսով և Մեսրոպ Եպիսկոպոս Մմբատյանի ձեռքով. «Իսկ ի վերայ հանգստարանի Ս. Մեսրոպյան՝ յամի 1884 եղաւ ձեռամբ Մեսրոպյան Եպիսկոպոսի Մմբատեանցի՝ վէժ կճեայ, ըստ կտակի Անդրէի Եպիսկոպոսի, առաջնորդի Գարապաղի և գրեցաւ յիշատակն ի վերայն»¹⁹,

Տապանաքարը կրում էր հետևյալ արձանագրությունը.

«Յամի Տեառն 441, փետրվարի 20, Վահան Ամատունի իշխանն ամփոփելով աստ յՕշական ըզմարմին սրբոյ վարդապետին մեծի Մեսրոպյան թարգմանչին՝ կառուցեալ է ի վերայ դամբարանիս յանուն նորին զեկեղեցիս, զոր նորոգեաց յամի 1640 Փրիպպոս կաթողիկոս և ի վերջնումս յամի 1875 նորոգեաց Գևորգ Դ կաթողիկոսն, տրօք ժողովրդեան հայոց նրեանայ և այլ վիճակացն Ռուսաստանի։ Իսկ դտապանս կանգնեաց ի յիշատակ՝ Կ. Պոլսեցի Անդրէաս արքեպիսկոպոսն յամին 1884 է Հայոց ՌՅԻԳ»²⁰,

Համաձայն Հ. Ղ. Ալիշանի տեղեկության, 1884 թվականին Մեսրոպ Եպիսկոպոս Մմբատյանի ձեռքով նորակերտ դանգակատան գմբեթի վրա կանգնեցվում է մարդալսի բարձրությունը մի խաչ, որը նվիրել էին թիֆլիսեցի Ա. Թախրյանները²¹։

Օշականի եկեղեցին իր այժմյան վիճակում միջակ մեծություն մի շենք է, քաղաքի եկեղեցիներից ավելի զեղեցիկ, որն իր մեջ կառուցված տեղավորել 800 հոգի։ Պատերը բավականին բարձր են, առանց սյուների։ Նախկին եկեղեցու մասին Կորյունը շատ խորաններ է հիշատակում, սակայն այժմ նորի մեջ կամային մի սեղան, որի տակ գտնվում է Ս. Մեսրոպի դամբարանը, որի մուտքն է բեմի աջ կողմը, որտեղ և գրվելիս է եղել ընթերցվածների գրակալը։ Այդ մուտքը մինչև 1960 թվականը փակ էր, այժմ բացվել է, սակայն մուտքը դարձյալ այդտեղից չէ, այլ ձախակողմյան ավանդատնից։ Կան նույնպես երկու ավանդատներ կամ խորաններ երկու կողմերում, որոնք ըստ Ալիշանի կարող են լինել Կորյունի հիշատակած խորանները։

18 Անտոյան՝ այն գնում է 1882 թվականին, որը ճիշտ չէ։ Տե՛ս «Էջմիածին», 1982, Ա, էջ 37։

19 Հ. Ղ. Ալիշան, «Այրարատ», էջ 491։

20 Մարմարյա այս հին տապանաքարը մեծ է դամբարանում, ինչպես այն իր տեղում կոնսերվացել է։

21 Տե՛ս «Այրարատ», էջ 191։

17 Վերադարձ, 1872, էջ 285։

Եկեղեցին ամբողջությամբ կառուցված է սևագույն շրաքխային քարից՝ տուֆից. ունի երեք դուռ՝ հարավային, արևմտյան և հյուսիսային, և 11 լուսամուտ, բացի զանգակատան փոքր լուսամուտներից:

Եկեղեցու հարավային կողմում գտնվում է վահան Ամատունի իշխանի գերեզմանը:

Հովհաննես Կպիսկոպոս Շահաթունյանցը²² և Հ. Ղ. Ալիշանը²³ միաձայն հաստատում են, որ վահան Ամատունի թաղվել է Օշականում. «Մերձ յեկեղեցին ի հարաւոյ իբրև քառասուն կանգուն հեռու է բուրգ մի հնագոյն շինուածովք ի կոփածոյ քարանց և կից նմին յարևելից փոքրիկ կամարայարկ տեղի ցածագոյն՝ յորոց տանեաց վերայ կանգնեալ խաչվճմն անկեալ՝ կայ միայն սիւնաձև պատուանդանն. յայսմ տեղոյ աւանդին րնակիշըն լինել գերեզմանի մեծի իշխանին Վահանայ Ամատունւոյ»²⁴,

Վահան Ամատունու գերեզմանը Օշականի եկեղեցու վերանորոգության ժամանակ, 1870-ական թվականներին, շատ վատ պրոթյան մեջ է եղել: Այսպես, 1879 թվականի «Արարատ» ամսագրում ցանկություն է հայտնվում, որ վերակառուցվի այն և այդ մասին հայրապետական պաշտոնաթերթը հայ ժողովրդին անում է հետևյալ կոչը. «Նորոգության կարոտ է Վահան Ամատունի Հայկազն մեծ իշխանի և սպարապետի դամբարանը, որ 15 քայլ հեռի է եկեղեցուց և շատ անշուք դրությամբ կմնա տակավին, ուստի կհրավիրեն Վահագն Հայրապետը (Գևորգ Գ—Վ. Վ.) հայրենասեր և հայրենական պարծանքների բեկորներին գին զնոդ հայրերն արժանավոր հիշատակարանով հարգել մի փառավոր հայի դամբարանը»²⁵,

Վահան Ամատունու գերեզմանի վրա այժմ գոյություն ունեցող տապանաքարը և նրա վրայի կոթողը կառուցվել են 1884 թվականին, Հետագայում, 1913 թվականին, Օշականի եկեղեցու բակում կառուցվում է նաև դպրոց, որն այժմ կոչվում է Օշականի Մեսրոպ Մաշտոցի անվան դպրոց:

5. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎԵՐԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Վազգեն Ա Վահագն Հայրապետի օրոք էլ, համաձայն իր անդրանիկ կոնդակի ոգու՝ «Պիտի Նորոգենք մեր հայրենի վանքերն և եկեղեցիները», հիմնովին վերանորոգման ենթարկվեցին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցին, Սրբի տապանաքարը և շրջապատը:

Վերջին մի քանի տասնամյակներում Օշականի եկեղեցում վերանորոգություններ չէին եղել: Այդպիսով եկեղեցու ներսում և դրսում շատ տեղեր կարիքն ունեին վերանորոգման:

Վահագն Հայրապետի նախադաշնության տակ գործող Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովը 1960 թվականին իր ծրագրում նախատեսել էր նաև Օշականի եկեղեցու և Սրբի դամբարանի վերանորոգման, եկեղեցու սալահատակման, ներքին բարեկարգության, հարավային մայթի սալահատակման և եկեղեցու շուրջ ամբողջ շրջափակի պարսպապատման աշխատանքները:

Համաձայն ծրագրի, 1960 թվականի Մայր Աթոռի շինարարական տարում Օշականի եկեղեցում կատարվեցին հետևյալ աշխատանքները. պարսպապատվեց եկեղեցու հողամասը 310 գծային մետր Արթիկ տուֆի սրբատաշ քարերով, պարիսպը արևմտյան կողմից ձևավորվեց մետաղյա ճաղերով, սալահատակվեց եկեղեցու հարավային մայթը գեղնավուն մաքուր տաշած տուֆ քարերով, եկեղեցու ներսը, ամալ սեղանի տակ, որտեղ գտնվում է Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, ձևավորվեց բազալտ սրբատաշ քարից, ամբողջությամբ սալահատակվեց հատակը բազալտ քարով, վերականգնվեց դամբարանը իր նախկին տեսքով, քերելով ծեփը, ինչպես նաև թաղի վրա կանգնվեց Նոր, բազալտ քարից տապանաքար՝ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց, 361+440» տապանագրությամբ: Անդրեաս արքեպիսկոպոսի կողմից 1884 թվականին գետեղված մարմարյա տապանաքարը, որպես սրբագործված հնություն, Վահագն Հայրապետի հրամանով մնաց դամբարանում:

²² Շահաթունյանց, հիշված աշխատությունը, էջ 80:

²³ «Արարատ», էջ 91:

²⁴ Շահաթունյանց, հիշված աշխատությունը, էջ 80:

²⁵ «Արարատ», 1879, էջ 481:

Դամրարան տանող նախամուտքը իր հատակով և աստիճաններով վերակառուցվեց. դեռևս գտնվեց բազալտյա հուշարձան, որի վրա քանդակվեց Մեսրոպի իսկ հորինած երկաթագիր այբուբենը, որի նախագծի հեղինակն է ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանը:

Եկեղեցու արևմտյան դուռն վրայի վերնատունը հանվեց, որը փայտից էր, հնացած:

Եկեղեցին ներսից լրիվ վերանորոգվեց: Պատարագի սուրբ սեղանը, որը փայտից էր, հավանաբար Գեորգ Դ-ի ժամանակից, հիմնովին փոխվեց, փոխարինվեց նոր, իտալական սպիտակ մարմարյա սեղանով, որի հեղինակն է Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ Ա. Գալիկյանը, իսկ կառուցողները՝ Մայր և որդի Գեորգ և Նազար Պալյանները: Սեղանի այս կառուցումը պատիվ է բերում շինարար Վեհափառ Հայրապետի անվանը:

1960 թվականին պետեղված բազալտե տապանաքարը հանվեց և 1962 թվականի սկզբներին դրվեց այժմյան սպիտակավուն մարմարյա տապանաքարը՝ ճարտարապետ Լ. Ուդոյանի նախագծով:

Եկեղեցու վերանորոգության ծախսերը հոգացին Միլանոյում բնակվող Հայկ և Քորդոմ Ղազարոսյան եղբայրները: Նույն բարերարների նվիրատվությամբ, եկեղեցին դարձարվեց նաև մեծ ջահով և վարագույրով: Բարերարները խոստացան նաև հոգալ եկեղեցու որմերը Ս. Մեսրոպ Մաշտոցի կյանքի դրվագներով նկարազարդելու ծախսերը:

Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին, պատմական այսպիսի անցյալ ունենալով, այժմ գտնվում է Ս. Գրիգոր Լուսավորչի արժանավոր հաջորդ, նորին Ս. Օժոթյուն Տ. Տ. Վազգեն Ա Շինարար Հայրապետի անմիջական հոգատարության ներքո: Վեհափառ Հայրապետը միշտ այցելում է Օշական, աղոթում մեծ Սրբի գերեզմանի վրա և ի թիվս այլ վանքերի և եկեղեցիների, պայծառացնում է այս պատմական և բովանդակ հայության սրտին մոտ եկեղեցին, Ս. Մեսրոպի անվամբ և գործով կրկին անմահացած և նվիրականացած:





Էջմիածին.—Մյասնիկյանի անվան փողոցը

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ—ԷԶՄԻԱԾԻՆ

Արարատյան դաշտի կենտրոնում, Մասիս-ների հայացքների ներքո, հանդարտահոս Մեծամորի ափին, փոված է Հայաստան աշխարհի շեն ոստաններից մեկը, պատմական Վաղարշապատը, այժմյան Էջմիածինը։

Հին, շատ հին է այս քաղաքի պատմությունը։

Ոչ ոք չի կարող հաստատ ասել, թե ե՞րբ են մարդիկ այստեղ բնակություն հաստատել։ Անհիշելի ժամանակներից սկսած, այս շենի երդիկներից բարձրացել է ծովսր, վկայելով մարդկային կյանքի զոյություն մասին։

Շատ ջրեր են հոսել Մեծամորի հունով, բազում խորշակներ է տեսել դաշտն Արարատյան, ասպատակվել ու ավերվել են հայ շեները համակ, և սակայն վերստին ավերակների միջից բարձրացել են նրանք, վառել իրենց օջախները, նորից ու նորից կառնել կյանքին՝ մշակել հողը, երազել, տենչացել ու ապրել։

Պատմական առաջին տեղեկություններն ասում են, որ շատ հնում Վաղարշապատի տեղը եղել է մեկ այլ անվան կամ քաղաք, որը

կոչվել է Արտեմետ, հունաց դիցաբանության Արտեմիս կուռքի անունով, որը սկզբում որսի, իսկ հետագային ողջախոհության շատվածն էր, ինչպես հին հռոմեացիների մոտ՝ Դիանան։

Թե ինչո՞ւ է այդ քաղաքը Արտեմետ կոչվել, այդ մասին հաստատ տեղեկություններ չկան մեր պատմիչների գործերում։ Խորենացին թեպետև հիշում է Արտեմետ քաղաքը, սակայն չի ասում, թե որտեղի՞ց է առնված այդ անունը և ո՞վ է կառուցել այդ քաղաքը։ Նա Արտեմետ քաղաքը կապելով հայոց Վարդգես իշխանի անվան հետ, կոչում է այն «հզոր աւան Վարդգէսի» և գրում. «Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց գաւառէն, եկեալ նստաւ զԵրէզ քլորով, զԱրտիմէտ քաղաքաւ, զՔասաղ գետով, կռել կոփել զգուռն Երուանդայ արքայիս» (Բ գիրք, ԿԵ)։

Պատմիչները վկայում են, թե Վարդգես իշխանը, որը քեռայրն էր Երվանդ արքայի, Քրիստոսից դեռ հինգ և կես դար առաջ, հիմնովին նորոգում է Արտեմետը, որը, հավանաբար, ավերված պետք է լիներ, և բնակություն է հաստատում այնտեղ։

Հստ մեր պատմիչների, Արտեմետի տեղը կառուցված Վարդգես ավանը Արտաշես Մեծի և Տիգրան Բ-ի օրոք դառնում է արքունի ձմեռանոց և մնում այդպիսին երկար ժամանակ։ Հետագայում այն քարգանում է, մեծանում, դառնում վաճառաշահ քաղաք, առևտրական կենտրոն՝ շնորհիվ, մասնավորապես, հրեա գաղթականության, որոնք Տիգրան Մեծի բերել է տալիս Երուսաղեմից և բնակեցնում այնտեղ։ Այս մասին հորենացին գրում է. «... յայնժամ եղև քաղաքագեօղ վաճառք... Իսկ թաղաւորն Հայոց Տիգրան զգերութիւն Հրէիցն նստուցեալ յԱրտաւիր և յաւանին Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյս» (հորենացի, Բ գիրք, ԿԵ, ԺԳ)։

Այսպիսով որոշակի է, որ շատ հնում Վաղարշապատի տեղը եղել է մի քաղաք կամ ավան, որը կրել է սկզբում Արտեմետ, իսկ հետո Վարդգես ավան անունները։

Իսկ ե՞րբ է նա ստացել իր բուն անունը՝ Վաղարշապատ։

Մեր թվագրության երկրորդ դարի վերջերին, 197 թվականին, Տիգրան Մեծի որդին՝ Վաղարշ Արշակունի թագավորը՝ պարսպապատում է Վարդգես ավանը և այն վերակոչում է իր անվամբ Վաղարշապատ։

Պատմահայր հորենացին այս առթիվ գրում է. «Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ եւ հօքօ պատուարաւ զԱւանն Վարդգէսի որ ի վերայ Քասաղ գետոյս, եւ անուանեաց Վաղարշապատ, որ և նոր քաղաք» (Բ գիրք, ԿԵ)։

Հետագայում Վաղարշապատը դառնում է թագավորանիստ քաղաք և մնում այդպիսին մինչև Արշակունյաց թագավորության անկումը։

Վաղարշապատում է հաստատել իր գահը հայոց Տրդատ թագավորը, որի օրոք քրիստոնեությունը պետական կրօն հռչակվեց Հայաստանում (301 թ.) և որը Ս. Գրիգոր Լուսավորչի թելադրանքով կառուցել է ավելի Ս. Էջմիածնի Մայր Տաճարը։

Թագավորական պալատը գտնվել է քաղաքի կենտրոնում, Մայր Տաճարին մոտ։ Հետագայում Սիմեոն Կաթողիկոս Երևանցին այդ վայրում շինել է տալիս թղթի գործարան, որի հիմքերը փորելիս հայտնաբերվել են լուսամուտների և դռների մարմարյա բեկորներ, որոնք, հավանաբար, եղել են արքայական պալատի մնացորդները։

Բայց ընդունենք, որ Արշակունյաց այս Ոստանը հագիվ թե այնքան նշանավոր դառնար ու հիշվեր մեր ամբողջ պատմության ընթաց-



Էջմիածին.—Հին փողոց

քում, եթե Ս. Գրիգոր Լուսավորչի պայծառ տեսիլքով չհիմնվեր այստեղ Ս. Էջմիածնի Տաճարը (303 թ.), հայ ժողովրդի Սրբություն Սրբոցը և նրա ազգային գոյատևության խորհրդանիշներից մեկը։

Մինչև ժեղարի առաջին կեսը, Վաղարշապատ քաղաքը բազմաթիվ անգամներ ենթարկվել է ավերածության և ասպատակության օտարերկրյա զավթիչների կողմից և սակայն վերստին ավերակների միջից բարձրացել է, նորոգել իր վերքերը, շարունակել գոյությունը։

Բայց որքան էլ նա վերանորոգվել է, կամ շինվել վերստին, այնուամենայնիվ Վաղարշապատի կավաշեն կերպարանքը մնացել է նույնը, եթե չհաշվենք դանաղան ժամանակներում կառուցված Էջմիածնապատկան շենքերը, որոնք համատարած հյուղակների զանգվածում վեր են խույացել, իբրև իրենց ժամանակի միակ բարեձև շենքեր։

Ու դարձել է Վաղարշապատը գորշ, տխուր մի ավան, որի անհրապույր կյանքը աշխուժացել է միայն Մայրավանքի զանգերի դողանքով և տարեկան մի քանի անգամ տեղի ունեցող ուխտագնացության տոնահանգներով։

Ինչպիսի՞ դառն շեշտ կա Հայր Ղեվոնդ Ալիշանի խոսքերի մեջ, երբ նա գրում է իր ժամանակի Վաղարշապատի մասին մեզնից շուրջ 80 տարի առաջ. «Զիք այլ ինչ նշանաւոր շինուած ի Վաղարշապատ, և ոչ երևելի մնացուած հնութեան, և այս թերևս վասն մեծաւ մասամբ հողակերտ լինելոյ շինուածոցն ի հնումն, որպէս և այժմ են տունքն ի հասարակի, ավելի քան 4500 թուով»։

Ահա հին Վաղարշապատի պատկերը։

Հինգ հարյուր կավաշեն հյուղակներ՝ ռուսներ ի հասարակիս և 3422 շունչ բնակիչներ այնցյալ դարի վերջերին և մեր դարի սկզբներին։

կարծում եմ այս նկարագրությունից հետո անցած ժամանակաշրջանում որևէ բան փոխվեց՝ Վաղարշապատ ավանում. ոչ երբեք: Ամեն ինչ մնաց նույնը՝ կավ, փոշի, չքավորություն, անապահով և դառն կյանք:

Իսկ երբ մեր ժողովրդի արևմտյան հատվածի գլխին պայթեց ահավոր փոթորիկը, ապրիլյան եղեռնը, Վաղարշապատը դարձավ որբերի ու գաղթականների ապաստարան: Մարդիկ մեռնում էին Վաղարշապատի փողոցներում և վանքի պատերի տակ, մեռնում սովից ու համաճարակից:

Համաժողովրդական խեղճության ու դառնության այդ դաժան տարիներին Վաղարշապատի հանրային տնտեսական ու մշակութային հաստատություններն էին, իհարկե Ս. էջմիածինը չհաշված, 1 տարրական դպրոց, 9 որբանոց, 3 գինեւորան և 5 կրպակ...

Սովորաբար էջմիածնեցիներն ասում են, թե դժվար է ներկա էջմիածին քաղաքը համեմատել նախկին շրջանի Վաղարշապատի հետ:

Քաղաքի գլխավոր ճարտարապետ Զավեն Տերտերյանը, որը մի քանի տարի առաջ ավարտելով նրանի Պոլիտեխնիկ ինստիտուտի ճարտարապետական բաժինը, ուղարկվել է այստեղ մշտական աշխատանքի, հանդարտ մոտենում է սենյակի անկյունում գրված մեծադիր հատակագծին: Դա էջմիածին քաղաքի գլխավոր հատակագիծն է:

Նա մեկնաբանում է հատակագիծը՝ այն, ինչ եղել է, ինչ որ արված է և ինչ դեռ պիտի արվի: Ժարտարապետը խոսում է հակիրճ, այնպես, կարծեք սովորական բաների մասին և խոսքը:

Նվ ճարտարապետը պատմում է, թե ի՞նչպես է վերափոխվում էջմիածինը, և թե ի՞նչ

չե՞ր պետք է արվեն առաջիկա 5—10 տարիների ընթացքում:

Վերջին 15 տարվա ընթացքում քաղաքի բնակչության թիվը ավելի քան կրկնապատկվել է և այժմ կազմում է մոտ 30 000 շունչ: Քաղաքն իր սահմաններն ընդարձակել է դեպի արևելք. հարավ և հյուսիս: Հետպատերազմյան տարիներին կառուցվել են ամբողջ թաղամասեր, որոնց ընդհանուր տարածությունը երեք անգամ գերազանցում է հին Վաղարշապատի բոնած տարածությունը:

Քաղաքի սահմաններն հասել են մինչև պատմական Զվարթնոցի ավերակները և նորակառույց համանուն ավանը այժմ էջմիածնի մեկ արվարձանն է:

Հին Վաղարշապատում ոչ մեկ հատ լրիվ քարաշեն տուն չկար, բացի վանքապատկան շենքերից: Վերջին 30 տարում կառուցված շուրջ 2000 անհատական տները բոլորն անխտիր քարով են կառուցված: Քարով հարուստ երկրում քարը ամենաթանկ շինանյութն է եղել անցյալում:

Քաղաքի բնակարանային տարածությունը տարեցտարի ավելանում է ոչ միայն անհատական շինարարության գծով: Վերջին 4 տարում քաղաքային սովետի կառուցած շենքերում տեղավորվել են այնքան մարդ, որքան կարող էին տեղավորվել 500 տնից բաղկացած մի գյուղում: 1963—1965 թվականներին կկառուցվի նույն համեմատությամբ դրեթե կրկնակին:

էջմիածնի կենտրոնական փողոցը, որը հատում է քաղաքը ծայրից ծայր և տանում դեպի նրան, կոչվում է Ալ. Մյասնիկյանի անունով: Այս փողոցում կառուցված են բազմաթիվ բնակելի նոր շենքեր, հյուրանոց, խանութներ, ճաշարաններ, արհեստանոցներ:

Այս տարվանից սկսած, փողոցի կենտրոնական հատվածը վերակառուցվելու է նրա երկու կողմերում բարձրանալու են 4—5 հարկանի տուֆափայտ շենքեր, որոնց մեկ մասը 40-ից մինչև 90 բնակարանով: Փողոցը կունենա շուրջ 30 մետր լայնություն, կզարդարվի ծաղկանոցներով: Այն կմիանա քաղաքի նոր բացվելիք կենտրոնական հրապարակին, որտեղից սկիզբ կառնի լայն կանաչապատ մի բուլվար մինչև կենտրոնական հիվանդանոցը:

Քաղաքը տարբեր ուղղություններով հատում են նոր բացված փողոցներ: Նրանցից շատերը բաղկարգվել են և ասֆալտապատ-



էջմիածին. — Հյուրանոցը

վել: Այժմ այդ աշխատանքները շարունակվում են: Այս տարի կրթական գործունեությունն ու կառավարական գործունեությունը փոխարինվել են ինչպես և Հայաստանի գրեթե բոլոր քաղաքները, պատկանում են այն բնակավայրերի թվին, որոնց փողոցները անմիջականորեն հողաշերտից անցել են ասֆալտի, առանց նախնական սալարկման կամ խճապատման:

Կար ժամանակ, երբ Արարատյան դաշտի բոլոր բնակիչներն անխտիր, խմելու համար գործածում էին ոռոգման առուների ջրերը: Մասամբ դրանից էր, որ տարափոխիկ հիվանդություններն անպակաս էին: Այժմ այդ բոլոր բնակավայրերն ունեն մաքուր աղբյուրներից սկիզբ առնող ջրմուղներ:

Էջմիածնի ջրմուղը, կառուցված շուրջ 25 տարի առաջ, սկիզբ է առնում Արազածի ստորոտներից, Աշտարակի շրջանի Թաքիա գյուղի աղբյուրներից, ունենալով մոտ 30 կիլոմետր երկարություն: Սակայն քաղաքն աճել է և ջրմուղը լի բավարարում բնակչության պահանջներին: Հիմա կառուցվում է նոր ջրմուղ, որի ավարտումով քաղաքին տրվող ջրի քանակը կկրկնապատկվի:


Անցյալում Հայաստանում ոչ մեկ բնակավայր, հաշված նաև Երևանն ու Լենինականը, չունեին կոյուղի: Այժմ մեր երկրում կա 15 քաղաք և բոլորն ունեն կոյուղի: Էջմիածնի կոյուղու գծերն անցնում են քաղաքի բոլոր կենտրոնական փողոցներով: Մեկ-երկու ամսից կավարտվի կեղտաջրերի մաքրման կայանը և կոյուղու ցանցը կսկսի գործել:

Էջմիածնի բնակչության մեկ զիսավոր մասը զբաղվում է երկրագործությամբ: Նախկին կոլտնտեսությունը վերածվել է սովխո-

զի և բամբակաբույսի ընտանիքներ կապված են այս տնտեսության հետ իրեն բանվորներ: Սովխոզը պետությունը տալիս է բամբակ և խաղող, ընտիր պտուղներ, բաղմամբիս բանջարեղեն Երևանի բնակչության համար, զանազան կաթնամթերքներ և այլն: Անցյալ 1962 թվականին սովխոզը տվել է այնքան արտադրանք (բամբակ, խաղող, բանջարեղեն, պտուղ, հացահատիկ, անասնամթերք), որքան տալիս էին նախասովետական վարչապատի բոլոր երկրագործները 4 տարվա ընթացքում:

Միայն գյուղատնտեսությունը չէ որ բնորոշում է Էջմիածնի տնտեսական պատկերը: Այստեղ է հիմնված Հայաստանի կարևոր գործարաններից մեկը՝ Պլաստմասսաների գործարանը, որն արհեստական նյութերից պատրաստում է էլեկտրական սարքավորման զանազան պիտույքներ, ամանեղեն և այլ առարկաներ: Այստեղ աշխատում են 1000 բանվորներ և բանվորուհիներ: Գործարանը ներկայիս վերակառուցվում է և ընդլայնվում: Կառուցվում են մեծ շենքեր, ուր տեղավորվելու են արտադրական բաժիններ: Վերակառուցումն ավարտելուց հետո գործարանի հզորությունը կհասնի 1000 զործարանի հզորությանը, նոր դրամով հաշված, տվել է ավելի քան 3 000 000 ուրլու արտադրանք, որն ավելի է, քան նախասովետական Երևանի բոլոր գործարանների արտադրանքի արժեքը միասին վերցրած:

Էջմիածինն ունի խոշոր, արդիական կահավորմամբ այլ ձեռնարկություններ՝ հացի, անուշահամ ջրերի, կաթնամթերքների վե-



Էջմիածին.—Մշակույթի պալատը



Էջմիածին.—Նորակառույց բնակելի շենքեր

րամշակման գործարաններ, իսկ գինու գործարանը Հայաստանի խոշոր գինեգործարաններից մեկն է։ Հարյուրավոր բանվորներ աշխատում են տեղական նշանակություն ունեցող դանազան արհեստանոցներում, զբաղվելով երկաթագործությամբ, ատաղձագործությամբ, գորգագործությամբ և այլ աշխատանքներով։

Քաղաքն ապրում է լիարժեք մշակութային կյանքով։ Ինը միջնակարգ և յոթնամյա դպրոցներում սովորում են ավելի քան 5000 աշակերտներ։ Դպրոցներից մեկը երաժշտական է և մեկը գիշերոթիկ։ Բոլոր դպրոցներն ունեն իրենց հարմարավետ շենքերը։ Վառուցվել և կառուցվում են դպրոցական նոր, գեղեցիկ շենքեր։

Էջմիածնում է գործում Հայաստանի կարևոր գիտական հաստատություններից մեկը՝ Երկրագործության գիտահետազոտական ինստիտուտը։ Մի քանի տասնյակ գիտական աշխատողներ այստեղ զբաղված են ուսումնասիրություններով, թե ինչպե՞ս կարելի է բարելավել գյուղատնտեսական բույսերի մշակման եղանակներն ու նրանց բերքատվությունը։

Էջմիածնիցների սիրած վայրն է մշակույթի պալատը, ուր գրեթե ամեն օր ներկայացումներ ու համերգներ են տրվում ոչ միայն տեղական, այլև Երևանից հրավիրվող ուժերով։

Քաղի Մայր Աթոռի տպարանից, Էջմիածինն ունի իր քաղաքային տպարանը, որտեղ


տպագրվում է միջլրջանային թերթը «Կոմունիզմի ուղիով» խորագրով։ Թերթը լույս է տեսնում շաբաթական երեք անգամ, 5000 օրինակ տպաքանակով։

Դպրոցական դրադարաններից բացի, քաղաքն ունի երկու հանրային գրադարան, մեկ գավառագիտական թանգարան, երկու կինոթատրոն, նորակառույց ստադիոն։

Ներկայիս Էջմիածնի բժշկական և առողջապահական աշխատողների ընդհանուր թիվը հավասար է նախասովետական շրջանի Երևանի ամբողջ գավառի բժշկական աշխատողների թվի կեսին։ Բուժական հիմնարկների թիվը շուտով կավելանա նոր ծննդատնով, որը կունենա 100 մահճակալ, և մանկական բուժարանով։

Կանցնի ես մի 5—10 տարի։ Մեր երկրի ընդհանուր վերելքի հետ միասին էլ ավելի կաճի ու կզարգանա Էջմիածինը։ Նա Երևանի մերձակա մի քանի այլ բնակավայրերի հետ միասին, կդառնա արբանյակ-քաղաք՝ թեթևավաճեցնելու համար Հայաստանի մայրաքաղաքի ծանրաբեռնվածությունը։ Հիմնովին կփոխվի Էջմիածնի կերպարանքը։ Նա կդառնա ավելի մեծ, բազմամարդ, բարեկարգ ու գեղեցիկ։

Ու կփայտա նա իր վարդազույն, տուֆակերտ շենքերով, լայն փողոցներով, փարթամ, զովասուն այգիներով, Արարատյան դաշտի այդ նորակերտ ու շենշող ոստանը՝ Էջմիածինը, երբեմնի վաղարշապատը։



ՄԻ ԷԶ ՀԱՅ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԻՑ

Հայկական տպագրութիւնը Կոստանդնուպոլսում հաստատուն հիմքերի վրա դրվեց 1690-ական թվականներին: Այդ գործում վճռական դեր կատարեցին երկու խոշոր տպագրիչներ՝ Գրիգոր Մարզվանեցին և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին: Նրանք ոչ միայն մշտական գործող հայկական տպարաններ հիմնեցին, այլև մեր պատմութիւն ծանր ժամանակներից մեկում՝ ԺՂ դարի առաջին կեսերում, տպագրութիւնը բազմացնելով, հայ ժողովրդի սեփականութիւնը դարձրին նրա հոգեկան անընկճելի ուժն ու կորովն արտահայտող, ոգևորող ու ազդեցիկ ինքնուրույնութիւն կոչող գրական մի շարք կոթողներ: Մարզվանեցին տպագրեց Զենոբ Գլակ ու Ագաթանգեղոս, Աստվածատուրը՝ Գրիգոր Նարեկացի, Գալիթ Անհաղթ, Տաթևացի, Բացի դրանից, նրանք մեծ ծառայութիւններ ունեն հայ գրքի տպագրութիւն արվեստի զարգացման ասպարեզում:

Սակայն այդ երկու տպագրիչների կյանքի ու գործունեութիւն մասին դեռևս կան որոշ շփոթութիւններ:

Շփոթութիւն ողջ մի շարան է ստեղծված հատկապես Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու շուրջը: Նրա անվան առաջին անգամ հանդիպում ենք 1698 թվականին Կոստանդնուպոլսում լույս տեսած «Տաղարան վայելուչ և գեղեցիկ» գրքում, իբրև Գրիգոր Մարզվանեցու ընկերակից տպարանատիրոջ, Ըստ Զարբհանալյանի նկարագրութիւն, այդ

գրքի տիտղոսաթերթում գրված է. «Ի տպարանի ձեռամբ Գրիգորի Մարզուանցու, և Աստուածատուր Կոստանդնուպոլսոյ»¹: Հետեվալ՝ 1699 թվականից Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին հանդես է գալիս արդեն միայնակ և շարունակում իր տպագրական գործունեութիւնը մինչև 1740-ական թվականները: Իր տպագրած գրքերի տիտղոսաթերթերում և հիշատակարաններում ասում է, որ ինքը կոստանդնուպոլսեցի խոշա կամ պարոն Կարապետի որդին է (մայրը՝ Մարիամ), իրեն անվանում է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցի, շատ հաճախ՝ Մահտեսի Աստվածատուր, մերթ էլ՝ Աստվածատուր Ղալիւ: Սկսած 1720 թվականներից, Աստվածատուրի գործակիցն է իր որդի Հովհաննեսը: Հոր մահից հետո, տպագրութիւն գործը շարունակում է այս Հովհաննեսը, իր որդի Կարապետի հետ: 1750 թվականին լույս տեսած Բաղդասար դպրի «Շահաւետ»-ի հիշատակարանում կարդում ենք. «Ի տպարանի հանգուցեալ Մահտեսի Աստուածատուրի և որդւոյ նորին՝ գիտնոց ծառայ տիրացու Թահաւետիսի»: Երախտագետ որդին մինչև իր կյանքի վերջն էլ գրքերի տիտղոսաթերթերի վրա պահում է հոր անունը՝ «Ի տպարանի

¹ Այս հրատարակութիւնից լկա Երեմի, Քրիստի և Բազմի գրադարաններում: Տեղեկութիւնը վերցրել ենք Գ. Զարբհանալյանի «Հայկական մատենագիտութիւն» աշխատութիւնից, տպ. Վենետիկ, 1883, էջ 658.

մահտեսի Աստուածատուրին: Զովհաննեսը, իր Կարապետ որդու հետ, տպագրում է բազմաթիվ գրքեր և տպարանը կարողանում է պահել մինչև 1770-ական թվականների վերջերը, որից հետո այն անցնում է ուրիշների ձեռքը: Այսպիսով, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հիմնադրած տպարանը յարատևում է շուրջ 80 տարի:

Այս է Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու և նրա ժառանգների տպարանական գործունեության համառոտ ուրվագիծը: Ահա այս Աստվածատուրին Քեոքիկը, մի թյուրիմացության հետևանքով, որի մասին կխոսվի ստորև, անվանում է Աստվածատուր Ապուլիսցի, ընդգծելով, թե նրա և նրա գերդաստանի տպարանը գոյություն է ունեցել «մեկ ու կես դար»²:

Այս թյուրիմացությունը հիմք ընդունելով, Գ. Լեոնյանը գրում է. «Հայ տպագրության պատմության մեջ Աստվածատուր Ապուլիսցին եզակի անձնավորություն է այն տեսակետից, որ նրա հիմնած տպարանը իր գոյությունը շարունակում է ավելի քան 150 տարի, ժառանգաբար անցնելով նրա որդիներին, թոռներին և ժոռներին՝ հերթականությամբ»³:

Նույն այս սխալները կրկնվեցին նաև 1962 թվականին, հայոց գրքի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակին և հայկական տպագրության 450-ամյակին նվիրված հոգվածներում ու զեկուցումներում:

Թեև մեր բանասիրության մեջ վաղուց ի վեր բացահայտված են այս անճշտությունները, բայց զոքախտաբար մինչև այսօր էլ մնում են անլսելի:

Ինչ վերաբերում է Աստվածատուր Ապուլիսցի անվան, ապա այդ անվամբ ոչ տպարանատեր, ոչ էլ տպագրիչ է եղել: Իսկ ինչպե՞ս է այդ անունը այնքան հաստատուն կերպով մտել մեր տպագրության պատմության մեջ: Այս հարցին պատասխանելու համար հարկավոր է ծանոթանալ մեկ այլ տպարանի գործունեության:

1760-ական թվականներին Ակնցի Զովհաննեսը և Զակոբը Կոստանդնուպոլսում բացում են մի նոր տպարան: 1766 թվականին այստեղ տպագրվում է «Գիրք վկայության Սրբոյ Մարինէ կուսին»⁴, 1767 թվականին

տպագրում են Եփրեմ Խուրի Ասորու «Աղաթագիրք»-ը, 1768—1769 թվականներին՝ Պաղտասար դպրի Տաղերը, «Շարական», «Աւետարան», «Մաղկոցիկ»: Այս գրքերի հիշատակարաններից երևում է, որ տպարանը պատկանել է Ակնի Ապուլիսի գյուղացի Աստվածատուրի որդի Զովհաննեսին և Ակնցի Սոխիկոզլի Սարգսի որդի Զակոբին: Այս երկու անուններից հետո հիշվում է նաև Զովհաննեսի որդի, գրաձույլ և գրաշար Պողոսը:

Թե ի՞նչ առնչություն է ունեցել Զովհաննեսի հայր Աստվածատուր Ապուլիսցին իր որդու և նրա ընկերակցի հիմնած տպարանի հետ, պարզ երևում է 1769 թվականին նույն տպարանում յարտարակված Ավետարանի հիշատակարանից: Այդտեղ ասվում է, որ գիրքը լույս է տեսել «... Արդեամբք և զոյիք ըստ բնականին Ակնցի և ըստ ծննդականին՝ յԱկնա գիւղիցն Ապուլիսցի մահտեսի Աստուածատուրի՝ ըստ մականուանն Արապազլի կոչելով...»⁵:

Շարունակությունից տեղեկանում ենք, որ Աստվածատուրը, մեծ հարստության ու կալվածների տեր ծերունի է արդեն և սույն Ավետարանը տպագրելու համար ձուլել է տվել սովորականից ավելի մեծադիր (14 կետաշափի) տպագրական տառեր, որպեսզի իր նման ծերերի համար ընթերցելը հեշտ լինի: Այնուհետև հիշելով Աստվածատուր Ապուլիսցու ամբողջ գերդաստանի անդամներին, տպագրողներն ավելացնում են. «Իսկ յնտ ջան դամենեսեան՝ թախանձագին բանիք աղաչեմք զհաւատացեալսդ ի բանն ամենաբարի՝ յիշել ի բարին և զտպագրողս հոգեկեցոյց Սրբոյ Աւետարանիս: Այսինքն զվերոյգրեալ մահտեսի Աստուածատուրի որդի Յահաննէս» և զԱկնցի հանգուցեալ Սարգսի որդի Յակոբս, հանդերձ ծնողովքս մերովք: Ընդ որս և դո՛ւնարոյս որդեակն նորին Յահանիսի՝ զՊողոսն մտերիմ, որ ըստ կարի իւրում յոյժ աշխատեցաւ թէ՛ յօրինելն ըստ կերտողի նորաշէն գրոցս, և թէ՛ ի շարելն և ի ցրուելն զկապարեայս»⁶:

Ուրեմն, ծերունի Աստվածատուր Ապուլիսցին մի մեկնեաս է, որ հոգու փրկության համար հոգացել է, Ավետարանի տպագրության ծախսերը: Հայ տպագրության պատմությանը ծանոթ են շատ անուններ, որոնք նույն այդ մղումներով հոգացել են այս կամ այն գրքի տպագրության ծախսերը, բայց նրանցից ոչ մեկը տպարանատեր կամ տպագրիչ չի անվանվել:

Շուտով Զովհաննեսի ընկերակցի Զակոբը հեռանում է ասպարեզից: 1769 թվականից

² Թեոդիկ, «Տիպ ու տառ», Կ. Պոլիս, 1912, էջ 58:

³ Գ. Լեոնյան, «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Բ տպագրություն, Հայկատհրատ, Երևան, 1958, էջ 131:

⁴ Այս հրատարակությունից նույնպես չկա նրեանի, Թրիխսիի ու Բաքվի զրադարաններում: Տեղեկությունը վերցրել ենք Քեոքիկի և Գ. Լեոնյանի աշխատություններից:

⁵ «Աւետարան», Կ. Պոլիս, տպ. Զովհաննեսի և Զակոբի, 1769, էջ 460:

⁶ Նույն տեղում, էջ 462—463:

մինչև 1779 թվականը այս տպարանից լույս տեսած գրքերի շնք հանգիպում։ Իսկ այս թվականին տպագրված եփրեմ Աստուրու Աղոթագրքի վրա իբրև տպարանատեր նշված են Հովհաննես ու իր որդի Պողոսը միայն։

Հակոբը տպարանից հեռացել էր դեռևս 1769 թվականին, իսկ Պողոսը այդ տարիներին վրաց Հերակլ Թ թագավորի կողմից հրավիրվել էր Քրիլիսի՝ կատարելագործելու վրաց տպագրական տառերը, վերադառնալով՝ վրաստանից, Պողոսը մինչև դարավերջ հոր հետ, և այնուհետև միայնակ, շարունակում է տպագրական գործը։ Պողոսից հետո այս գերդաստանի տպագրական գործունեությունը շարունակում են նրա ժառանգները։ Թե որքան է տևում այս գերդաստանի տպագրական գործունեությունը՝ դեռևս հանգամանորեն ուսումնասիրված չէ։

Քնդդիմը այս Հովհաննեսի հորը՝ Ապուլիսիցի Աստվածատուրին շփոթելով Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու հետ, տեղի է տվել այն թյուրիմացությունը, թե իբր եղել է Աստվածատուր Ապուլիսիցի տպարանատեր-տպագրիչ և թե նրա ու իր ժառանգների տպագրական գործունեությունը տևել է 150 տարի։



Հետագա անճշտություններից խուսափելու համար, անհրաժեշտ ենք համարում կանգ առնել մինչև այժմ հայ տպագրության պատմության անձանք մնացած մեկ ուրիշ տպարանի գործունեության վրա ևս։

Վերևում տեսանք, որ Հովհաննես ասուրեն են ունեցել թե՛ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու տպագրիչ որդին և թե՛ մինչև այժմ սխալմամբ տպարանատեր համարված Աստվածատուր Ապուլիսիցու տպագրիչ որդին։ Նրանցից առաջինը իր Կարապետ որդու հետ հոր տպարանը շարունակել է կանգուն պահել մինչև 1770-ական թվականների վերջերը, մյուսը՝ նախ իր ընկերակից Հակոբի և Պողոս որդու հետ, ապա միայն վերջինիս հետ, տպագրությամբ է զբաղվել մինչև դարավերջ⁷։

7 Միմյանց հետ շփոթելով Աստվածատուրներին ու երանց որդիներին, Գ. Լևոնյանը իր վերահիշյալ աշխատության 138-րդ էջում գրում է. «Հովհաննեսը հոր մահից հետո տպարանի տնօրենը զանալով՝ իր անվան հետ հաճախ հիշատակում է և սրբուհ Կարապետի անունը, որպես «շարքողն ու ցրուղեն արճրճեալ գրոց»։ Բայց թե ինչու՞ հետևյալ հրատարակությունների մեջ այլևս ոչ մի անգամ չենք պատահում այդ Կարապետին և նրա փոխարեն հայտնի է դառնում նրա եղբայր (ընդգծումն իմն է—Չ. Դ.) Պ.ղոսը, այդ մեզ համար մնում է մութ»։

Բայց տպագրիչ Հովհաննեսները միայն այս երկուսը չեն։ Կա մի երրորդ տպագրիչ Հովհաննես ևս, ի տարբերություն Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու որդի Հովհաննեսի, որը մեկ-մեկ է հիշատակարաններում իրեն «չնշին» տիտղոսով որակում, այս Հովհաննեսը իրեն համարյա միշտ անվանում է «չնշին Յովհաննէս», իսկ հիշատակարաններում սկզբի շրջանում՝ «սարկավագ» ապա՝ «տիրացու»։ Այս տպարանատեր Չնշին Հովհաննեսի հոր անունը Ղազար է, մորը՝ Հռիփսիմի։ Սա նույնպես ունի մի դավակ, որի անունը Ստեփան է։ Չնշին Հովհաննեսը գործել է 1746-ից մինչև 1750-ական թվականների սկզբները։ 1749 թվականին հրատարակված Արսեն դպրի «Գիրք սահմանաց յոգնագիմի իրողութեանց»-ի հիշատակարանում կարդում ենք. «... Յիշեսցիք և զտպագրող սորին զչնշին մահտեսի Յոհաննէս, անուամբ և եթ Սարկաւագս. և զծնողսն իմ զմահտեսի Ղազարն. և զմայրն իմ զՀռիփսիմէն. և զորգեանակ իմ զտիրացու Ստեփանն...» (էջ 528)։ Բացի այս գրքից, Չնշին Հովհաննեսը տպագրել է նաև Ներսես Շնորհալու «Յիսուս որդի»-ն և Գրիգոր Մագիստրոսի «Տաղասացութիւն»-ը (1746 թ.) մեկ գրքով, Հակոբ պատրիարք Նայյանի «Հոգեշահ»-ը (1746 թ.), Աթանաս Աղեքսանդրացու «Գիրք պատասխանական»-ը (առանց տպագրության տեղը և թվականը ցույց տալու), «Պղնձէ քաղաք»-ը (1749 թ.), Պողոս Տարոնացու «Թուղթ ընդդէմ Քէոփիստայ» (1752 թ.) և այլն։



Շատ ավելի քիչ է ուսումնասիրված Գրիգոր Մարգվանեցու գործունեությունը։ Հայտնի է, որ 1684 թվականին Կոստանդնուպոլիս գալով, Գրիգոր Մարգվանեցին, Բաղեշի զբարոցի ցրվելուց հետո, Կոստանդնուպոլսում հաստատված Սարգիս վարդապետի մոտ սովորում է ծագկարարության և փորագրության արվեստը⁸։ Այնուհետև ձեռք բերելով նրեմիա Չելեպի Քյոմյուրճյանի երկու գրքով հրատարակելուց հետո՝ դադարած տպարանը, վերակառուցում է այն և 1698 թվականին, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու ընկերակցությամբ, հրատարակում վերջ հիշատակված «Տաղարան»-ը։ Մինչև այժմ այդ

8 Տե՛ս Լեո, «Հայկական տպագրություն», Բ, մասն Ա, Բիֆլիս, 1902, էջ 143։

9 Մի հատված ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմից և իր իսկ «որինամ տաղերը Երուսաղեմի մասին «Տնորինական» խորագրով, 1686—1687 թվականներին։



Գրիգոր Մարգվանեցու 1706 թվականին հրատարակած «Յայսմաւորք»-ի տիտղոսաթերթը

երկուսի կողմից համատեղ հրապարակված ուրիշ գիրք չի հայտնաբերված: Հետևյալ 1699 թվականին Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին արդեն առանձին հրատարակում է մի «Շարական», այնուհետև հաջորդաբար «նարեկ» (1700—1701 թ.թ.), «Մաշտոց» (1704 թ.), «Տօնացոյց» (1703 կամ 1705 թ.թ.), «Յայսմաւորք» (1706—1708 թ.թ.)¹⁰, Այգ ամրոցը ժամանակի ըն-

¹⁰ Մինչև վերջերս էլ հայ ապագրութուն մեջ Մարգվանեցու և Աստվածատուրի սկզբնական շրջանի համատեղ գործունեությունը բացառությամբ չէր, իսկ նշված այս հինգ գրքերից հայտնի էին միայն երկուսը: «Շարական»-ի մասին տեղեկություններ է տալիս Ե. Շահազադյանը 1962 թվականին «Բանբեր Մատենադարանի»-ի № 5-ում ապագրված «Մատենադարանի»-ի հոգրդագրություն մեջ, իհարկե, Աստվածատուր Կոստանդնուպոլսեցուն անվանելով Աստվածատուր Աղալեյիցի: Մեզած երկու գրքերը հայտնաբերել են 1962 թվականի վերջերիս Հայկական ՍՍՀ Ա. Մյուսիկյանի անվան պետական գրադարանի Հայ մասն-

թացքում, Մարգվանեցին որևէ գիրք չի հրատարակում և միայն 1706 թվականին ապագրում է «Յայսմաւորք»-ն ու մի «եռորդորդատուր», վերջինիս տիտղոսաթերթի վրա գրված է. «Ե նորակերտ ապարանի՝ Գրիգոր զպրի՝ Մարգվանեցո», իսկ հիշատակարանում՝ «Ե վախճանի աստուածային պատարագամատուցիս այսորիկ, աղաչեմ անմեղադիր լինել խրթնութեան նորատիպ տառիս և դեռաշէն գործարանիս, որովհետև ամենայն իրաց սկիզբն դժուարին է»: Ինչպես տեսանք, այդ նույն թվականին «Յայսմաւորք» է ապագրել սկսում նաև Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին:

Մինևույն քաղաքում, միմյանց հետ երբեմնի գործակցած երկու ապարանատերերի միաժամանակ «Յայսմաւորք»-ի պես մեծածավալ ու հսկայական միջոցներ պահանջող գրքի հրատարակությունը շատ արտակարգ երևույթ է հայ ապագրության հնագույն շրջանի 300 տարիների համար: Այդպիսի երկու-երեք դեպք է միայն հայտնի, որոնցից մեկը զարծյալ այս երկուսի կողմից 1713 թվականին հրատարակված Հովհաննես Մրգուզի «Դաւանութիւն հաւատոյ» գիրքն է: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ գործունեք երկու ապարանատերերի բացահայտ մրցակցություն հետ:

Իսկ ի՞նչ եղավ երբեմնի գործակիցների 1698-ին հիմնած համատեղ ապարանը և ինչու է 1706 թվականին ապագրած «եռորդորդատուր»-ի մեջ Մարգվանեցին իր ապարանը անվանում «նորակերտ», այնինչ Աստվածատուրը իր ապարանի մասին խոսում է իբրեւ վաղուց ի վեր գոյություն ունեցող հիմնարկություն:

Մեր քանասիրության մեջ այն կարծիքն է հայտնվել, թե Մարգվանեցու և Աստվածատուրի միմյանցից բաժանվելու պատճառը «Տաղարան»-ի ապագրությունից հետո, ենիչերիների կողմից հայկական այդ նոր ապարանի ավերումն է: Այդ դեպքում, ինչո՞վ բացատրել երկու գործակիցներից մեկի՝ Մարգվանեցու ուժամյա լուրջությունը և մյուսի՝ Աստվածատուրի գործունեության շարունակվելը հաջորդ իսկ տարիների: Տպագրության սկզբնավորման շրջանում մեկ-երկու տարին մեկ գիրք հրատարակելը բացառիկ հաջողություն էր: Այդ է վկայում հենց նույն Աստվածատուրի ապարանի ամենածաղկուն շրջանի գործունեությունը: Տպարանը ավերվելուց հետո, դժվար թե հնարավոր լիներ հաջորդ իսկ տարին գիրք հրատարակել, Բացի դրանադրություն բաժնի աշխատողներ Լ. Դավթյանը, Ն. Ոսկանյանը և Ժ. Կորկոտյանը, հայերեն հնարագրքի մատենագրություն կազմելու աշխատանքի ընթացքում:

ներք, ոչ Աստվածատուրը, ոչ էլ Մարգվանեցին իրենց հիշատակարաններում որեւէ ակնարկ չեն անում 1690-ական թվականների իրենց համատեղ տպարանի ավերման մասին: Այս փաստերից ելնելով պետք է ենթադրել, որ երկու գործակիցների տպարանը ոչ թե ավերվել, այլ դատաստանով և օրենքի ուժով անցել է նրանցից մեկին՝ Աստվածատուրին: Տպագրության պատմութունը լի է նմանօրինակ դեպքերով: Հանրահայտ է, օրինակ, հենց տպագրության արշալույսին մեծ գյուտի հեղինակ Գուտենբերգի և նրա գործակից Ֆուստի միջև ծագած վեճն ու դատավարութունը, որի հետևանքով ոչ միայն տպարանը, այլև արդեն տպագրված Աստվածաշունչը անցնում են Ֆուստին: Տպարանը ուրիշներին անցնելու մասին պարզորոշ ասվում է Մարգվանեցու «Յայսմաուրք»-ի հիշատակարանում. «Յորժամ զայս ամենայն կաղապարս բազում աշխատանք շինեալ հաստատեալք ձեռք իմ... Պատահեաց ինձ երկուց ոմանց բազում վնաս»՝ զոր ոչ գրեցիք զանուանէ նոցին. դի մի յամօթ կրեսցեն ի լսողաց ի ասդէն. և կամ վատ անուն ընկալցին ի մէջ ազգացս. զի յաղագս բազում սգահութեանց իւրեանց՝ յափշտակեալ դարանագործութեամբ ի ձեռաց իմոց զամենայն տպագրեանս իմ ծաղկագրով և այլն ամենայն, և ոչ մի ինչ մաս մի ընաւ ոչ ընկալայ... և մնացի անյոյս՝ և լունայն ի ընչից և դրամից»¹¹:

Ինչպես սովորաբար, այս դեպքում ևս Մարգվանեցու տպարանը ուրիշներին (իմա՝ իր գործակիցներին) անցնելու պատճառը նրա նյութական միջոցների սղությունն է եղել: Արդար ըողոքով և անկեղծ հուզմունքով գրած իր հիշատակարանում, նա մի քանի անգամ անդրադառնում է իր ընկալուրկ վիճակին, պատմում օր ու գիշեր դատարկ ձեռքերով միայն թափված քրտնաջան աշխատանքի, ճիգ ու ջանքերի, տառապանքների մասին, որոնք ի վերջո հաջողությամբ են պսակվում. «Եւ դարձեալ կրկին և ևս յուսադրեցի զիս առ Աստուած՝ յանձն իմ անդրէն ի նույն գառնալ. Աստանօր սկիզբն արարի՝ նորագրել արհեստ տպարանիս: ... Թէպէտ երկտասան ամ աշխատեալ իմ, զի չորացեալ ի շքաւորութենէ գոյից ըստ պիտոյից մարմնոյ: Սւ եղէ որպէս խեցի. և կամ ճընճուկ միայն ի տանիս՝ որդովք իմովք: Տեսցեն ամենայն ոք ի դիտողաց զէութիւն բանին վասն անկաբութեան իմ: Զի անհնարին գործ է առանց դրամի յառաջացուցանել զայս»¹²: Սակայն

Մարգվանեցուն հաջողվում է գլուխ բերել սեփական տպարան, ինչպես ինքն է ասում, «առաւել քան զյափշտակեալն ի ձեռաց տառապելոյս»: Ահա թե ինչու է Մարգվանեցին 1706 թվականին իր տպարանը «նորակերտ» տնվանում:

* *

Մարգվանեցու հրատարակութուններն ուսումնասիրելիս, նկատում ենք հայկական գրքի տպագրության արվեստի զարգացման տեսակետից մի կարևոր նորութուն: Առաջին անգամ նրա տպագրած գրքերում, հատկապես «Յայսմաուրք»-ում ենք հանդիպում հայկական զարդարվեստի ու ձեռագիր մատյանների ոճով կերտած զարդերի, փորագիր պատկերների, զարդագրերի: Մինչ այդ, նվիրաբայում հրատարակված հայերեն գրքերի զարդերն ու պատկերները ընդօրինակվում էին ուրիշ ժողովուրդների այնտեղ տպագրված գրքերից: Հալ տպագրիչները հազիվ էին հաջողեցնում գլուխ բերել տառերի ձուլման ու տպագրության գործը: Նրանք կամ զնում էին պատրաստի փորագիր տախտակները և կամ պատվիրում էին օտարազգի արվեստագետներին: Այսպես, 1660-ական թվականների ընթացքում Ռսկան Երևանցու



11 «Յայսմաուրք», Կ. Պոլիս, տպագր. Գր. Մարգվանեցու, 1706, էջ ԹԺԴ:

12 Նույն տեղում:

Գրիգոր Մարգվանեցու «Յայսմաուրք»-ի ԵՂԴ էջը (ներքևում) Գր., Գրիգոր անվան փակագրությունը

հրատարակած Աստուածաշունչ և մյուս գրքերում, այնուհետև՝ 1690-ական և հետագա թվականների Վանանդեցիների հրատարակությունների պատկերների ու զարդերի մեծ մասի հեղինակը ժամանակի հոլանդացի հայտնի փորագրիչ Կոռնելիուս Վան Սիգեմեն էր։ Նրա ստորագրությամբ փորագրություններ են հանդիպում նույնիսկ ԺԸ դարում Կոստանդնուպոլսում տպագրված գրքերում։ Եվրոպական քաղաքներում հրատարակված գրքերի պատկերների վրա հանդիպում ենք նաև ուրիշ փորագրողների ստորագրությունների։ Կան նաև օտարազգի մասնագետների անստորագիր փորագրություններ։ Այդ գրքե-

շայերեն տպագիր գրքերի հայկական փորագրությունների սկզբնավորման ու զարգացման գործում բացառիկ դերը պատկանում է Գրիգոր Մարգվանեցուն։ Նրա բոլոր լավագույն հրատարակությունները՝ «Յայսմատուրք»-ը, Ազաթանգեղոսը, Հովհան Ակնեցու «Այրբենարան»-ը, «Տարոնի պատմություն»-ը ձևավորված, լրացված են խորաներով, պատկերներով, զարդերով ու զարդադրերով։ Իր ճոխությամբ հատկապես աչքի է ընկնում «Յայսմատուրք»-ը։ Նրա մեջ դեռևս տեղի են գտնում մեծադիր ու հարուստ բովանդակությամբ պատկերներ, որոնցից մեկը կրկնվում է երկու տեղ (Թ և ԲՃԽԲ էջերում)։



Գրիգոր Մարգվանեցու 1709 թվականին տպագրած Ազաթանգեղոսի ասպին էջերը

րում եղած հայկական կյանքից առած հատուկներտ պատկերներն ու զարդերը նույնպես հայ տպագրիչների պատվերով կատարած օտար արվեստագետների գործեր են։ Դրանցից է, օրինակ, 1687 թվականին տպագրված «Պարզարանութիւն սաղմոսաց» գրքի սկզբում գետեղված Ագուլեցի Նահապետ Գյուլնազարի դիմանկարը։ Ժամանակի հայ հուշայի մի իսկական տիպար է այդ։

Այսպիսով, հայ տպագիր գրքի փորագրությամբ արվեստը ծնունդ է առել ԺՃ դարի վերջում և ԺԸ դարի սկզբներում, Կոստանդնուպոլսի հայկական միջավայրում, հայերի ձեռքով։ Ժիշտ է, աշխարհագրական իմաստով Կոստանդնուպոլսը Հայաստանից դուրս էր, բայց այն իրենց հայրենիքի կյանքով ապրող, հայաշատ ու հայ մշակույթի մի ծաղկուն օջախ էր։

Բարձրարվեստ, բազմաբովանդակ ու հմուտ աշխատանք է մասնավորապես այս կրկնվող փորագրությունը։ Այն բաղկացած է 16 առանձին փոքր պատկերներից։ Մեծադիր պատկերներից բացի, գրքում կան 24 փոքր պատկերներ ևս։ Դրանցից միայն մի-երկուսն են կրկնվում մեկ-երկու տեղ և իրենց ինքնատիպությամբ ու արվեստով դարձյալ բարձրարժեք գործեր են։ Այսպիսով, Մարգվանեցու գրքերում հանդիպում ենք ոչ թե ուրիշ գրքերից ընդօրինակված պատկերների ու սրբերի դիմանկարների, այլ այնպիսի նկարների, որոնք արված են հենց տվյալ բնագրի համար, որոնց իմաստը բխում է տվյալ բնագրից։ Այսինքն, այն, ինչ գրքում ասված է բառերով, նկարիչը, փորագրող արվեստագետը արտահայտել է պատկերների միջոցով։

16 «Յայտնամատերք», 4. Պոլիս, տպագր. Գր. Մարզ-
պանհիսու, 1708, էջ ԹԻԼԵ.

յու պատկերների հետ համեմատած, այս Գրիգորի ու Դրաստամատի պատկերները շատ ավելի հասարակ են: Հավանական է թվում, որ Աստվածատուրի գրքերում հանդիպող Գրիգոր ստորագրությամբ պատկերները կամ Գրիգոր Մարզվանեցու՝ փորագրության արվեստի մեջ դեռևս լավ չհմտացած երիտասարդ ժամանակի, ղործերն են, որոնք տպարանի հետ անցել են Աստվածատուրին, կամ այս Գրիգորը բոլորովին այլ անձնավորություն է:

Վերագրյալ փաստերը ցույց են տալիս, որ ժէ դարավերջին և ժէ՛ դարի առաջին կեսում Կոստանդնուպոլսում գործող երկու նշանա-

վոր տպարանատերերը՝ Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին և մանավանդ Գրիգոր Մարզվանեցին հայ տպագրության արվեստը հասցրին մի նոր բարձրության: Նրանցից մեկը՝ Աստվածատուրը դարձավ իր ժամանակի ամենաբեղմնավոր տպագրիչը, որն իր հրատարակություններում սկսեց զետեղել հայ արվեստագետների ձեռքով պատրաստած փորագիր պատկերներ, մյուսը՝ Գրիգոր Մարզվանեցին, մի շարք արժեքավոր գրքերի առաջին հրատարակիչը լինելով, միաժամանակ, հայերեն տպագիր գրքերում հայ փորագրությամբ արվեստի պատկերների սկզբնավորողն ու հիմնադիրը եղավ:



ՎԱՍԴՊՈՒՐԱԿԱՆԻ ՈՍԿԵՐԶԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՄԻ ՆՄՈՒՇ

Հայկական ձեռագրերի պահպանման արվեստի մի կարևոր մասն է կազմում նրանց մետաղյա նրեսապատումը, որը մեր ազգային ոսկերչական արվեստի մեջ ունի իր ուրույն տեղը:

Մատենադարանի ըազմաթիվ ձեռագրակազմների մեջ աչքառու տեղ են գրավում այն մետաղակազմ ձեռագրերը, որոնք մեզ հասել են վասպուրականից (Վան, Լիմ, Արծկե և Աղթամար): Նրանք կազմում են մի առանձին դպրոց, որն իր ըազմազան կողմերով և գրվագման ինքնատիպությամբ տարբերվում է ուրիշ խմբավորումներից:

Այս դպրոցից մեկ հասած գործերը ժԶ—ԺԸ դարերի գործեր են:

ԺԴ—ԺԵ դարի Վանի արծաթագործությունից մեզ գրեթե ոչինչ չի հասել, և այս շատ հասկանալի է: Ոսկերչական արվեստի գործերը ամենահեշտ անզավիղսվող է վաճառվող արժեքներն են ու պատմությունից գիտենք, որ արշավող բանակները առաջին հերթին կողոպտել են այն, ինչ որ թանկարժեք մետաղներից է պատրաստված:

ԺԵ և ԺԶ դարերից մեզ հասած ձեռագրերի կաշվե կազմերից շատերի վրա հանդիպում ենք անցքերի և ճեղքերի, որոնք վստահաբար կողոպուտների հետքերն են: Այս ձևով շատ մետաղյա կազմեր անջատվել են ձեռագրերից ու տարվել, իսկ մեզ հասել են ձեռագրերը, հաճախ քիչ վնասված վիճակում:

Ձեռագրերի վասպուրականի մետաղյա կազմերի արվեստի ուսումնասիրությունը մեզ առաջնորդեց Մատենադարանից, որ գտնվում է նրանց ստվար մեծամասնությունը, դեպի Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որտեղ կա մի ձեռագիր Ավետարան, գրված 1484 թվականին Վանի Ս. Աստվածածին եկեղեցում, ոսկյա պահպանակով և կազմով:

Ձեռագրի գրիչն է Ազարիա երեց, ծաղկողը՝ Կիրակոս, պատվիրատուն՝ Խոջա Փարմիշե, վերջին կազմողը՝ Զիրաք, որը հավանաբար դրվագողն է, քանի որ կազմող են համարվում նաև այն անձերը, որոնք ոչ միայն կաշվով են կազմում, այլև ուրիշ նյութերով (արծաթ, ոսկի, պղինձ, արույր, փղոսկր և այլն): Մանավանդ որ վերջին կազմը երեսի մետաղապատումն է, այսինքն ոսկերչի (Զիրաք) գործը: Կազմը նորոգել է Տեր Սահակը:

Այս ձեռագրի կազմը, որի լափերն են $16,8 \times 13,5 \times 8,5$ սմ., գործածությունից մաշվել է: Նույն վիճակում են և ներսի թղթերը: Ավետարանի այս կազմը ոսկուց է պատրաստված և մեզ հասած միջնադարյան արվեստի գործերի մեջ հազվագյուտ նմուշներից է և ներկայացնում է նաև զեղարվեստական արժեք: Վասպուրականի ձեռագրակազմների ստվար մեծամասնությունը արծաթով են պատած, իսկ մի փոքր մասն էլ արույրով կամ պղնձախառն արծաթով:

Վերահիշյալ ձեռագրի բուն կազմը կաշեպատ տախտակ է, որի վրա հետագային անցկացված են ոսկյա դրվագված թերթիկներ:

Կազմը ունի 2 կողեր, կաշեպատ տախտակ, կաշեպատ կոնակով և դռնակով: Այս բոլորը երեսպատված են ոսկու և արծաթի դրվագումներով՝ հետևյալ դասավորմամբ. Ա և Բ կողերը՝ ոսկի, 0,4 մմ. հաստությամբ թերթիկի վրա, կոնակը արծաթ, երեսից ոսկեջրած, 0,6 մմ. հաստությամբ թերթի վրա, դռնակը ոսկի, 0,4 մմ. հաստությամբ ոսկու թերթի վրա, իսկ ներքեից, այն կաշվի վրա պահելու համար, ոսկու և կաշվի արանքում կա արծաթ թերթ, 0,4 մմ. հաստությամբ:

Ա կողի (նկար 1) մակերեսը լրիվ դրվագված է: Կենտրոնում կա Աստվածածնի և մանուկ Հիսուսի պատկերաքանդակը, ցայտուն



Նկար 1.—Վանի Ա. Աստվածածին եկեղեցու 1484 թվականի ձեռագիր Ավետարանի դրվագված կապի առաջին կողը

կէրպով դրվագված, որն իր ռեկեֆով իշխում շրջանակ, լուսամուտի նման։ Այս պատկե-
ն շուրջի կերպարներին և ունի կամարակապ րաքանդակի վերևում կա սրածն ծալրերով մի

խաշ, որն ընդհանուր ֆոնի հետ հնչում է շատ ներդաշնակ և նրանից հազիվ անջատվում է մի շրջագծով: Կամարի երկու կողմերում կան քանդակված երկու հրեշտակներ և նրանցից փոքր ինչ ներքև երկու սրբանկարներ, որոնց ինքնությունը չի բացահայտվում, որովհետև տեղում արձանագրություն չկա:

Վերահիշյալ շորս կերպարները դրվագված են միայն շրջագծերում և չվերջինների գլխի լուսալուսակների շուրջ: Մնացած մանրամասնությունները (դեմք, հագուստի ծալքեր և այլն) փորագրված են գրչով: Բացի դեմքերի մանրամասնություններից և հագուստների ծալքերից, որոնք կատարված են ճշտությամբ, հագուստների վրա կան ուղղահայաց զարդեր, որոնք բխում են ոսկերչական գույնով պարանից և երեքթեղյա գործվածքից և հարմարեցված են փորագրական արվեստի հնարավորություններին, այն ենթարկելով գծանկարի օրենքներին: Վերևի երկու հրեշտակների դեմքերը ներքևի երկու մարդկային կերպարների դեմքերի նման փորագրված են, միայն նրանց թևերի զարդանկարները գույնահարմարված են և շատ կապվում են, իրենց ոճով, կոնակի արծաթ դրվագման տեղերի հետ: Մնացած տարածությունը ծածկված է խաղողի տերևներից բաղկացած ֆոն կազմող աղատ զարդանկարներով: Դրվագումը ավարտելուց հետո, շրջազարդի ներսի և դրսի եզերքները առնվել են մեկ և երկու գույնով: Կարանների մեջ:

Կան 60 ակներ, որոնցից 25-ը կարմիր, 14-ը կանաչ, 10-ը սպիտակ և 9-ը կապույտ են (մնացած 2-ը պակասում են), ամրացված կլոր, քառակուսի և վեցանկյուն շրջանակների մեջ: Կարծում ենք, որ սրանց նպատակը ոչ միայն զարդարելն է, այլև պաշտպանել դրվագված մակերեսը, որովհետև այն կատարված է շատ բարակ ոսկի թերթի վրա, որն օգտագործման ժամանակ ենթակա է հաճախակի հարվածների և հյուսման: Ակների և նրանց շրջանակների բարձրությունն է 6 մմ., որոնք կատարում են կիսազնդվածների դեր և որոնց հաճախ հանդիպում ենք Վասպուրականի և ընդհանրապես Հայաստանի շատ կողմերից մեզ հասած ձեռագրակաղմերի վրա: Ակների կատարած այս դերը ապացուցվում է ակներից շատերի երեսների

մաշված վիճակից և մի քանիսի փշրվածությունից:

Ակները թանկարժեք և իսկական չեն (իսկական ակները դժվար են փշրվում), և ոչ էլ շատ հին, քանի որ այս տիպի արվեստական ակներ հնավոր անցյալում չէին պատրաստվում, Վասպուրական ներմուծված են առևտրական ճանապարհներով: Զեռագրակաղմերի ակները, որոնք տեղում են պատրաստված, հղկված երեսներ չունեն, այլ ձուլված զանգվածներ են, հաճախ գունավոր ապակիներից: Շրջազարդի վերևում և ներքևում կա արձանագրություն (նկար 2) ընդմիջված ակներով, ուր դրվագված ռելիեֆ տառերով




Նկար 3.—Ավետարանի արծաթյա կալմի երկրորդ կողմ

գրված է. «Տփս լշկէ խշա Միշդին Յվնս թմին րկիալը րդուն», որը վերծանվում է. «Տուփս յիշատակ է խոշայ Միշդին, Յովհաննէսին, Թամին, ռեկիս լր որդուն»:

Հավանաբար ֆոնը կազմող դրվագումը և արձանագրությունը կատարվելուց բավական հետո, այն պահպանելու համար ավելացրել են ակների շրջանակները, մանավանդ որ շուրջի պարանների մեջտեղի եզրազարդ սերտորեն կապվում է ներսի ֆոնի հետ և շարունակությունն է ֆոնի զարդին և առանձին զարդանկար չի կազմում:

Առաջին կողմի պատկերաքանդակների մեջ լավագույն դրվագվածը, իր ռելիեֆով, հաս-



Նկար 2.—Ավետարանի կալմի առաջին կողմի վերևի և ներքևի արձանագրությունը

կանայիտությանը և զգացման հաղորդակից դարձնելու ունակությանը, կենտրոնի Անտ-վաժածների և մանուկ Հիսուսի քանդակն է, գրվազված մեծ վարպետությանը և ճարտարությանը: Մնացած շորս կերպարները ավելի զարդ-կերպարներ են, քան պատկերաքանդակներ և լավ են միաձուլվում ֆոնի ծաղկազարդման հետ:

Երկրորդ կողմը (նկար 3) իր ընդհանուր դասավորումով գրեթե հար և նման է առաջինին, որտեղ զարդ-կերպարներին փոխարինում է ամբողջովին օրնամենտալ լուծումը: Դրվազման ոճը հար և նման է առաջինին, սակայն ֆոնի գծանկարը տարբերվում է նախորդից այնքանով, որ այստեղ զարդանկարները դարձնալով են և ենթակա ավելի խիստ գծագրական օրենքների, նախորդի փոխաբեն, որի զարդանկարային ֆոնը ավելի ազատ գծանկարով է: Մոտավորապես նույնանման զարդանկարների հաճախ ենք հանդիպում հայկական մանրանկարչության, ճարտարապետության և կերպարվեստի այլ բնագավառներում, սակայն այստեղ գծային մշակումը շատ հարմար է մետաղային արվեստներից պահանջվող լարայնությանը, և մանրանկարային արվեստի մեխանիկական կրկնությունը չի կազմում: Այստեղ էլ վարպետը չի ենթարկվել խիստ կանոնների և հնարավոր շափով, առանց խախտելու զարդանկարի ձգտումը դեպի կանոնավորությունը, աշխատել է ազատ, պահելով ոսկերչական ձևերի մի այնպիսի ճկունություն, որն ուրիշ նյութի վրա դժվար թե ստացվեր: Շուրջի զարդանկարը շատ նման է առաջին կողմին և նրա նման երիզված է զուգաթիվ պարաններով: Այս երկու կողմերի դրվազման ֆոնը կենտրոն առաջացնող հարվածների լուծումով է և ստացված է դրվագի ծայրի տափակ մակերեսի վրա գտնված շախմատանման գծիկներից, որոնք հարվածելով ստացվում են նույնաձև կենտրոն շրջված միջնակում: դրանք դրոշմելով հարվածը ընդունող մետաղի վրա: Շրջազարդի վրա և ներսի 4 անկյուններում կան 36 ակներ, որոնցից 13-ը կարմիր, 13-ը կանաչ և 3-ը սպիտակ: 7-ը ակներ պակասում են:

Շրջազարդի վերևի և ներքևի շարքերի վրա, ակներին մեջընդմեջ կա հետևյալ արձանագրությունը (նկար 4)։ «Եւ յ յա Սլ ա յր-

գիսն, Խ[յ] յա Գր[ի] զ[յ] յն»։ Իսկ ինչ վերաբերում է կենտրոնի Անտվաժածների և մանուկ Հիսուսի պատկերաքանդակին, այն շատ նման է առաջին կողմի կենտրոնի նույն կերպարներին, անշան տարբերությամբ, այսինքն Անտվաժածնի աջ ձեռքի փոքրությամբ և ֆոնի մշակման մանրությամբ: Արդյո՞ք այս երկու պատկերաքանդակները մի ընդհանուր կնքոցով (դրոշմահայր, poinçon) խփված չեն, որովհետև այնքան նման են նրանք իրար և նույն շափի են, նույնիսկ շրջագծերում:

Վերոհիշյալ երկու պատկերաքանդակներից ամեն մեկի դեմքերի և հագուստների մանրամասնությունները մշակված են դրվագումով: Ի տարբերություն առաջին կողմի շուրջի զարդ կերպարներին, որոնց մանրությունները մշակված են փորագրությամբ, իսկ նրանց կամարակապ շրջանակների ներսի ֆոնը՝ թեթև ճաճանշազարդ դրվազմամբ: Այս երկու կողմերի զարդանկարները, դրվագումից հետո, մշակված են տափակ և փայլուն կոնակ ունեցող գրիլներով, և այս էլ հավանաբար նորոգումից անմիջապես հետո, մի քիչ վնասելով դրվազման որակին, ստեղծելով ոճի բնորակախտություն (éclatisme): Երկրորդ կողմի ձախ կողմում, վերևում և ներքևում, կան 2 փականների հիմքերը, իսկ առաջինի աջ կողմում, նույն դասավորությամբ, կան նույն փականների հենակետերը, ուր անցյալում անցկացրել են փականների ծայրերը: Այժմ այդ փականների շարժական մասերից, այսինքն այն ժանեկանման մասերից, որոնք հավանաբար ոսկի շղթայից կամ մետաքս ժապավեններից են եղել, մնում է միայն երկրորդ կողմի ցածի հիմքի մեծ օղակը:


Ամենազեղեցիկ և ամենակատարյալ օրնամենտալ լուծում ունեցող մասը կազմի կոնակն է (նկար 5), որը արծաթից է: Այստեղ վստահաբար նա փոխարինում է անցյալի կոնակը և թերևս նոր վարպետը աշխատել է նմանեցնել անցյալի կորած կամ օդտազործումից մաշված կոնակին:

Ներկա միջնակում նա 0,6 միլիմետր հաստությամբ, երկու զուգահեռ, ուղղահայաց թերթերից է կազմված, որոնց վրա դրվազված են հայկական մանրանկարչության յուրահատուկ եղող ամենազեղեցիկ բուսական ոճավորված զարդանկարներ, որոնք հատուկ են ժե դարու հայկական արծաթագործության: Այս երկու զուգահեռ թերթերի վրայի դրվագումը նախորդ երկու կողմերի դրվագումից տարբերվում է իր կատարման ճշտությամբ և գծերի հստակությամբ: Տերևների շրջագծերից ներսի մասի մշակումը, երկու կողմերի տերևների նման, զուգահեռ գծիկներով է կատարված: Պարզ է, որ այս կազմի կոնակը դրվագող վարպետը ձգտել է մի ընդհանուր-

ԻՆԶՕԱՄԲՕԳԻՕՄԵ

ԽԶՕԳԻՐՕԳԻՐՕՆ

Նկար 4.—Ավետարանի կապի երկրորդ կողմի վերևի և ներքևի արծաթագրությունը




Նկար 5.—Ավետարանի կապմի կոնակը

թյուն մտցնել կողերի և կոնակի ոճերի միջև և տերևների շրջագծերը մշակելիս, օգտագործել է տափակ կոնակով գրիչ, այն մի քիչ թեթևելով: Դրվագումը կատարված է շատ քիչ խորությամբ և հավանաբար մեկ պրոցեսով: Այս երկու դրվագված թերթերի ձախ և աջ կողմերի վերևում և ներքևում կան զուգաթել պարաններ, հետևյալ դասավորությամբ: վերևում և ներքևում 2 զուգաթել, դրսի ձախ և աջ կողմերում 2 զուգաթել, իսկ 2 թերթերի ներսի հանդիպակաց կողմերում 1-ական զուգաթել պարան, որպես եզրափակիչ զարդ: Երկու ուղղահայաց դրվագված թերթերի մեջտեղի շերտի և կոնակի երկու կողմերի վրա, այնտեղ, ուր նրանք հանդիպում են երկու կողերին, ուղղահայաց, թերթերին զուգահեռ, շարված է այն դասական շղթաներից, որոնց նմաններին հաճախ կարելի է հանդիպել Վասպուրականի արծաթյա կազմերի վրա (օրինակ՝ Մատենադարանի № 5637, 6276 և այլ ձեռագրակազմերի կոնակների վրա): Նրանք բաղկացած են մանր գնդիկներից, ո-

րոնց ամեն մեկի երկու ծայրերին մածուցված են կլոր թելից պատրաստված 2-ական, իսկ տվյալ դեպքում՝ ծխնու մասում, 3-ական օղակ, աղյուսանման դասավորմամբ: Այս օղակների անցքերի միջից անցնում են արծաթ կլոր կտրվածքով թելեր, որոնք շղթայանման այս գործվածքին տալիս են լայն և տարածուն տեսք: Երկշարք դրվագումը և նրանց եզերող երեք շարք շղթայակերտ գործվածքը ստեղծում են շարժական մի ամբողջություն, որը հեշտացնում է ձեռագրի բացվելը ընթերցանության ժամանակ, ծալելով կոնակը: Սրանով է բացատրվում նախորդ կոնակի մաշվելը և նորի կերտումը:

Դոնակը (նկար 6) թեև ոսկուց է և փոփոխման չի ենթարկվել ինչպես կազմի կոնակը, սակայն այնքան վնասված է օգտագործվելուց, քանի որ ամենագործածական և ամենաշարժուն մասերից մեկն է կոնակից հետո, որ հետագա նորոգության ժամանակ այն ամբողջությամբ են 0,4 մմ. հաստությամբ մի արծաթ թերթի վրա, որն իր հերթին ամրացվել է կաշ-



Նկար 6.—Ավետարանի կապմի դոնակը

վի վրա: Այս բոլորը ամրացված են տեղում 19 զամերով:

Այս դռնակի մակերեսի մոտավորապես 25 ս.սկսը պակասում է ձախից, այսինքն այն կողմից, որտեղից նա կապվում է երկրորդ կողի հետ: Նրանց միացումը կազմող շղթայանման կերտվածքից այժմ շատ քիչ օղակներ են մնում, օգտագործվելուց թափած լինելով: Վերոհիշյալ պակաս մասի շրջագիծը ծուռումուռ է և 19 զամերի մեծ մասը ամրացնում են թափվելուց պակասած սույն կողմի վրա: Դրվագված է 2 կողերի ոճով, կենտրոնի ուղղահայաց շարքի վրա ունենալով 4 իրարահաջորդ խաչեր, որոնց վրա խոր գծային փորագրությամբ կա հետևյալ արձանագրությունը (Նկար 7). «Խաչայ Աւտ. Խաչայ

ԽՈԱՅ ԱՄԻ ԽՈԱՅԻՍ ԽՈԱՅՎԱ ԶԱՂԱՆ


Նկար 7.—Ավետարանի դռնակի արձանագրությունը

Աւիս, Խաչայ Սֆար, Յաղսն» (Խ[ո]լայ Ավ[ե]լտ. Խ[ո]լայ Աւիս (կամ Աւետիս). Խ[ո]լայ Ս[ա]ֆար. յաղոթսն): Այս խաչերը հայկական խաչի դասական ձևը չունեն: Դռնակի վերջացած մասում, այսինքն այն կողմը, որ վնասված չէ, դրվագված են հինգ աղավնիներ, որոնց ձևը հիշեցնում է մեռու՜նաթափ աղավնուն: Վստահաբար կարող ենք ասել, որ մյուս, ներսի պակասած կողմում

էլ քանդակված են եղել նույն թվով աղավնիներ, քանի որ այժմ էլ նրանցից մեկի մարմինը հստակորեն երևում է վերևից երկրորդ աղավնու դիմացը: Կան 9 ականեր նախորդների որակից: Դատելով գոյություն ունեցող ակաների դասավորումից, կարող ենք ասել, որ մյուս կողմն էլ եղել են 3 ուրիշ ականեր, բարձրացնելով այս դռնակի վրայի ակաների թիվը 12-ի: Գոյություն ունեցող 9 ականներից 1-ը կանաչ է, 2-ը կապույտ, 5-ը կարմիր և 1-ը մանուշակագույն:

Այս կազմի ամենաարժեքավոր և հիշարժան մասերն են երկու կողերի կենտրոնի Աստվածածնի և մանուկ Հիսուսի պատկերաքանդակները, որոնց դեմքերի թախձոտ արտահայտությունը գրավում է դիտողին: Ուշադրության արժանի են նույնպես կռնակի և դռնակի վրայի աղավնիները, իրենց գեղեցկությամբ:

Կարծում ենք, որ այս ոսկյա ձևագրակազմի դրվագումը կատարված է Վանում, քանի որ առաջին կողի պատկերաքանդակի երկու կողմերի և նրանց ներքևի զարդ-կերպարների դրվագման ոճը նման է Մատենադարանի № 6776 ձևագրի (Նկար 8) արծաթապատ կազմի վրայի պատկերաքանդակների ոճին, որոնք նույնպես ունեն զարդ-կերպարի բնույթ: Մատենադարանի № 6776 ձևագրի արծաթ կազմի կռնակի ներքևի մա-



Նկար 8.—Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի № 6776 ձևագրի արծաթապատ կազմը

սում կա փորագրված արձանագրություն, ըստ որում այդ ձեռագիրը արժաթապատվել է 1651 թվականին, Արծկե գյուղաքաղաքում (ի գիւղըն Գաղղայ):

Նկատի ունենալով, որ էջմիածնա այս ձեռագրակաղմը ավելի հին է (այդ մասին վկայում է նրա ներկա վիճակը), քան Մատենադարանի № 6776 ձեռագրի կաղմը, կարող ենք ասել, որ այս կաղմը ԺԶ դարից ուշ չէ և հավանաբար Մատենադարանի № 6776 ձեռագրակաղմը Զիրաքի (?) ստեղծած «գպրոցի» շարունակությունը կաղմող մի վարպետի աշխատանք է: Եթե նկատի ունենանք, որ սույն ձեռագիրը գրված է 1484 թվականին, և որովհետև երեսի կաշին էլ (որի հնանալու պատ-

ճառով, հաճախ, երեսապատում են մետաղով) ընդհանրապես 50-ից 100 տարի կարող է գործածության դիմանալ, կարող ենք ենթադրել, որ կաղմը կատարված է առավելագույնը ԺԶ դարի վերջերին:

Առաջին և երկրորդ կողերի արձանագրությունների մեջ գտնվող անունները շատ հավանաբար գլխավոր նվիրատուների անուններն են, իսկ զոնակի անուններն էլ երկրորդական նվիրատուներին: Այս նվիրատվության հավաքականությունը բացատրվում է նյութի թանկարժեքությամբ, քանի որ մի մարդու համար դժվար կլիներ այս մեծ ծախսը հոգալ:





2. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԿՈՂՐ ԳՅՈՒՂԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՏԱՃԱՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

1. Պեղումների ընթացքը.— Կողը գյուղը գտնվում է այժմյան Նոյեմբերյանի շրջանում, Երևան—Քրիլսի երկաթուղու Այրում կայարանից տասը կիլոմետր հեռու, շրջանային կենտրոն հանդիսացող Նոյեմբերյան տանող խճուղու վրա: Գյուղը տարածվում է Կողը գետակի երկու կողմերում, նրա վերին հոսանքում:

Կողը գյուղը Հայաստանի հնագույն բնակավայրերից մեկն է: Հայ պատմիչները Մեծ ավան, Փաղաքագյուղ անուններով են կոչում այն: Նա եղել է Գուգարք նահանգի Կողրոփոր գավառի վարչա-քաղաքական կենտրոնը:

Արարական տիրապետության շրջանից Կողքի վրայով էր անցնում միջազգային տարանցիկ առևտրի գլխավոր ճանապարհների՝ արևելքից դեպի արևմուտք գնացող մի ուղեգիծը: Այդ հանգամանքը մեծ լափով նպաստել է նրա տնտեսական ու մշակութային կյանքի զարգացմանը:

Կողը գետակի հովտի այդ մասը, ուր տարածված է Կողը գյուղը, արևելյան, արևմտյան և հյուսիսային կողմերից եզերվում է բարձր բլուրներով, որոնց զազաթների պահպանվել են հին ամրոցների մնացորդներ. իսկ հարավային կողմից հովիտը պահպանված է բարձր լեռնաշղթայով:

Հնագիտական հետազոտությունները Կողքի սահմաններում հայտնաբերել են շուրջ 14 հին գյուղատեղիներ, որոնց մեծ մասը պահպանել են իրենց սկզբնական անունները, ինչպես օրինակ՝ Հին Կողը, Խլազոմ, Վարդաբեղ, Հաքուտ, Տանձուտ, Ղամշուտ, Առա-

քելոցք, Սալերք, Բովեր (Պղնձահան), Տվարաբեղ, Մատռաձոր և այլն: Բոլոր այդ գյուղատեղիներում պահպանվել են հին եկեղեցիների շենքերը և գերեզմանոցները, ավերակ ու քայքայված վիճակում:

Կողքի սահմաններում են գտնվում բազմաթիվ այլ հուշարձաններ, որոնք վերաբերում են Ծն և Ժե—ԺԹ դարերին: Դրանց թվում հատկապես աչքի է ընկնում ԺԱ—ԺԳ դարերին պատկանող Մշկավանք նշանավոր մենաստանը (նկար 1 և 2), որի կառուցվածքները եզակի են հայ ճարտարապետության պատմության մեջ: Նշանավոր է նաև Տվարաբեղի կոչվող միանավ բազիլիկ ձևի խոշոր եկեղեցին, որի կառուցման ձևը խիստ բնորոշ է Ծ—Ջ դարերին: Առանձին հետաքրքրություն են ներկայացնում նաև շքեղ քանդակներով զարդարված բազմաթիվ կոթողները, խաչքարերը և մահարձանները:

Կողը գյուղի սահմաններում պահպանված նյութական մշակույթի այդ հարուստ հուշարձաններից զատ, գյուղատնտեսական և շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերված բազմաթիվ կարասներն ապացույց են այն բանի, որ հնում այստեղ բարձր զարգացման են հասել խաղողագործությունն ու պտղաբուծությունը:

Կողը գյուղի սահմաններում եղած նյութական մշակույթի ոչ բոլոր հուշարձաններն են հայտնի գիտությանը. նրանց մի մասը դեռ ծածկված է հողով: Այդպիսի հուշարձաններից մեկն էլ այն տաճարի շենքն է, որի պեղման աշխատանքներին ձեռնամուխ եղանք 1939—1940 թվականներին:



Նկար 1.—Մշկավանքը Բարավ-արենիքից

Պեղվող հուշարձանը գտնվում էր Կողբ գյուղի հյուսիս-արևմտյան եզրին, բարձրադիր վայրում, փոքրիկ հարթակի վրա։ Այդ հարթավայրը հյուսիսային կողմից հգերվում է լեռնային հեղեղատի փոքր ձորակով, արևմտյան կողմից հարակցվում է լեռնաշարքին, հարավային կողմից ձգվում է Կողբ գետակի հարթ հովիտը, ուր հաստատվել է գյուղի մի մասը, իսկ արևելյան կողմից մի զառիվայր իջնում է մինչև գետակի ձախ ափը։ Նշված զառիվայրն ամբողջապես պատած է խաղողի և մրգատու ծառերի այգիներով։

Մինչև ժԹ դարի վերջերը կանգուն էին տաճարի պատերը, Գյուղի բնակիչները շենքի կանգուն մասերը և քարն օգտագործում են բնակարանային շինարարության համար։ Այսպիսով ամբողջապես ավերվում է այդ հուշարձանը և ծածկվում հողի հաստ շերտով։

Հետագայում, այդ փլատակների վայրում տեղացիք մի խաչքար են կանգնեցնում և դարձնում ուխտատեղի։ Եվ որովհետեւ թուլունները շատ հաճախ կանգնում էին այդ խաչքարի վրա ու կեղտոտում այն, ուստի տեղացիք «Սոտախալ» անունն են տալիս։

Նախքան պեղման աշխատանքներն սկսելը, հետազոտելով հնագիտական վայրի մակերեսը, պարզվեց, որ արևելյան կողմից նկատվում են քարուկիր շարվածքի հետքեր և մի քանի գերեզմանների իրենց տապանաքարերով։ Ինչպես նոր բացված, այնպես էլ մինչ պեղումները երևացող տապանաքարերը մոխրագույն բազալտանման հանքաքարից էին, ոմանք տափակ-հարթ երեսով, ոմանք կողերից աստիճանավոր, իսկ ճակատներից վեղարած։ Գերեզմանաքարերից մեկն ուներ վրացերեն խուցուրի տառերով գրված կարճ տապանագրություն։

Այնուհետև պեղման աշխատանքները փոխադրվեցին հարավային, հյուսիսային և արևմտյան կողմերը։

Այդ աշխատանքների ժամանակ բացվեց հաև պեղվող հուշարձանի արևելյան արսիղը՝ 3,0×3,90 մետր տարածությամբ, ընմի սալահատակը՝ զետից 0,30 մետր բարձրությամբ, որի մեծ մասը քանվղած էր։ Պեղման այդ երկու մասերումն էլ հողաշերտը փլվածքային էր, սևահողային ու փափուկ և հարուստ հնագիտական ամեն տեսակի իրերով։

2. Հայտնաբերված հնագիտական իրերի նկարագրությունը.— 1939—1940 թվական-



Նկար 2.—Սղեզավանքի զավթի ներսի տեսքը

ների հնագիտական պեղումների ընթացքում հայտնաբերվեցին մեծ քանակությամբ շատ հետաքրքիր ու արժեքավոր իրեր, որոնց մի մասը փոխադրվեց Սանահինի վանքում կազմակերպված թանգարանը, իսկ մնացած մասը պահպանության հանձնվեց տեղում:

Հայտնաբերված իրերի մեջ մեծ թիվ են կազմում խեցեղեն (կավե) իրերը: Դրանց մեջ խիստ բնորոշ էին սալաձև և կիսախողովակաձև կղմինդրները, որոնք տարբեր մեծությամբ էին և որոնցով սովորաբար հնում ծածկում էին եկեղեցիների տանիքները:

Կիսախողովակաձև կղմինդրներից ոմանք մի ծայրում վեղարաձև էին՝ բարձրաքանդակներով զարդարված: Բարձրաքանդակները տարբեր ձևերի էին, գլխավորապես բուսական և հավասարաթև խաչերի ձևով: Մի կիսախողովակաձև կղմինդրի վեղարաձև ծայրի վրա քանդակված էր մի երեխայի պատկեր՝ վանդակավոր ձևի գործվածք ունեցող կտորի հագուստով, խաչը ձեռքին բռնած:

Հատկապես ուշագրավ էին այն խեցեղեն իրերը, որոնք անցյալում գործադրում էին շենքերի երեսապատ մասերը՝ զարդարելու նպատակով: Դրանք թրծած կավի քառակուսաձև, հավասարաչափ քարակ սալիկներ էին, որոնց եզրերը զարդարված էին գնդաձև, մարգարտաշար քանդակներով, իսկ մի երեսի վրա՝ զանազան կենդանիների, թռչունների

րի և միջատների բարձրաքանդակ պատկերներով:

Խեցեղեն իրերից հիշատակության արժանի են նաև թրծած կավից երկու փոքրիկ, պատվանդանավոր խնկամաններ, մի ձեթի ճրագ, ինչպես և սև ու կարմիր կավե փոքրիկ ամանների մի քանի կտորներ, որոնք հայտնաբերվեցին զխավոր արսիդի բեմի առջևի մասում:

Առանձնապես մեծ թիվ էին կազմում հայտնաբերված քարի կտորները: Դրանց մեջ, քաջի շենքի պատերի բազմաթիվ սրբատաշ քարերից ու թաղի ծածկի քարերից, մեծ հետաքրքրություն էին ներկայացնում կոթողները և նրանց բեկորները: Դրանք գլխավորապես քառակող էին, զարդարված բուսական շքեղ քանդակներով, բարձրաքանդակ սրբապատկերներով և հավասարաթև խաչերով, որոնք մշակված էին վերին աստիճանի նուրբ ձևերով: Բուսական ձևի քանդակների մեջ հատկապես աչքի էին ընկնում արմավենու տերևաձև, խաղողի ողկուղաձև և վարդաձև քանդակները (նկար 3, 4, 5):

Կոթողների մեջ հանդիպում էին նաև գլանաձև բներ ունեցողներ, որոնք մի ծայրից քառակողմ էին՝ խարիսխի կամ խոյակի նմա-



Նկար 3.—Տաճարի պեղումներից հայտնաբերված մի քառակող կոթող

նությունը, որի կողերը զարդարված էին բուսական և մարդատաշար-զոտկավոր քանդակներով (նկար 6):

Մի շարք բեկորներ վեցակող էին, որոնց չինգ կողերը հարթ էին, իսկ վեցերորդ կողը պատած էր կրկնաշար թերթիկավոր վարդաքանդակներով: Ամենայն հավանականությամբ, այդ քեկորների կոթողի մաս լսվածի լինելն, այլ նրանք պետք է հանդիսացած լինեին շենքի որևէ մասը: Դրան որպես ապացույց կարող է ծառայել Կոտայքի շրջանի Ավան գյուղում գտնվող 2 դարի եկեղեցին, որի արևմտյան մուտքի շրջանակը շարված է նույն ձևով մշակված և նման քանդակներ ունեցող քարերով:

Հայտնաբերված քարե բեկորների մեջ առանձնապես հետաքրքիր էին խաչքարերի մնացորդները, որոնք զլխավորապես դտնվում էին եկեղեցու բեմի առջևում: Դրանց մի տեսակը սովորականի պես աափակ սալաքարերի ձևով էին՝ մի հրեսը բոլորովին հարթ, իսկ մյուս երեսի վրա խաչ քանդակված: Վերջինս ամփոփված էր լինում քանդակազարդ ծուխան արխայիկ ձևերով, ինչպես սրինակ՝ արմավենու տերևաձև, վարդաձև, պտուտակաձև և այլ մոտիվներով (նկար 7):



Նկար 5.—Պեղվող տաճարի ներքին Ոարդարանքի բեկորներից



Նկար 4.—Տաճարի պեղումներից Ոայտնաբերված մի ալքաակող կողող

խաչքարերի մյուս տեսակը հավասար, աղատ թևեր ունեցող խաչքարերն են, մեծ մասամբ քանդակազարդված երկու երեսներին էլ: քանդակները զլխավորապես բուսական ձևեր են: Այդ ձևեր խաչքարերից մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Զվարթնոցի և Դվինի ուղղումներից, որոնք վերադրվում են 2—3 դարերին:

Հուշարձանի արևմտյան մասը պեղելիս հայտնաբերվեցին մի շարք սյունաձև կոթողներ և քառակողմ սալաքարեր: Սյունաձև կոթողների մի մասի ընկեր գլանաձև էին ու հարթ, մի ծայրից քառակողմ՝ խոյակի նմանությամբ, որոնց չորս կողմերն էլ զարդարված էին բուսական նույն քանդակներով: Այդ ձևեր կոթողների երկու հակադիր կողմերում, սմբողջ երկարությամբ փորված էին խոր փոսեր: Կոթողների մնացած մասը քառակողմ էր՝ պատած արմավենու տերևաձև քանդակներով: Դրանցից՝ ոմանց մի ծայրը զնդաձև էր (նկար 8):

Քառակողմ սյուները շատ բարակ էին, մի երեսը հարթ, իսկ մյուս երեսը պատած էր վարդաձև զարդաքանդակներով: Դրանց երկու հակադիր կողերի եզրերը նեղ շերտով բալակցված էին:



Նկար 6.—Գլխածև կոթող Կողբի տաճարի պեղումներից

Վերոհիշյալ բեկորների մշակման առանձնահատուկ ձևերը, ինչպես և նրանց հուշարձանի արևելյան արսիդի առջևում գտնվելու փաստը հաստատում է, որ նրանք շարված են եղել բեմի առջևում, իրար հետ միացված, կազմելով բեմի առջևում մի տեսակ ցանկապատ, հունդափան եկեղեցիների ձևով։ Կառուցման այդ ձևը խիստ բնորոշ է ու հատուկ նաև վրացական եկեղեցիներին, առանձնապես Ժ—ԺԳ դարերում։

Միաժամանակ հուշարձանի արևելյան գլխավոր արսիդի բեմի առջևի մասից հայտնաբերվեցին քանդակազարդ այլ բեկորներ, որոնք ամենայն հավանականությամբ պետք է հանդիսացած լինեին բեմի առջևում եղած ցանկապատը զարդարող մասերը։ Բեկորների վրա եղած վարդաքանդակները խիստ բազմազան էին. առանձնապես աչքի էին ընկնում բուսական ու երկրաչափական ձևերը, մարդկանց, կենդանիների և թռչունների քարձրաքանդակ պատկերները և ուրիշներ։ Բոլոր այդ բեկորները շարդոտված էին մանր կտորների, ուստի նրանց բովանդակությունը, այդ վիճակում, ստույգ որոշելը հնարավոր չէ։ Սակայն մի բան պարզ է, որ դրանք հուշարձանի վրա գլխավորապես ունեցել են դեկորատիվ նշանակություն։

Պեղումներից ստացված նյութերի մեջ առանձին ուշագրություն արժանի էին ապակյա իրերը, որոնք գլխավորապես դուրս էին գալիս հուշարձանի արևելյան գլխավոր արսիդի վրայից։ Դրանց մեջ հատկապես աչքի էին ընկնում ձեռքի ապարանջանների կտորները, սև ու կապույտ գույնի, ոմանք հարթ, ոմանք էլ պտուտակաձև քանդակներով։ Հայտնա-

բերվեցին նաև ապակյա անոթի մի քանի կտորներ, որոնցից երկուսը խոզովակաձև էին, բարակ, մի ծայրը զնդաձև։

Պեղումներից հայտնաբերվեցին նաև փայտի մնացորդներ, որոնցից մի կտոր ընկած էր հուշարձանի հարավային մուտքի հատակին և որը հավանաբար դուռն շրջանակի ստորին մասը եղած լինելու։ Մի փոքր փայտի կտոր էլ հայտնաբերվեց հարավային խորանում, երկու կտորներն էլ սաստիկ փտել, փոշիացել էին։

Չափազանց սահմանափակ էին մետաղյա իրերը։ Բացի մի քանի երկաթյա սովորական զամբրից ուրիշ ոչ մի մետաղյա իր չհայտնաբերվեց։

Հուշարձանի վրա եղել են գրավոր հիշատակություններ, հայերեն և վրացերեն լեզուներով փորագրված, որոնց առանձին մասերն էին պահպանվել փոքրիկ բեկորների վրա։ Վրացերեն լեզվով արձանագրությունները գրված էին խուցուրի կոշիկով տառանիշերով և փորագրված էին քանդակազարդ սալաքարերի եզրաշերտերի վրա և սյունածև կոթողների ճակատամասերում։

Հայերեն լեզվով գրված արձանագրությունները կատարված էին բոլորագիր երկաթագրերով, ոմանք քարձրաքանդակ ձևով։ Մի քանդակազարդ քարի փոքրիկ բեկորի հորիզոնական ուղղությամբ ձգվող ժապավի-



Նկար 7.—Հնագույն խաչքար Կողբի տաճարի պեղումներից

նաձև մասի վրա պահպանվել էր բարձրաքանդակ ձևով գրված արձանագրության հետևյալ մնացորդը. «... ԻՆՃ և ամենայն ժգն.» (սինձ և ամենայն ժառանգաւորացն»), Շատ հետաքրքիր են այդ նույն բեկորի վրա եղած դարդաքանդակները. արձանագրության մնացորդը կրող ժապավինաձև շերտից վերև նկատվում էին պտուտակաձև քանդակներ ունեցող զլանաձև կիսասյուների մասերը: Ժապավինաձև շերտից ներքև, նույն երեսի վրա, քանդակները ցանցաձևով քային էին, քառակուսաձև անցքերով: Բեկորի հակառակ երեսի ամբողջական մնացած մասերի վրա նկատելի էին կրկնաշար թերթիկներով վարդաձև բարդ քանդակներ: Մեկ ուրիշ քանդակազարդ փոքրիկ բեկորի վրա պահպանվել էր արձանագրության «... սյս. ևտու» (սեպիսկոպոս ևտու) մասը միայն. իսկ մի այլ, համեմատաբար մեծ բեկորի վրա կարդացվում էին «... և ամենայն ժառանգաւորաց» բառերը (նկար 9, 10): Կային մի շարք բեկորներ, որոնց վրա պահպանվել էին առանձին տառեր, որոնց հիշատակությունը կարևոր չենք համարում:

Բացի քարերի վրա եղած արձանագրությունների մնացորդներից, գրավոր հիշատակության հետքեր էին նկատվում նաև պատերի ծծփի առանձին կտորների վրա: Օրինակ, մի փոքրիկ կտորի վրա նշմարվում էին



Նկար 9.—Հայերեն արձանագրության մնացորդներով հնագույն բեկորներ Կողբի տաճարի պեղումներից

Ա Գ Ե տառերը, գրված սև ու կարմիր գույնի ներկերով:

3. Եզրակացություններ.—Կատարված պեղումները և պահպանված մասի ստուգողական փորումները հնարավորություն են տալիս որոշակի հետևություններ անելու հուշարձանի ինչ լինելու և ընդհանրապես պեղումների արդյունքների մասին:

1. Պեղվող հուշարձանը մի եկեղեցու շենք է, որի կառուցման ձևերը շատ նման են Սժուռի և Սրբերուցի տաճարների ճարտարապետական ձևերին, որպես դրանց նախատիպը: Եկեղեցին արևելյան կողմից ունեցել է արսիդ՝ ցածրիկ բնով, որի երկու կողմերում եղել են մեկական խորան: Հարավային և հյուսիսային կողմերից ունեցել է սրահներ, երկուական կամարակալ բացվածքներով, որոնք իրարից անջատվելիս են եղել քարե ամբողջական սյուներիով: Սյուների բները զլանաձև են եղել, խորխոսներով ու խոյակներով, կազմված ամբողջական քարերից:

2. Պատերի արտաքին երեսապատը շարված է եղել սրբատաշ մեծ քարերով, իսկ ներսի կողմից՝ անմշակ մանր քարերով, կրաշաղախով մածուցված:

3. Պատերը ներսից ծծփված են եղել կրաշաղախով և պատած որմանկարներով ու ներկագիր արձանագրություններով:

4. Եկեղեցու ծածկը թաղակապ է եղել, երկթև տանիքով, որը պատած է եղել սալաձև ու կիսախողովակաձև կղմինդրներով: Կիսախողովակաձև կղմինդրները մի ծալից վեղարաձև են եղել, պատած հավասարաձև խաչերի և մալուխանց բարձրաքանդակ դարդաքանդակներով և գործադրվել են միացման նպատակներով:

Եկեղեցու պատերին կից, ներսի կողմից ձգվելիս են եղել երկուական ուղղանկյուն որմնասյուներ, համապատասխան խորխոսներով ու խոյակներով, որոնք միանալով կամարներով, ղոտկելիս են եղել թաղակապ



Նկար 8.—Գեղան ծալքով քառակող կողող Կողբի տաճարի պեղումներից



Նկար 10.—Հայերեն արձանագրության մնացորդներով Քնազույն քեկորներ Կողբի տաճարի պեղումներից

ծածկել: Սրահները որմնասյուներ շեն ունեցել, ապա և ոչ էլ դրանք միացնող կամարներ, այլ ծածկի թաղի եզրերը անմիջապես հենվելիս են եղել պատերի վրա: Կղմինդրների դասավորության ձևը՝ գետնի վրա, ցույց է տալիս, որ շենքը փուլ է եկել հյուսիսից զեպի հարավ ընկնելով:

5. Գլխավոր մուտքերից մեկը բացվելիս է եղել շենքի հարավային կողմից, կենտրոնական մասից, սրահի միջից: Նման մեկական մուտքեր էլ, ինչպես այդ պարզվում է շենքի ընդհանուր դասավորությունից և կատարված ստուգողական փորումներից, պետք է բացվելիս լինեին հյուսիսային և արևմտյան կողմերից:

6. Եկեղեցին ունեցել է շատ հարուստ ու շքեղ հարդարանք, որոնք մշակված են եղել վերին աստիճանի նուրբ ձևով: Զարդաքանդակների մեջ գերակշռող են եղել բուսական ձևերը, հատկապես արմավենու տերևաձև, խաղողի ողկուղաձև ու տերևաձև, վարդաձև և ծաղկատերև քանդակները: Քանդակագործության այդ ձևերը մեծ չափով տարածված են Ե—է դարերին պատկանող հայկական եկեղեցիների վրա: Առանձին հետաքրքրության արժանի էին նաև մարդկանց, կենդանիների, թռչունների և միջատների քարձրաքանդակ պատկերները, որոնք հանդիպում էին ոչ միայն քարերի, այլև խեցեղեն մնացորդների վրա:

Եկեղեցու զարդաքանդակների շարքում հատկապես աչքի էին ընկնում կրաշաղախից պատրաստված քանդակները և որմնակարները:

7. Կողբի պեղված եկեղեցին պետք է պատկանի Ե—Ձ դարերին:

Հուշարձանի կառուցման ժամանակը որոշելու խնդրում մեծ նշանակություն ունեն

նաև հայտնաբերված բեկորները, ինչպես և քանդակագործության ձևերը: Այդ տեսակետից առանձնապես հետաքրքիր են կոթողները և նրանց բեկորները, որոնք մեծ տարածում ունեն Սոփիտական Հայաստանի զանազան վայրերում: Այդ կոթողներից բավական թվով հայտնաբերել է հանդուցյալ ճարտարապետ Թորոս Թորամանյանը՝ Քալինի շՇՐյանում, որոնք վերագրվում են Ե—է դարերին: Բացի կոթողներից, պեղումներից հայտնաբերված բազմաթիվ հավասարաթև խաչքարերն իրենց բնորոշ զարդաքանդակներով, որոնցից մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Ջվարթնոցի և Դվինի պեղումների ժամանակ, ինչպես և ուրիշ շատ վայրերից, նույնպես վերագրվում են Ե—է դարերին:

Ինչ վերաբերում է զարդաքանդակների բազմապիսի ձևերին, ինչպիսիք են արմավենու տերևաձև, խաղողի ողկուղաձև, ցանցահյուսվածքաձև, վարդաձև, ծաղկատերև և մի շարք այլ ձևեր, ապա դրանք լայն չափով տարածված են Ե—է դարերին պատկանող հայկական համարյա բոլոր եկեղեցիների, վանքերի և մյուս կառուցվածքների վրա:

Պեղումների ժամանակ հայտնաբերված մեծ քանակությամբ կղմինդրները, որոնցով պատած է եղել եկեղեցու տանիքը, նույնպես վկայում են հուշարձանի կառուցման ժամանակի մասին: Դվինի և Ջվարթնոցի պեղումները վերջնականապես հաստատեցին, որ հայկական հնագույն եկեղեցիների տանիքները գլխավորապես պատած են եղել միևնույն ձևով մշակված կղմինդրով: Այդ բոլորն ի միասին հնարավորություն են տալիս համոզված ասելու, որ պեղվող եկեղեցին պետք է հիմնադրված լինի Ե—Ձ դարերին:

8. Պեղումների արդյունքները միաժամանակ ցույց են տալիս, որ եկեղեցու շենքն ամբողջությամբ չի պահպանվել մինչև նրա վերջնական ավերվելը, այլ հետագայում ենթարկվել է վերակառուցման ու վերանորոգումների: Պեղվող եկեղեցու շենքը ժԲ—ԺԳ դարերին արդեն ավերված էր, նրա վերակառուցումը պետք է տեղի ունեցած լինի ժԳ դարից ոչ ուշ, որի մեջ, ինչպես և գերեզմանոցում գտնվող փոքրիկ եկեղեցու վրա գործադրվելիս են եղել ավերված հին եկեղեցու բեկորները:

Եկեղեցու հին շենքը պետք է ավերված լինի արարական արշավանքների ժամանակ, հավանաբար Թ դարում, իսկ նրա վերակառուցումը կատարված պետք է լինի Զաքարյանների տիրապետության շրջանում՝ ժԲ—ԺԳ դարերում: Հուշարձանի վերջնական ավերումը, ամենայն հավանականությամբ, պետք է տեղի ունեցած լինի մոնղոլական արշավանքների ժամանակ՝ ժԶ—ԺԸ դարերում:

9. Մի շարք փաստեր ցույց են տալիս, որ եկեղեցին վերակառուցելու ժամանակ ենթարկվել է որոշ փոփոխությունների: Անհատուկ նկատվում է, որ նա հարմարեցված է եղել վրացական եկեղեցու պահանջներին:

Պատմությամբ հայտնի են փաստեր, ճորհայկական որոշ եկեղեցիներ վեր են ածվել վրացական եկեղեցու: Կիրակոս Գանձակեցի պատմիչը, խոսելով Աթաբալայի, որ հնում կոչվելիս է եղել Պղնձահանք, վանքի կառուցման և ի վանե Աթաբալի մահվան մասին, տեղեկացնում է. «Վախճանեաց և Իսանէ, եղբայր Զաքարէի, և թաղեցաւ ի Պղնձահանքն ի դուռն եկեղեցւոյն՝ զոր շինեաց ինքն, առնալ ի Հայոց՝ վրացի վանս արարա՞ւ»:

Կողբի եկեղեցին ի սկզբան եղել է հայկական, ապա ավերվելուց հետո, վերակառուցվել է որպես վրացական եկեղեցի կամ վանք:

10. Պեղման վայրի ուսումնասիրությունը հաստատում է, որ այստեղ, րացի պեղվող եկեղեցուց, գոյություն են ունեցել նաև այլ կառուցվածքներ: Այստեղ գոյություն է ունեցել մի նշանավոր վանք:

Կատարված պեղումներից հայտնաբերված մեծաքանակ և րազմապիսի հնագիտական խիստ կարևոր իրերը վկայում են այդ հուշարձանի պատմա-հնագիտական մեծ արժեքի մասին:

1 Պատմության Հայոց, արարձայ Կիրակոսի վարդապետի Գանձակեցույց, Թիֆլիս, 1909 թ., էջ 210:





ԱՐԱ ՄԱՐԿՈՍ

ՊՐՈՎԱՆԻԱՅԻ ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

Քրքական տիրապետության շրջանին, Բուլղարիո զանազան քաղաքներուն մեջ կային ինչ հայկական գաղութներ, որոնք ապրած են դարերով և հետո անոնցմե ոմանք, քաղաքական և տնտեսական պատճառներով, անհետացած են, թողլով մշակութային հիշատակարաններ, գրավոր սակավաթիվ աղբյուրներ և ավանդություններ իրենց երկարամյա գոյության մասին:

Բուլղարիո մեջ այսպիսի քաղաքներն մին է Պրովադիան, ուր գոյություն ունեցած է ուշագործության արժանի հայ գաղութ մը իր եկեղեցիով:

Պրովադիան կգտնվի Հյուսիս-արևելյան Բուլղարիո մեջ, 50 կիլոմետր դեպի արևմուտք ծովեզերյա Վառնա քաղաքեն: Քաղաքին դիրքը շատ նկարագեղ է, Պրովադիա գետի հովտին մեջ, որուն երկու կողմերեն կրարձրանան սեպ ժայռեր: 1829-ին, երբ ռուսական բանակի թղթակից Վիկտոր Տեպլակովը այցելած է Պրովադիա, հիացած է քաղաքին ռոմանտիկական դիրքին վրա և գայն բաղդատած է Հյուսիսային Կովկասի Պյադիգորսք քաղաքին հետ:

Պրովադիան կառուցված է իբր ուշ հռոմեական-բյուզանդական ամրոց: Բուլղարական առաջին և երկրորդ թագավորություններու ժամանակ ալ եղած է զինվորական կարևոր բերդ մը Օվչ անվան տակ: Քաղաքը եղած է վաճառականական կեդրոն, իշխանական և արքեպիսկոպոսանիստ վայր: Թուրքե-

րը այս բերդը մեծ ջանքերով գրավեցին 1388-ին, այնտեղ ձգեցին փոքր պահակազորք մը և զայն կոչեցին Տաշհիսար:

Քաղաքի մասին ավելի լայն տեղեկություններ կան Քրքական տիրապետության շրջանին: Այստեղեն անցած են բազմաթիվ պաշտոնատարներ և ճանապարհորդներ, որոնք տեղեկություններ կուտան քաղաքի մասին: Լեհեր Օդվինովսկին (1557), Պարանովսկին (1559), Օսվինցեմը (1636), Վոյցեխ Մյասկովսկին (1640), Նույնպես և թուրք ճանապարհորդներ էվլիա Չելեպին (1651) և Հաջի Կալֆա (ժէ դարի կիսուն), կաթոլիկ միսիոնարներ Պետր Բոգդան Բակշիշ (1640), Ֆիլիպ Ստանիսլավովը (1659), ռուս զննապետ Լեն (1793) և ուրիշներ: Այս տեղեկություններն հայտնի կըլլա, թե Պրովադիան ժՁ, ժէ և ժԸ դարերուն մեծ քաղաք եղած է:

Իվան Ռադով րուլդար քահանան, Պրովադիա քաղաքի Քրքական տիրապետության վերջին տասնամյակի մասին իր հիշատակներուն մեջ կրսն. «Այժմյան րուլդարական Ս. Նիկոլա եկեղեցիեն 20 մետր դեպի հյուսիս կգտնվիր հին ավերակ եկեղեցի մը խորանին կամարը, որու մասին ժողովուրդը կրսնր, թե հայկական եկեղեցի է եղերձ»:

1 Иканов Ив. К. Радов, „Няколко думыи за старините в Провадия“, „Известие на Варненското археологическо лружество“, том V, 1912, стр. 34.


Այս հոգվածին մեջ, անտիպ տեղեկություններու հիման վրա, պիտի աշխատինք Պրովադիա քաղաքի հին հայկական գաղութի ճշգրիտ պատկերը տալ:

1. Պրովադիայի մասին մեղ ծանոթ մամնահին գրավոր տեղեկությունը Սիմեոն դպիր Լեհացիինն է, որ 1608-ին անցնելով այս քաղաքն, իր ճամբու նոթերուն մեջ կգրե. «Կային անդ յուղվ հայք տնով, ունէին և ժամատեղ մի տնակ, երկու երէց, մին հարեղայ կայր»²:

2. Սև ձովու եզերքին գտնվող միջնադարյան նեսերը (Մեսեմվրիա) քաղաքին Ս. Ստեփանոս եկեղեցիին պատին վրայ կան ժէ

3. Թաթար-Քաղաքը քաղաքի հայկական եկեղեցիին մեջ մինչև 1946 թվականը պահված էր ձեռագիր Ավետարան մը, որուն վերջին էջերուն վրա հիշատակարան մը կար գրված 1687-ին, հետևյալ բովանդակությամբ.

«Աւրհնութիւն Զօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ որ զըթացաւ առ արարածս և առաքեաց զՄիածին Որդին ի փրկութիւն մարդկան, զի զոր տեսին աչօք զանազան նշանս զոր կատարեաց Տէր և աստուածախօս մատենիս ս.յս, Աւետարանիս Քրիստոսի, ստանալով զայս իւր արդար վաստակօք և մեծագոյն յուսով փափաք եղև տէրունական րանին, որ



Նկար 1.—Նեսերը քաղաքի Ս. Ստեփանոս եկեղեցիին պատին վրայի փորագրությունը

և ժԸ դարերն մնացած բազմաթիվ փորագրություններ, որոնց մեջ նաև հայկական արձանագրություններու Այդ արձանագրություններն մեկուն մեջ կկարդանք հետևյալը.

«Ես Փռայվատիյի Խոհէ տէր... ծառայ Արք[աճամ] եկի զսր. Խաչին....ն ...չ[ուր] էկչապ[րի] օրն. Խաբ...էլ... է սեն ոյ օր ևտ զաւայտ պա րվկ. ՌժԺԹ-ումն սեկ-տեմբերի յամսան... Թ գրէցի օրն յուրաղ» (Նկար 1):

Այս արձանագրութենն կտեղեկանանք, որ 1663 սեպտեմբեր 9-ին, ուրբաթ օր, պրովադիացի Խոջա Արքաճամ այցելած է այս նեսերը քաղաքը:

Աւետարանի որ ունիցի դասակ ի Սիոն ընդունէաք ի վերին Երուսաղէմ: Արդ, այս..... առ զայս անջատել ըզյիշատակ Սուրբ Աւետարանս իւր հայալ արդիւնիցն իւրեանց հոգւոյն... և քոյրն իմ Թարխանկ և զմայրն իմ զԱնամն և զկողակիցն իմ զՍուրխաթն և զեղբայրն իմ զՅովսէփն և զեղբայրն իմ Յովանէսն և զեղբայրն իմ Ազարէկն և զքոյրն իմ Գուգատան և զԽանգատայն և զորդիքն իմ զԱնտոնն և զԱրքաճամ դուստրն իմ Գուգատայն հանդերձ ամենայն զարմօք և արեան մերձաւորօք, ամէն: Արդ, արար զայս Սուրբ Աւետարանս Խոճայ Բէկս Խնդիկ յիշատակ ի քաղաքն Փռայվատ, ի դուռն Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյն, ի ձեռն և վայելումն Տէր Անթոն քահանային, ի Հայոց Թվին ՌժԼԶ, ի հայրապետութեան Տեառն եղիազար կաթո-

² Սիմեոն դպիր Լեհացոյ «Ուղեգրութիւն», «Հանդես ամսօրյա», 1832, էջ 487:

դիկոսի ի Սրբոյ էջմիածնի: Ոչ ոք ունի իշխանութիւն զայս ծախելոյ և կամ գրաւական գնելոյ և կամ ի սուրբ եկեղեցւոյ հանելոյ...»³, Այս հիշատակարանն կտեղեկանանք, որ 1687-ին Պրովադիայի հայերը ունեին իրենց եկեղեցին Ս. Ստեփանոս անուանով, որուն նվիրված է եղեր այս ձեռագիր Ավետարանը հոջա Բեկ Խնդիկի կողմէ, իր և իրեններու հիշատակին: Եկեղեցւոյ քահանան Տ. Անտոնն

քանի մը հիշատակարաններ Պրովադիայի հայ գաղութի մասին: «Յայսմաւորք»-ը տպված է 1706-ին Կոստանդնուպոլսո մեջ: Հիշատակարանները գրված են վերջին երկու էջերուն վրա և և՛ լատինով, և՛ ռուսերէր կապականին տարբեր մարդոց: Հնագույն հիշատակարանը գրված է 1747-ին, իսկ նորագույնը 1775-ին: Հիշատակարաններն մին անթվակիր է: Հիշատակարանի թովանդակութենէն



Նկար 2.—Պրովադիայի Ս. Ստեփանոս եկեղեցիի 1768 թվականի վարագույրը

էր, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ Եղիազար (1682—1691):

4. 1769 թվականի ձեռագիր Ավետարանի մը հիշատակարանին մեջ կկարդանք, որ Ավետարանը գրված է ձեռամբ Սարմանուկ գրչին, Քուրշուլու խանի մեջ, Կոստանդնուպոլիս, և նվիրված Ս. Տեփանոս եկեղեցիին ի Պրովադիայէ⁴:

5. Շուման քաղաքի հայկական եկեղեցւոյ մեջ կգտնվի հին «Յայսմաւորք» մը, ուր կան

հայտնի է, որ «Յայսմաւորք»-ը կպատկանի Պրովադիայի հայոց եկեղեցիին: Ստորեւ կրեւրենք այդ հիշատակարանները:

1747-ի հիշատակարանը. «Ես, տիրացու Եղիայ, որ եկի Փրոսպատի ի դուռն Սուրբ Ըստեփաննոսին թվին Ռեղզ և յունիսի զամսոյ Բ-ին ըստ այնմ Սուրբ Սաղիմայ գործոյն համար: Վասն այն գրեցի զայս գիրս զի դիպօղ ժամոյս յիշեսցես մեզ ի մէջ տաճարիս և դուք յիշեալ յիշիք առաջի Աստուծոյ»: Սույն հիշատակարանն հայտնի է, որ 2 հունիս 1747-ին Պրովադիա ժամանած է մի ոմն տիրացու Եղիա Ս. Երուսաղեմէն, կարգ մը եկեղեցական գործերու կարգադրության համար:

³ Ն. Գասալյան, «Պրովադիայի հայոց եկեղեցիին», «Վիթր—Արարատ» տարեգիրք, Սոֆիա, 1935, էջ 312—313:

⁴ Ն. Գասալյան, «Բուլղարահայ անհետացած գաղութներու մասին», «Երեւան» թերթ, թիվ 991, Սոֆիա, 1959:

1752-ի հիշատակարանը **Թվին ՌԲՃԱ**-ին հովտեմբերի Դ-ին որ **ես**, մահտեսի Սարգսի որդի մեղաւոր անարժան **Տէր Յակոբ**ս գրեցի այն օրն օրհնունեցայն:

Կնշանակէ, որ 4 հովտեմբեր 1752-ին քահանա ձեռնադրված է Հաջի Սարգսի որդի Հակոբը:

1771-ի հիշատակարանը. **Թվին ՌՄԻ**, յամսեանն յուլիսի ԻՂ-ին, **ես**, Կոստանդի որդի Մովսեսըս կամ Ամիրխանի որդի Մաթոսըս սարկաւագ եղանք: **Տէր** իմ Յիսուա, բարեխօսութեամբ Սրբոյն Ստեփանոսի, մեղի շնորհք և իմաստութիւն տացէ և բարի վայելում տացէ, ամէն:

1772-ի հիշատակարանը. **Թվին ՌՄԻԱ**, Աստուածածնի մեռելոց օրն, որ **ես**, **Տէր** Օվանէսի որդի Պողոսըս սարկաւագ կարգունեցայ: Սուրբ Ստեփաննոս իւր շնորհք և իմաստութիւն տացէ և զՍուրբ Աստուածածնին իւր բարեխօս եղիցի, ամէն:

1772-ի հիշատակարանը. **Թվին ՌՄԻԱ**, յուլիսի... Մ... ի որդի անարժան... քս:

1775-ի հիշատակարանը. **Թվին ՌՄԻԱ**, որ **ես**, լուսահոյգի **Տէր** Օվանէսի որդի Պողոսըս Սուրբ Ըստեփաննոսին կարգն փափաքով առի: Օվ որ կարդայ, հայրք ն եղբայրք, ձեզ աղաչեմ, ասէք Յիսուս Քրիստոս որպէս ետուր առաքելոցն շնորհք, տուր և սակաւ:



Նկար 4.—Պրովադիայի հայոց Ա. Ստեփանոս եկեղեցին գտնված 1708 թվակիր վարադրա տապանաքարը



Նկար 3.—Պրովադիայի Ա. Ստեփանոս եկեղեցի 1807 թվականի վարագույրը

արժան ձառայի ըո Պողոսին, ամէն: **ՌՄԻԴ** յուլիսի 14»:

Սույն հիշատակարանն հայտնի է, որ 1775-ին Տ. Օվանէսի որդի Պողոսը քահանա ձեռնադրված է Պրովադիայի Ա. Ստեփանոս եկեղեցիին վրա: Պողոս նույն անձն է, որ հիշված է շորորդի հիշատակարանին մեջ, որպէս սարկավագ նույն եկեղեցիին:

Անթվակիր հիշատակարան. շնոյեմբերս ԻԳ-ին Գրիգորի սքանչելագործին...»:

Հիշատակարանը թերի է:

Ճ. Շումենի մեջ կգտնվին նույն եկեղեցվո խորանի երկու վարագույրներ, որոնք ժամանակին կատականեին Պրովադիայի հայկական եկեղեցիին: Անոնց վրա կան շատ լավ պահված ուրձանագրութիւններ:

1768-ի վարագույրին վրա. «Յիշատակ է վարագույրս մահտեսի Շահրնի որդի մահտեսի Պետրոսին և Տիւանի որդի Հայրապետին որդի մահտեսի Մանուկին: Ետ ապել ի դուռն Սուրբ Ըստեփաննոսին, ի քաղաքն Փրբավատին, թվին ՌՄԺԷ» (նկար 2):

1807-ի վարագույրին վրա. «Յիշատակ է վարագույրս հօլպէցի հանդուցեալ Աւետիքին



Նկար 5.—Պղնձե պնակ 1718 թվականին

և որդոցն Կարապետին և Ըստեփանին ի դուռն Բռավատու Սուրբ Ըստեփանոսայ, թվին ՌՄԾԶ-ին» (նկար 3):

7. Պրովադիայի հայոց եկեղեցին պեղված ժամանակ, խորանի առջև գտնվեցավ արծա- նագրյալ մարմարյա տապանաքար մը 1,8 մ. երկայնքով, 0,6 մ. լայնքով և 0,3 մ. հաստու- թյամբ: Տապանաքարը ներկայիս կգտնվի Պրովադիայի քաղաքական թանգարանին մեջ 328 համարի տակ (նկար 4):

Տապանաքարը ունի ուղղանկյուն ձև, վերի ծայրը կա հայկական ոճով խորաքանդակ մը, հին Հայաստանի մեջ գտնված քանդակներուն նման: Վարի ծայրը եզերված է շրջանակաձև, բարձր փորաքանդակով մը, որուն վերի ծայրը նմանցված է բարձրաքանդակ արա- բեսկի: Կան երկու բարձրաքանդակ նոճիներ, որոնց միջև ծաղկաման մը՝ սմբուլներով և կակաչներով: Անոնց վերևը կա 12 տողանոց հետևյալ փորաքանդակ արձանագրությունը. «Ես Սենր որդի Պողոս գրեցի, Այս է տապան հանգստեան Դափանցի որ գուլի գեղը Ագա- րագցի Ովանէսի որդի խուզազը որ փոխեցաւ ի կեանս: Թ ՌՃՄՆ»: Արձանագրության մեջ կան կապեր: Գրեքու մեծությունն է 3—8 սմ.: Տապանաքարը կպատկանի Հով- հանեսի որդի Դուկասին, ծնած Ագարակ գյուղ (Դափանի շրջան), գաղթած Պրովադիա և այնտեղ մեռած ու թաղված:

8. Վառնայի հնագիտական թանգարանին մեջ կգտնվին երկու պղնձյա պնակներ հայ-

կական արձանագրությամբ, 1718-ին, հա- մարակալված E III 122, 123 (նկար 5): Պնակները գտնված են Պրովադիայի մոտա- կա Տոպրինա գյուղին (Ջիզգարջույ): Շինված են պղնձի հաստ թերթի և ճախարակ մեքե- նայով աշխատված զարդաքանդակներ ունին և երկուքն ալ կկրեն միևնույն արձանագրու- թյունը՝ «էքնայի որդի Սիմահն, ՌՃԿէ»: Ու- բոն, այդ պնակները պատրաստված են Սի- մա անունով հայու մը համար:

Վերև հիշված գրավոր և առարկայական փաստերը կհաստատեն, որ Ժէ—ԺԹ դարե- րուն Պրովադիայի մեջ գտնված է կարևոր հայկական գաղութ մը իր եկեղեցիով, 1608 թվականին, Հին Հայկական եկեղեցին կոչ- ված է Ս. Ստեփանոս:

Շատ հավանաբար Պրովադիայի հայկա- կան եկեղեցին քանդված է 1828—1829-ի ռուս-թրքական պատերազմին: Այն ժամա- նակ քաղաքը այնքան վնասված էր թուրքե- րու ուժեղ զինվածության, որ ավերակի վերած- ված էր:

Ժամանակին բուլղար հոգևորականությունը դիմեր է Պոյոտ հայոց Պատրիարքարան խնդրելով, որ հայոց եկեղեցի տեղը հանձ- նելի բուլղարներուն, որովհետև տեղվույն հայերը ցրված են, իսկ եթե անոնք վերադառ- նան կամ բազմանան, կխոստանան անոնց համար հարմար վայր տրամադրել իրր աղո- թատելի: Այս պայմանով Պատրիարքարանը կուտա իր հավանությունը:

Ըստ մեր պրպտումներու արդյունքներուն, Պրովադիայի հայերը 70—80 տնվորե ավելի չեն եղած, շուրջ 350—400 հոգի: Անոնք զբա- ղած են վաճառականությամբ և արհեստե- րով: Նյութական վիճակին եղած է լավ: Մա- նոթ վաճառական մը եղած է Սարգիս Չոր- պաճին իԹ դարուն:

Պրովադիայի հայ գաղութը կազմված էր մասամբ Ղրիմի Կաֆա քաղաքեն գաղթած հայերե և մասամբ ալ Փոքր Ասիայեն գաղ- թած հայերե, որոնք, փախչելով Զալալիներու խժոժություններեն, եկած էին այստեղ հաս- տատվելու:

Այս դեպքերու մասին թանկազին տեղե- կություններ կուտա Գրիգոր Դարանաղեցին. «Ես ի սաստիկ սովոյ լեղկարութեամբ զորա- նալոյն ցրուեցաւ ամենայն բազմութիւն ժո- ղովորհանն հայոց և տաճկաց, որ անդ հաւա- քեալ էին գալով յայնկոյս ծովոյն, որ ռթայա- խացիք կոչէին իւրեանքն կաֆացիք: Ես ի լի-

Ի Н. Епанчин, „Очерк похода 1829 г. в Европейской Турции“, т. II, С. Петербург, 1906 г., стр. 212—215.

Ե Դեկտ. 2. Մանուկյան, «Պրովադիայի հայոց եկե- ղեցին», «Բալկանյան մամուլ» շաբաթաթերթ, № 192, Սֆիրա, 1934:

նե, սովին ոմանք յԸստամբոլ եկին և ոմանք ի Թրակիա, որ Ուոռմէլ ասի, ի Վառնայու անցանելով մինչև ի Պէլլորդատ, մինչև ի Պուդ-տանսց աշխարհն և ի լեհացն»⁷։

Ուրեմն, պետք է ընդունիլ, որ Սիմեոն դպիր լեհացիի կողմն 1608-ին հիշված Պրովադիայի հայ դադուքը կազմված էր 1605-ին Կաֆայեն դադթած հայերն, որոնք Վառնայեն անցած ու ցրված են մինչև Բելգրադ, Այս-

ճամբուն վրա անոնք չէին կրնար չգաղթել Պրովադիա, որ այն ժամանակ առևտրական բարգավաճ քաղաք էր։ Գադուքը բազմացած է հետագային Փոքր Ասիայեն դադթող հայերով և, մասնավորապես ժէ դարու առաջին կիսուն Արևելյան Հայաստանի մեջ Թուրքիո և Պարսկաստանի միջև տեղի ունեցած շարունակական պատերազմներու ընթացքին, Պրովադիա հայեր եկած են նաև ժՂ դարուն, հավանաբար առավելապես Պարսկական Հայաստանեն։

⁷ «Ժամանակագրութիւն Գրիգոր վարդապետի Կա-մախեցոյ կամ Խառնաղբոյ», նրուաղեմ, 1913, էջ 95—96։

